

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒԲԵՆԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գիտական ղեկավար՝

տ. գ. դ., պրոֆեսոր

ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
ԳԼՈՒԽ 1. Ֆինանսական Հսկողութեան Տեսական Եվ Մեթոդաբանական Հիմքերը	8
1.1 Ֆինանսական Հսկողութեան Էությունը Եվ Նպասակը	8
1.2. Ֆինանսական Հսկողութեան Կառավարողական Եվ Իրականացման Առանձնահատկությունները Արդարացի Բանակերով	17
1.3. Բանկային Ֆինանսական Հսկողութեան Միջառգային Փորձը.....	25
ԳԼՈՒԽ 2. Ֆինանսական Հսկողութեան Հիմնահնդիւրները ՀՀ Բանկային Համակարգով	34
2.1. ՄԱՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	34
2.2. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	40
2.3. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	58
ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ Ֆինանսական Հսկողութեան Արդյունավետությունը Բարձրացման Ուղիները.....	67
3.1. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	69
3.2. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ.....	74
3.3 ԻՐԱՅՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ	87
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	98
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	105
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	111

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: ՀՀ ֆինանսական համակարգի ձևավորման և զարգացման գործում շատ կարևոր է կայուն բանկային համակարգի և արդյունավետ գործող առևտրային բանկերի առկայությունը: Բանկային համակարգի կայունությունն ու արդյունավետ գործունեության ծավալումն ուղղակիորեն կախված են բանկերում ներդրված ֆինանսական հսկողության համակարգերի և մեխանիզմների արդյունավետությունից:

2007-2009 թվականների ֆինանսատնտեսական ճգնաժամը բացահայտեց բանկային համակարգում առաջացած մի շարք հիմնախնդիրներ: ՀՀ բանկային համակարգում հարաբերությունների կարգավորման համար մինչ այդ ձևավորված մոտեցումներն ու գործիքները բավարար չեղան կանխարգելելու ֆինանսատնտեսական ճգնաժամը, որն իր հերթին պատճառ դարձավ ֆինանսական հսկողության իրականացման և ռիսկերի կառավարման նոր ստանդարտների և մեխանիզմների մշակման համար: Բանկերի ներքին ֆինանսական հսկողության համակարգում առկա բացթողումները ստիպեցին առևտրային բանկերում նորովի անդրադառնալ «հսկողություն» տնտեսական կատեգորիային՝ շեշտադրում կատարելով ֆինանսական հսկողության հիմնախնդիրների և դրա իրականացման արդյունավետ ուղիների բացահայտման վրա: Նշվածը արդիական է և՛ զարգացած, և՛ զարգացող, և՛ անցումային փուլում գտնվող երկրների համար:

Ակնհայտ է, որ բանկերին բնորոշ ռիսկերի արդյունավետ կառավարման գործում էական է դրանցում ներդրված հսկողության համակարգերի դերը: Այն փաստը, որ ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների շուրջ 90 տոկոսը բաժին է ընկնում առևտրային բանկերին, վկայում է ՀՀ ֆինանսական համակարգում բանկերի առանցքային դերակատարության մասին: Այդ առումով բանկերում անարդյունավետ կամ թերի գործող ֆինանսական հսկողության համակարգերը ռիսկային են ողջ ֆինանսական համակարգի համար, որն էլ իր հերթին մեծացնում է հանրապետության տնտեսության խոցելիությունը: Ուստի խիստ կարևոր է բանկային համակարգում արդյունավետ ֆինանսական հսկողության համակարգի ձևավորումը, որը ռիսկերի

բացահայտման և արդյունավետ կառավարման, ինչպես նաև դրանց հետագա առաջացման կանխարգելման կարևորագույն պայման է:

Աշխատանքում ուսումնասիրված են բանկային համակարգում ֆինանսական հսկողության համակարգի ձևավորման և դրա գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, ինչով էլ պայմանավորված են ատենախոսության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել ՀՀ բանկային համակարգում ֆինանսական հսկողության իրականացման հիմնախնդիրները և մշակել դրանց լուծման, ինչպես նաև ֆինանսական հսկողության արդյունավետության բարձրացման մեխանիզմներ և ուղիներ: Այս նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ՀՀ բանկային համակարգում իրականացվող ֆինանսական հսկողության առանձնահատկությունները և այդ գործընթացի կարգավորման օրենսդրական հիմքերը:

- Հետազոտել բանկային համակարգում ֆինանսական հսկողության իրականացման և կարգավորման միջազգային փորձը:

- Հիմնավորել բանկային համակարգում ռիսկերի կառավարման գործընթացում արդյունավետ հսկողության իրականացման կարևորությունը:

- Վերլուծել ՀՀ բանկային համակարգում ֆինանսական հսկողության ներկա վիճակը և հնարավոր զարգացումները:

- Բացահայտել առևտրային բանկերում ֆինանսական հսկողության կազմակերպման և իրականացման խնդիրները և մշակել մոտեցումներ ու մեխանիզմներ դրանց լուծման համար:

- Գնահատել առևտրային բանկերում հսկողության իրականացման գործընթացում ՀՀ կենտրոնական բանկի դերը և առաջարկել դրա բարձրացման ուղիներ:

- Հիմնավորել վերահսկողության նոր մոտեցումների անհրաժեշտությունը և մշակել բանկային համակարգում արդյունավետ հսկողական համակարգերի ձևավորման ուղղությունները:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը ՀՀ բանկային համակարգը և առևտրային բանկերն են, իսկ առարկան՝ բանկային համակարգերում ֆինանսական հսկողության կազմակերպման և իրականացման գործընթացի կատարելագործման տեսական, մեթոդական և օրենսդրաիրավական հիմնադրույթների, այդ ոլորտում առկա միջազգային փորձի, ազգային տնտեսության առանձնահատկությունների, ինչպես նաև ֆինանսական հսկողության համակարգում առկա հիմնախնդիրների ամբողջությունը:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքը և տեղեկատվության ապահովումը: Ատենախոսության համար որպես տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից հրատարակված հետազոտական աշխատությունները և վերլուծությունները, ՀՀ և արտասահմանյան հետազոտողների գիտական աշխատանքները և զեկուցումները, ինչպես նաև բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտերը:

Աշխատանքի համար որպես տեղեկատվական աղբյուր են ծառայել ՀՀ և այլ երկրների կենտրոնական բանկերի, Արժույթի միջազգային հիմնադրամի, համաշխարհային բանկի և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հրապարակված վիճակագրական և վերլուծական, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունները:

Աշխատանքի ընթացքում կիրառվել են մաթեմատիկական և վիճակագրական, համեմատական և համակարգային վերլուծության, ինչպես նաև ուսումնասիրվող երևույթների և գործընթացների՝ գծապատկերների միջոցով մեկնաբանման մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը:

- Մշակվել է արտարժույթային ճգնաժամերի նախնական զգուշացման տեղեկատվական համակարգ, որն առաջարկված իրավիճակային մակրո սթրես թեստավորման մոդելի ներդրմամբ թույլ կտա կանխատեսել արտարժույթային

ճգնաժամերը՝ նվազեցնելով բանկի՝ դրանց արդյունքում հավանական ֆինանսական կորուստներ կրելու ռիսկերը ու գնահատել արտարժույթային տատանումների ուղղակի և անուղղակի ազդեցությունները բանկի գործունեության վրա:

- Հաշվի առնելով առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման արդյունավետության անկումը և շուկայական փոխարժեքների տատանումներին բանկերի դիմակայության ցածր աստիճանը՝ առաջարկվել է օրենսդրորեն սահմանել կապիտալի համարժեքության պահպանման բուֆեր, բանկի՝ կապիտալի բուֆերի մակարդակի ապահովման ողջամիտ ժամանակահատված, ինչպես նաև եկամուտների բաշխումը զսպող և կարգավորող դրույթներ՝ ՀՀ բանկային համակարգում կապիտալի համարժեքության մակարդակի շարունակական նվազման հիմնախնդրի լուծման համար:

- Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում ընդհանուր պարտավորությունների կենտրոնացվածության աստիճանից կախված իրացվելիության ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվել է կարգավորմանն ուղղված տնտեսական նորմատիվները փոխարինել Բազելյան համաձայնագրով սահմանված իրացվելիության կարգավորման ստանդարտով, ինչը թույլ կտա ռիսկերի զսպման արդյունավետ մեխանիզմների ներդրմամբ բանկերում ապահովել իրավելիության անհրաժեշտ մակարդակ:

Հետազոտության արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:

Հետազոտության ընթացքում իրականացված վերլուծությունները, ուսումնասիրությունները և գրանցված փաստացի արդյունքներն ու եզրահանգումները կարող են օգտագործվել ՀՀ առևտրային բանկերում՝ ֆինանսական հսկողության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով: Նպատակահարմար կլինի դրանք կիրառել բանկերում՝ հսկողական մեխանիզմների կատարելագործման և արդիականացման գործընթացներում:

Աշխատանքի գիտական եզրահանգումները կարող են կիրառվել ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության վարչության աշխատակիցների կողմից

առևտրային բանկերում ֆինանսական հսկողության համակարգերի համար նոր և առավել արդյունավետ ստանդարտների և մեխանիզմների մշակման ընթացքում:

Գիտական աշխատանքը որպես տեսամեթոդաբանական նյութ կարող է կիրառվել ՀՀ բուհերում՝ բանկային համակարգին վերաբերող առարկաների դասավանդման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակվել են հեղինակի վեց գիտական հոդվածներում, քննարկվել Երևանի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոնի նիստերում և ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական հսկողության բաժանմունքների մասնագետների հետ թեմատիկ քննարկումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության կառուցվածքը և ծավալը պայմանավորված են առաջադրված նպատակներով, խնդիրներով և ստացված արդյունքներով: Ատենախոսության ընդհանուր ծավալը 119 համակարգչային էջ է: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը պարունակում է 37 գծապատկեր, 21 աղյուսակ:

ԳԼՈՒԽ 1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

ՀՀ տնտեսական առաջընթացի և աճի կայուն տեմպերի ապահովման գործում չափազանց կարևոր է բանկային համակարգի դերը: Այն ֆինանսական համակարգի առանցքային օղակն է և իրականացնում է ֆինանսական շուկայի թերևս ամենաբարդ և պատասխանատու գործառույթներից մեկը՝ ավանդների ներգրավման և վարկերի տրամադրման ծառայությունը: Այն բանկն առանձնացնում է ֆինանսական համակարգի այլ մասնակիցներից՝ բանկային համակարգը դարձնելով ֆինանսական համակարգի խիստ կարգավորվող ոլորտներից մեկը:

2008-2009 թվականների համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը սկիզբ առավ բանկային համակարգից, որը նշանակում է՝ բանկային համակարգում իրականացվող ֆինանսական հսկողության գործառույթները բավարար չէին՝ կանխելու ճգնաժամի առաջացումը, և չէին իրագործվում արդյունավետ կերպով: Ճգնաժամի տարիներին բանկերը բախվեցին իրացվելիության և ակտիվների արժեզրկման լուրջ հիմնախնդիրների¹, որոնք շատ արագ ներթափանցեցին տնտեսության իրական հատված՝ հանգեցնելով վարկավորման ծավալների և իրացվելիության մակարդակի նվազման և, ի վերջո, երկրում տնտեսական անկման: Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսական աճի տեմպի նվազեցում արձանագրվեց, և 2009 թվականին երկրում գրանցվեց տնտեսական անկում 14,2 տոկոսային կետով:

Սա ցույց է տալիս, որ շատ կարևոր են բանկային համակարգի ֆինանսական հսկողության մեխանիզմներում առկա խնդիրների բացահայտումը, դրանց վերացումը և շարունակական աշխատանքների իրականացումը՝ ուղղված ֆինանսական հսկողության համակարգի կատարելագործմանը, իրականացման արդյունավետության բարձրացմանը: Վերահսկող մարմիններն ու բանկերի համապատասխան

¹ St'u Acharya, V. A. and Schaefer, S. Liquidity Risk and Correlation Risk: Implications for Risk Management. London Business School. London. 2006. Էջ 1-3:

ծառայությունները առանձնակի կարևորություն պետք է տան հսկողության հիմնահարցերին՝ արագորեն արձագանքելով բանկերում և ընդհանրապես ֆինանսական համակարգում տեղի ունեցող փոփոխություններին: Անհրաժեշտ է ՀՀ բանկային համակարգում շարունակաբար զարգացնել և մեծացնել ֆինանսական հսկողության և կարգավորման համակարգի արդյունավետությունը:

Հաշվի առնելով բանկային համակարգում տեղի ունեցած վերջին զարգացումները՝ ՀՀ կենտրոնական բանկը շարունակական աշխատանքներ է իրականացնում՝ ուղղված ֆինանսական համակարգի և, մասնավորապես, բանկային վերահսկողական համակարգի կատարելագործմանը: Այդ աշխատանքների արդյունքներն ամրագրվում են հանրապետության բանկային համակարգը կարգավորող օրենսդրաիրավական դաշտում:

Ֆինանսական հսկողությունը համարվում է ցանկացած ընկերության անբաժանելի մասը և նպատակ է հետապնդում գնահատելու տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական վիճակը և այլ սուբյեկտների ֆինանսական վիճակի հետ դրա համեմատական վերլուծության իրականացումը: Այն ուսումնասիրում և բացահայտում է ռիսկերի առաջացման հնարավորությունը և քայլեր ձեռնարկում՝ ուղղված դրանց նվազեցմանը և կանխարգելմանը:

Հսկողություն հասկացությունը՝ որպես տնտեսական կատեգորիա, գոյություն ունի անտիկ ժամանակներից: Դեռևս Հին Եգիպտոսում գործում էր ժամանակակից վերահսկողության իրականացման գործառույթն իրականացնող վարչարարական համակարգ. այն պատասխանատու էր հարկահավաքման գործողությունների վերահսկման համար:

Հսկողությունը կազմակերպության կառավարման անբաժանելի մասն է. այն չպետք է լինի ինքնանպատակ և պետք է ապահովի կազմակերպության գործունեության համապատասխանությունը օրենսդրաիրավական դաշտին: Հսկողության գործառույթի իրականացմամբ տնտեսվարող սուբյեկտը պետք է ընդունի հսկողության արդյունքում բացահայտված թերացումների վերացմանն ուղղված

որոշումներ, ինչպես նաև ձեռնարկի հետագա հնարավոր թերացումների բացառմանն ուղղված միջոցառումներ²:

Ըստ հսկողության մեկ այլ սահմանման³ կառավարման մարմնի կողմից իրականացվող հսկողությունը համակարգային գործընթաց է, որի ընթացքում ընկերության գործունեության ցուցանիշները համեմատվում են նախապես պլանավորվածների և գործող ստանդարտների հետ: Այն նպատակ է հետապնդում բացահայտելու, թե արդյոք ընկերության ցուցանիշները համապատասխանում են նախատեսված ստանդարտներին և համահունչ են պլանավորմանը: Շեղումների հայտնաբերման պարագայում իրականացվում են դրանց վերացմանն ուղղված քայլեր: Կառավարման մարմինը հսկողության համակարգերի միջոցով հսկողություն է իրականացնում արտադրական և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նկատմամբ:

Հսկողության գործառույթի նպատակը ընկերության գործունեության արդյունքների փաստացի գնահատումն է՝ համոզվելու համար, որ ընկերությունը չի շեղվում նախապես իր առջև դրված նպատակների իրականացումից⁴:

Այսպիսով, ֆինանսական հսկողությունը համալիր գործառույթների ամբողջություն է՝ միտված հետազոտելու և գնահատելու տնտեսվարող սուբյեկտի գործունեության արդյունքների համապատասխանությունը տրված պահանջներին, ստանդարտներին, նորմատիվներին: Այն հնարավորություն է տալիս բացահայտելու շեղումներն ու թերացումները, դրանց առաջացման պատճառները, ինչպես նաև իրականացնելու վերջիններիս վերացմանն ուղղված գործողություններ: Այն շարունակական գործընթաց է, որը պահանջում է ամենօրյա հսկողություն ընկերության կողմից իրականացվող գործողությունների նկատմամբ:

Հսկողության իրականացման նպատակները կարող են լինել տարբեր՝ կախված օբյեկտի գործունեության ոլորտից, կարգավորող իրավական դաշտի

² St'u The Lima Declaration of Guidelines on Auditing Precepts. International Organization of Supreme Audit Institutions (INTOSAI).Vienna. 1998, էջ 5, http://www.issai.org/media/12901/issai_1_e.pdf:

³ St'u Mockler, Robert J. Readings in Management Control.New York: Appleton-Century-Crofts. 1970, էջ 14–17:

⁴ St'u Koontz, H. Principles of Management: An Analysis of Managerial Functions. McGraw-Hill. New York. 1959:

առանձնահատկություններից: Սակայն կան ընդհանրական նպատակներ, որոնք վերագրելի են տնտեսվարող յուրաքանչյուր սուբյեկտի: Դրանք խմբավորվում են ըստ՝

Գործառնական նպատակների՝

- ակտիվների կառավարման արդյունավետություն⁵.
- շահութաբերության կանխատեսված ցուցանիշների առկայություն.
- հնարավոր ռիսկերից և ֆինանսական կորուստներից առավելագույն

պաշտպանվածություն:

Տեղեկատվության նկատմամբ պահանջների, այն է՝

- ամբողջականություն,
- արժանահավատություն,
- ժամանակին տրամադրելու անհրաժեշտություն:

Այս պահանջներն անհրաժեշտ են, որ ընկերության կառավարման մարմինները հնարավորություն ունենան ժամանակին ընդունելու արժանահավատ և համալիր տեղեկատվության վրա կառուցված որոշումներ:

Ընկերության նպատակները պետք է համապատասխանեն՝

- օրենսդրական դաշտի պահանջներին,
- վերահսկող մարմնի կողմից սահմանված իրավանորմատիվային

ակտերին,

- մայր կազմակերպության կողմից սահմանված ներքին

ընթացակարգերին:

Երրորդ խմբի նպատակների ապահովումը ընկերությանը թույլ է տալիս իրականացնել անվան, համբավի պաշտպանություն: Ընկերության *անունը, համբավը* բանկերի համար չափազանց կարևոր են:

Մասնագիտական գրականության մեջ տրվում են ֆինանսական հսկողության բազմաթիվ սահմանումներ, որոնք պայմանավորված են ընկերության ծավալած գործունեությունը կարգավորող իրավական դաշտի և տնտեսության ոլորտի առանձնահատկություններով:

⁵ Եղոյան Կ., Սահակյան Հ., Առևտրային բանկի ակտիվների և պասսիվների կառավարումը, «Էկոնոմիկա» ամսագիր, հ. 1-3, Երևան, 1998, էջ 39-40:

Ստորև բերված սահմանումներն ամբողջական պատկերացում են տալիս *ֆինանսական հսկողություն* տնտեսական կատեգորիայի վերաբերյալ, որը համարվում է հսկողության մասնավոր տարատեսակ:

Շատ հաճախ ֆինանսական հսկողությունը նույնացնում են *ֆինանսական վերահսկողություն* կատեգորիայի հետ: Ֆինանսական վերահսկողությունը ՀՀ-ում իրականացվում է ՀՀ ԿԲ կողմից, որի նպատակն է անկախ և արդյունավետ վերահսկողության գործառույթի իրականացումը, ֆինանսական համակարգի կայունության ապահովումը և ֆինանսական ծառայություններից օգտվողների շահերի պաշտպանությունը⁶:

Ֆինանսական վերահսկողության գործառույթը երկրների մեծ մասում իրականացվում է կենտրոնական (ազգային) բանկերի կողմից: Ֆինանսական վերահսկողություն են իրականացնում, օրինակ, Ռուսաստանի կենտրոնական բանկը, Չեխիայի ազգային բանկը, Իսպանիայի բանկը: Որոշ երկրներում այդ գործառույթն իրականացվում է ֆինանսների նախարարության կամ այդ նպատակի համար ձևավորված առանձին մարմինների կողմից, ինչպես, օրինակ, Շվեյցարիայում՝ Շվեյցարիայի ֆեդերալ բանկային հանձնաժողովի կողմից, Գերմանիայում՝ Գերմանիայի ֆինանսական վերահսկողության մարմնի կողմից⁷:

Ֆինանսական հսկողությունը տնտեսվարող սուբյեկտի ներսում ֆինանսական հսկողության ծառայության կողմից իրականացվող գործառույթ է:

Եվրոպայի ներդրումային բանկի սահմանմամբ ֆինանսական հսկողությունը իրականացվում է բանկի բոլոր այն գործառույթների նկատմամբ, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ բանկի ֆինանսական վիճակի, բանկային ռիսկերի (այդ թվում՝ վարկային և շուկայական), բանկի արդյունավետությունը գնահատող գործակիցների, բանկի տարեկան պլանավորման և փաստացի ցուցանիշների վրա⁸:

⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության օրենքը ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին», 8 դեկտեմբերի 2005 թ:

⁷ Տե՛ս Bank Regulation and Supervision around the World. A Crisis Update. World Bank. December 2012, http://siteresources.worldbank.org/INTRES/Resources/4692321107449512766/Caprio_2003_12_supervision.xls:

⁸ Տե՛ս http://www.eib.org/about/structure/control_and_evaluation/control_financial-control.htm:

Մեկ այլ սահմանմամբ՝ ֆինանսական հսկողությունը գործընթաց է, որի ընթացքում ներգրավված աշխատակիցների ու ներդրված արդյունավետ գործընթացների շնորհիվ հնարավորություն է ստեղծվում շահույթ ձևավորելու⁹:

Այսպիսով, ֆինանսական հսկողությունը համակարգ է, որը տնտեսվարող սուբյեկտին թույլ է տալիս իրեն ապահովագրել հնարավոր ֆինանսական կորուստներից:

Ուսումնասիրելով ֆինանսական հսկողությանը նվիրված աշխատությունները, տնտեսագետների, ֆինանսիստների տեսակետները այդ հարցի շուրջ՝ եզրահանգում ենք, որ ֆինանսական հսկողությունը անհրաժեշտ է դիտարկել որպես գործողությունների ամբողջություն, որն ուղղված է ընկերության 2 խումբ նպատակների իրականացման ապահովմանը:

Առաջինը բանկի իրականացրած գործունեության արդյունքների քանակական և որակական գնահատականների ապահովումն է՝ բանկային ակտիվների օգտագործման արդյունավետության, ծախսերի նպատակահարմարության համար:

Երկրորդը բանկային գործունեության համապատասխանության ապահովումն է արտաքին իրավաօրենսդրական դաշտին, բանկերում ներդրված ներքին կանոնակարգերին և ընթացակարգերին: Այն կառավարման մարմինների համար գործիք է, որի միջոցով բանկը կանխատեսում է և հնարավորինս նվազեցնում բանկի խոցելիությունը ապագա հնարավոր ֆինանսական կորուստներից, բացահայտում է խոչընդոտները, որոնք արգելում են բանկին գտնվել լաբավորմամբ նախատեսված ֆինանսատնտեսական վիճակում և այլն:

Ֆինանսական հսկողությունը նաև գործիք է, որը կառավարման մարմիններին ժամանակին ապահովում է համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ ամբողջական, արժանահավատ տեղեկատվությամբ:

Կառավարման գործընթացում տարբեր բացթողումների, թերացումների, կառավարման մարմինների և աշխատակազմի կողմից հնարավոր չարաշահումների, ֆինանսական խարդախությունների հնարավորության բացառման, ինչպես նաև արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիների բացահայտման նպատակով

⁹ St' u <https://archive.org/details/towardsdefinitio00vanb:>

ընկերությունների կառավարման մարմինները և տնօրենների խորհուրդները ընկերություններում հաշվապահությունից և ներքին աուդիտից անկախ ստեղծել են ևս մեկ մարմին՝ ներքին հսկողության ծառայությունը: Այժմ ավելի, քան երբևէ, ընկերությունների ղեկավար անձնակազմերը մեծ ուշադրություն են դարձնում հսկողությանը, քանի որ դրա խափանումը կամ անարդյունավետությունը կարող է ընկերությանը պատճառել ֆինանսական մեծ կորուստներ¹⁰:

Հսկողության խոցելի կողմերից է ընկերության համբավը: Համբավը ռազմաստրատեգիկ ռեսուրս է, որը կարող է ընկերության համար արժեք ստեղծել և ավելացնել: Լավ համբավը նպաստում է վաճառքների ծավալների մեծացմանը, կարող է բարելավել ընկերության ֆինանսավորման համար առաջարկվող պայմանները և այլն: Հայտնի է, թե որքան կայուն համբավ ունեն «Mercedes-Benz», «BMW», «Ford» ընկերություններն ավտոարդյունաբերության ոլորտում, «Samsung», «Sony» ընկերությունները՝ կենցաղային տեխնիկայի արտադրության ոլորտում, ինչպես նաև աշխարհի խոշորագույն բանկերը՝ «Industrial & Commercial Bank of China (ICBC)»-ն Ասիայում, «HSBC»-ին Եվրոպայում, «JPMorgan Chase & Co»-ն Հյուսիսային Ամերիկայում և այլն¹¹: Անհերքելի է թվարկված խոշորագույն ընկերությունների համար իրենց անբիծ համբավի կարևորությունը: Ակնհայտ է, որ այն մեկ տասնամյակի ընթացքում չի ստեղծվել:

Պատմական անդրադարձ կատարելով՝ նշենք, որ, օրինակ, Ամերիկայում հեռուստակապի ոլորտի երկրորդ խոշորագույն ընկերությունը՝ «WorldCom Inc»-ը, սնանկ ճանաչվեց, երբ չկարողացավ չեզոքացնել ընկերության հաշվապահական հաշվառման սկանդալի բացասական հետևանքները (ընկերության ակտիվները կազմում էին 104 մլրդ դոլար¹²):

Մեկ այլ օրինակ բանկային համակարգից. 2008 թվականի սեպտեմբերի 15-ին ռեյտինգային ընկերության կողմից իջեցվեց Ամերիկայի խոշորագույն բանկերից մեկի՝ «Washington Mutual Bank»-ի վարկանիշը: WaMu-ում վարկանիշի իջեցումից հետո

¹⁰ Գործառնական բոլոր հնարավոր ռիսկերի դասակարգման մասին տե՛ս Հարությունյան Հ., Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը բանկային համակարգում, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003, էջ 29:

¹¹ Տարածաշրջանի խոշորագույն բանկերի դասակարգումը կատարվել է ըստ ակտիվների մեծության:

¹² Տե՛ս <http://www.nysb.uscourts.gov/sites/default/files/pdf/wcmo.pdf>:

9 օրվա ընթացքում արձանագրվեց 16.7 մլրդ դոլար ավանդների կամ 22 մլրդ կանխիկ դոլարի արտահոսք, ինչը հանգեցրեց բանկի սնանկացմանը:

Ընկերությունների շահառուներն այժմ մեծ ուշադրություն են դարձնում ընկերությունում իրականացվող գործառույթների մոնիթորինգին, հատկապես այն գործառույթների, որոնք պարունակում են ֆինանսական կորուստներ կրելու ռիսկ, և այս հարցում հատկապես ընդգծվում է ներքին հսկողություն իրականացնող մարմինների դերակատարումը:

Վերահսկող կառույցները, ընկերության կառավարման մարմինները, կառավարիչները, վերլուծաբանները, ներդրողները այժմ ավելի մեծ ուշադրություն են դարձնում ընկերության ներքին հսկողության համակարգերին, քան տասնամյակ առաջ: Դրանք վերջին տասնամյակներում մեծ զարգացում են ապրել և դարձել ընկերությունների կառավարման համակարգերի հիմնասյունը:

Բանկի ֆինանսական հսկողության առաջնային խնդիրն է օժանդակել խորհրդին և գործադիր մարմնին պահպանելու բանկի ակտիվները, բարի համբավը և կայուն զարգացումը: Ֆինանսական հսկողությունը իրականացվում է անկախ և օբյեկտիվ՝ հավաստիացնելու համար, որ բանկի ռիսկերի կառավարման համակարգը սահմանված է և գործում է արդյունավետ, իսկ գործադիր մարմնի կողմից ներդրված ներքին հսկողության և կառավարման գործընթացները բավարար են:

Ֆինանսական հսկողության իրականացումը ենթադրում է բանկում հետևյալ երկու երևույթների առկայություն՝

*Անկախություն և օբյեկտիվություն*¹³: Ֆինանսական հսկողություն իրականացնող ծառայությունը նախ և առաջ պետք է լինի անկախ: Դա նպաստում է, որ ֆինանսական հսկողության արդյունքում բացահայտված սխալները, թերացումները հաշվետու լինեն համապատասխան կառավարման մարմիններին, և այստեղ շատ կարևոր է, որ ֆինանսական հսկողություն իրականացնող մարմնի վրա բացառվեն՝

- այլ բաժինների աշխատակիցների հնարավոր ազդեցությունները,
- շահերի բախումները:

¹³ Իվանյան Ա., Եսայան Տ., Բանկային վերահսկողություն և աուդիտ, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003, էջ 26:

Այս երևույթների բացառումը ապահովվելու համար ուսումնասիրվել են շատ երկրներում գործունեություն ծավալած բանկերի ներքին կառավարման համակարգերը, որի ընթացքում բացահայտվել է, որ ֆինանսական հսկողության իրականացումը շատ դեպքերում կազմակերպվում է կա՛մ գործադիր տնօրենի, կա՛մ ֆինանսական տնօրենի անմիջական ենթակայության տակ: Այս մոտեցումների առավելություններն են.

- Երկու դեպքում էլ ապահովվում է աշխատանքների կատարման անկախության և օբյեկտիվության բարձր մակարդակ: Անկախությունը գործառնական այլ ստորաբաժանումներից ապահովում է անաչառության բարձր մակարդակ:

- Ենթակայությունը բարձրագույն կառավարման մարմնին տալիս է ֆինանսական հսկողության ընթացքում բարձրացված հարցերի, առաջարկությունների քննարկման, հնարավոր քայլերի արագ ձեռնարկման և իրականացման ավելի մեծ հնարավորություններ:

Ռիսկ¹⁴: Ռիսկը ֆինանսական հսկողության անբաժանելի տարր է: Լայն իմաստով այն ձևակերպվում է որպես այս կամ այն իրադարձության (երևույթի) հանդես գալու հավանականություն, իսկ կախված բնագավառից՝ այն կարող է սահմանվել այլ կերպ, օրինակ՝ ներդրումային գործում այն սահմանվում է որպես իրական եկամտաբերության՝ սպասվածից ցածր լինելու հավանականություն:

Ռիսկերը դասակարգվում են ըստ հնարավոր կառավարման՝ *ապահովագրելի և անապահովագրելի*: Երկրորդ տեսակին են պատկանում այն ռիսկերը, որոնք հնարավոր չէ կանխատեսել և չափել:

Բանկային ռիսկերը¹⁵ բխում են բանկային գործի առանձնահատկություններից, և ֆինանսական հսկողության հիմնական նպատակներից մեկն է դրանց բացահայտումը և հնարավոր ֆինանսական կորուստներից բանկի պաշտպանումը:

¹⁴ «Ռիսկ» բառը առաջացել է արաբերեն “risque” –ից, որը Օքսֆորդի համալսարանի կողմից հրատարակված բառարանում մեկնաբանվում է որպես անցանկալի իրադարձության, վնասի ի հայտ գալու հավանականություն:

Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ՍՄԿ, անգլերեն՝ ISO) հրապարակած ISO 31000 ստանդարտում (2009 թ.) ռիսկը սահմանվում է որպես «անորոշության ազդեցություն նպատակների վրա»:

¹⁵ Բանկին բնորոշ ռիսկերի դասակարգումը ներկայացված է Հավելված 5-ում: Տե՛ս նաև Բաբայան Վ., Բանկային գործի հիմունքները, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003, էջ 40:

1.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Ուսումնասիրելով բանկային համակարգում ֆինանսական հսկողության իրականացման միջազգային փորձը և մեթոդաբանական հիմքերը՝ եզրակացնում ենք, որ ֆինանսական հսկողության հիմնական նպատակը թե՛ բանկային և թե՛ այլ ոլորտում գործող կազմակերպության համար ֆինանսական կորուստներ կրելու ռիսկի նվազեցումն է, սակայն ֆինանսական հսկողության գործընթացի կազմակերպման սկզբունքները և իրականացման մեխանիզմները տարբեր են՝ կախված տնտեսության ոլորտից:

Այդ իսկ պատճառով ստորև կդիտարկենք բանկային համակարգում իրականացվող ֆինանսական հսկողության առանձնահատկությունները՝ դրանք համեմատելով այլ ոլորտում գործող ընկերություններում իրականացվող ֆինանսական հսկողության հետ:

Նախկինում առևտրային բանկերը արդյունավետ հսկողության համակարգի բացակայության հետևանքով կրել են ֆինանսական կորուստներ, և այդ պատճառով էլ վերջին տասնամյակների ընթացքում դրանցում մեծացել է ֆինանսական հսկողության իրականացման կարևորությունը: Միջազգային փորձը և դիտարկումները հավաստում են, որ բանկերի ֆինանսական ծախսումները՝ ուղղված ֆինանսական հսկողության համակարգի ստեղծմանը, ներդրմանը և պահպանմանը, մի քանի անգամ զիջում են այն ֆինանսական կորուստներին, որոնք կառաջանան հսկողական համակարգի բացակայության կամ անբավարար արդյունավետության պայմաններում¹⁶:

Ֆինանսական հսկողության մեխանիզմների առանձնահատկությունները խորությամբ ուսումնասիրելու նպատակով հետազոտենք այն տնտեսական

¹⁶ Հավելված 1-ում ներկայացված է «Որոշումների ծառ» մոդելը, որով հնարավոր է գնահատել ֆինանսական հսկողության համակարգի ներդրման արդյունավետությունը, Հավելված 2-ում ներկայացված է «Ծախսեր-արդյունք» մոդելը, որով հնարավոր է գնահատել ֆինանսական հսկողության համակարգի ներդրման արդյունավետությունը:

կատեգորիաները, որոնք կանխորոշում են բանկերում իրականացվող ֆինանսական հսկողության սկզբունքները և առանձնահատկությունները:

1. Օրենսդրական միջավայրը

ՀՀ-ում ֆինանսական ինստիտուտների, այդ թվում բանկերի գործունեության կարգավորումը կենտրոնացված կերպով իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից: Բանկային համակարգի գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը:

ՀՀ ԿԲ-ն 2013 թ.-ին նոր խմբագրությամբ հաստատել է «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը¹⁷, որը նպատակ է հետապնդում բարձրացնելու ՀՀ-ում գործող առևտրային բանկերի (այդ թվում՝ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի) ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը, համապատասխանեցնելու այն Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի (BCBS) սահմանած պահանջներին¹⁸:

Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեն վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ձեռնամուխ եղավ ֆինանսական համակարգի վերահսկողության բարելավմանն ուղղված նոր առաջարկների մշակմանը և 2010 թ. հանդես եկավ առաջարկությունների նոր փաթեթով, որն ուղղված է լրացնելու Բազել 2-ով սահմանված ստանդարտները և մոտեցումները:

Վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը բացահայտեց ֆինանսական հսկողության համակարգում առկա բացթողումները, թերությունները և ռիսկերը: Բազել 3-ի՝ Բազելյան կոմիտեի կողմից մշակված մոտեցումները ուղղված են դրանց վերացմանը¹⁹: Բազել 2 և Բազել 3 համակարգերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Բազել 3-ով նախատեսված մոտեցումները երկու հիմնական նպատակ են հետապնդում՝ կապիտալի և իրացվելիության պահանջների խստացում,

¹⁷ Տե՛ս ԿԲ խորհրդի՝ 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102 որոշումը, Երևան:

¹⁸ Տե՛ս Basle Committee on Banking Supervision. Framework for Internal Control Systems in Banking Organisations. Basle. 1998:

¹⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Բազել 3 համառոտ տեղեկանք», Երևան, 2012:

որը պայմանավորված էր ֆինանսատնտեսական ճգնաժամից քաղած դասերով²⁰: Բազել 3-ով սահմանված մոտեցումները որոշ չափով արդեն իսկ արտացոլվել են ՀՀ բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտում:

Սակայն ԿԲ կարգավորման և հսկողության իրականացման մեխանիզմներում դեռևս առկա են բացեր, որոնք բացահայտվել և խորությամբ ուսումնասիրվել են աշխատանքի հաջորդ գլուխներում, որոնցում էլ արվել են բացահայտված հիմնախնդիրների լուծման գործուն առաջարկներ:

2. Բանկային գործի առանձնահատկությունները

Բանկերի՝ ֆինանսական հսկողության նկատմամբ առանձնահատուկ մոտեցումը պայմանավորված է ֆինանսական համակարգում դրանց ունեցած ակտիվ դերով և բանկերին բնորոշ առանձնահատուկ ռիսկերով: Այստեղ կարելի է բերել մի դիպուկ համեմատություն. տնտեսության մեջ բանկային համակարգի դերը համեմատվում է արյունատար անոթների՝ օրգանիզմում ունեցած դերի հետ: Բանկերի համակարգային բնույթը ստեղծում է մի իրավիճակ, որում բանկային համակարգից սկիզբ առնող ցանկացած ազդակ ուղեկցվում է տնտեսաֆինանսական միջավայրի վրա համակարգային ազդեցությամբ: Այդ պատճառով բանկերում ֆինանսական հսկողությունը ավելի համակարգված և կանոնակարգված բնույթ է կրում՝ համեմատած այլ՝ ոչ ֆինանսական ընկերությունների հետ:

Մյուս կողմից, բանկային գործի անկայուն բնույթը և բանկային համակարգին հատուկ ռիսկերն են, որ իրենց հերթին պահանջում են ֆինանսական հսկողության համակարգերի վրա մեծ կենտրոնացում:

3. Բանկային գործի անկայունությունը

Այն պայմանավորված է՝

- բանկերի եկամուտների և ծախսերի՝ առանձին ավանդատուներից և վարկառուներից մեծ կախվածությամբ: Մեկ կամ մի քանի խոշոր ավանդատուների

²⁰ Բոստանջյան Վ., Գևորգյան Հ., Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում ԲԱՁԵԼ 3-ի ներդրման առանձնահատկությունները, «Այլընտրանք» գիտական հանդես, ապրիլ-հունիս, 2015:

կամ վարկառուների արտահոսքը բանկի ֆինանսական կայունությունը դարձնում է խոցելի արտաքին բացասական ազդեցությունների նկատմամբ.

- բանկերում ֆինանսական լներիջի բարձ մակարդակով՝ համեմատած արտադրական ձեռնարկությունների հետ: Բանկերը կառավարում են ակտիվներ և պարտավորություններ, որոնք նրանց սեփական կապիտալը գերազանցում են մի քանի, նույնիսկ տասնյակ անգամ: Սա նպաստում է ֆինանսական լներիջի և դրանից բխող ռիսկերի մեծացմանը: Ռիսկերի մեծացումը ձևավորում է մի իրավիճակ, երբ բանկը կարող է ի վիճակի չլինել սեփական կապիտալի հաշվին իրականացնելու իր հաճախորդների նկատմամբ ստանձնած պարտավորությունները:

- Լներիջի ռիսկը սահմանափակելու համար կենտրոնական բանկը սահմանում է բանկային գործունեության հետևյալ 3 հիմնական տնտեսական նորմատիվները²¹

- 1) բանկի կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը (բացառությամբ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի).

- 2) բանկի կապիտալի համարժեքության նորմատիվները.

ա. հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը.

բ. ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը,

- ակտիվների և պասսիվների ժամկետայնության տարբերություններով և ակտիվների և պարտավորությունների արտարժույթային դիրքերի տարբերություններով²²:

Հաշվի առնելով այն փաստը, որ բանկի ավանդատուների վստահությունը ուղղակիորեն կախված է ոչ միայն առանձին բանկում, այլև ընդհանուր բանկային

²¹ Հավելված 3-ում ամփոփված են բանկային գործունեության՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները՝ ըստ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի (հաստատվել է 2007 թ. փետրվարի 16-ին):

²² Արտարժույթի տնօրինման նորմատիվների սահմանաչափերը և հաշվարկման եղանակները ներկայացվում են «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (ԿԲ խորհրդի կողմից հաստատվել է 2007 թ. փետրվար 16-ին):

համակարգում առկա իրավիճակից՝ մեկ բանկում առկա ֆինանսական խնդիրները համակարգային խնդրի վերաձվելու պարարտ հող է ստեղծվում, և եթե ավանդատուները սկսեն անվստահություն ցուցաբերել առանձին բանկի նկատմամբ, մյուս բանկերում նույնպես կմեծանա ավանդատուների՝ բանկի նկատմամբ պարտավորությունների հետևանքում՝ բերելով ամբողջ բանկային համակարգի նկատմամբ վստահության կորստի և բանկերի ֆինանսական միջոցների արտահոսքի:

Այդ իսկ պատճառով մի կողմից բանկերը, մյուս կողմից բանկային համակարգը վերահսկող մարմինները պետք է դիտարկեն բոլոր հնարավոր սթրեսային իրավիճակները, որպեսզի հնարավորինս սահմանափակվի բանկերի ենթարկվածությունը ֆինանսական լեերեջով պայմանավորված ռիսկերին²³:

Բանկի կառավարման մարմիններն առաջնային պատասխանատվություն են կրում բանկում ֆինանսական հսկողության արդյունավետ իրագործման համար համապատասխան միջավայր և միջոցառումների ամբողջություն ապահովելու գործում: Բանկերում ֆինանսական հսկողության համակարգերը նախագծվում և ներդրվում են՝ հիմնվելով երկրում մշակված ֆինանսական վերահսկողական օրենսդրական միջավայրի, ֆինանսական համակարգի առանձնահատկությունների վրա: Այս ամենը համադրվում է ֆինանսական հսկողության միջազգային փորձի և համընդհանուր կերպով ընդունված ստանդարտների և մեխանիզմների հետ:

Տարբեր երկրներում գործող բանկերի ֆինանսական հսկողության իրականացման փորձի հիմքում ընկած են ընդհանուր դատողություններ, որոնցով առաջնորդվում են առևտրային բանկերն իրենց գործունեության ընթացքում: Բանկերը ձգտում են լինելու ֆինանսապես ապահով, ունենալու մասնագիտացված կառավարման անձնակազմ: Բանկերը, ղեկավարվելով ռիսկ-եկամուտ հարաբերակցության իրենց ախորժակով, ծավալում են բանկային գործունեություն՝ իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար:

Դրանք իրենց ամենօրյա գործունեության ընթացքում իրականացնում են բանկերին բնորոշ ռիսկերի գնահատում՝ դրանց մեծության մասին պատկերացում

²³ St' u Basle Committee on Banking Supervision. Peer review of supervisory authorities: implementation of stress testing principles. 2012. Էջ 8:

կազմելու և հարկ եղած դեպքում համապատասխան կարգավորիչ միջոցառումների իրականացման համար: Բանկերը պետք է գնահատեն տիրապետվող ռեսուրսների բավարարվածությունը՝ բանկային ռիսկերը հավասարակշռելու համար:

Հաշվի առնելով բանկերում հսկողության համակարգի կարևորությունը՝ շատ երկրներում ներքին հսկողության բաժնի առկայությունը պարտադրվում է օրենսդրորեն: Այդ առումով բացառություն չէ նաև ՀՀ բանկային համակարգը, որտեղ կենտրոնական բանկի խորհրդի²⁴ կողմից հաստատվել են ՀՀ բանկերում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները²⁵, որոնցում և սահմանվում է բանկում առանձին հսկողական մարմնի ձևավորման պարտադիր պահանջը:

Ներքին հսկողության կարևորությունը շեշտադրվում է նաև Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի կողմից²⁶:

Բանկում ֆինանսական հսկողության անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալ հանգամանքներով.

- այն բանկին թույլ է տալիս ավելի արդյունավետ կերպով հասնել իր առջև դրված նպատակներին, շահութաբերության նպատակային ցուցանիշներին.
- այն նախապայմաններ է ստեղծում արժանահավատ ֆինանսական և կառավարչական հաշվետվողականության մեխանիզմների ձևավորման համար.
- այն նվազեցնում է բանկային օրենսդրությանը և բանկի ներքին ընթացակարգերին բանկային գործունեության իրականացման անհամապատասխանության ռիսկը.
- այն փոքրացնում է հնարավոր ֆինանսական կորուստների առաջացման ռիսկերը²⁷:

Բանկում ֆինանսական հսկողության իրականացումը շարունակական գործընթաց է, որը համակարգված կերպով իրականացվում է պատասխանատու մարմնի կողմից:

²⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության օրենքը ՀՀ կենտրոնական բանկի մասին», հոդված 19 (ընդունվել է հունիսի 30-ին), 1996:


²⁵ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 71 Ն որոշում (ընդունվել է 2008 թ. մարտի 11-ին):

²⁶ Տե՛ս Basle Committee on Banking Supervision. Consultative Document Core Principles for Effective Banking Supervision. 2011, էջ 60:

²⁷ Տե՛ս Basle Committee on Banking Supervision. Framework for Internal Control Systems in Banking Organisations. Basel. September 1998, էջ 1:

Միջազգային պրակտիկայում և ՀՀ բանկերում ընդունված է երկմակարդակ հսկողության մոդելը: Համակարգի առաջին մակարդակում բանկի յուրաքանչյուր աշխատակից հսկողություն է իրականացնում իր աշխատանքային պարտականությունների կատարման ողջ ընթացքում:

Համակարգի երկրորդ մակարդակում արդեն առանձնացված համապատասխան ստորաբաժանումը իրականացնում է համակարգային և կենտրոնացված հսկողություն, որը հսկողություն է ներառում նաև առաջին մակարդակում իրականացված հսկողության նկատմամբ:



Գծապատկեր 1. Առևտրային բանկում իրականացվող հսկողության երկմակարդակ համակարգ²⁸

Ֆինանսական հսկողության կազմակերպումը բանկում պետք է լինի անկախ և անջատված այլ ստորաբաժանումների աշխատանքներից²⁹: Սա ունի իր առավելությունները: Այն պատասխանատու բաժնին հնարավորություն է ընձեռում առանց կողմնակալության և շահերի հնարավոր բախման իրականացնելու ֆինանսական հսկողություն: Բացահայտված անկատարությունների և թերացումների պարագայում մարմինը հնարավորություն կունենա պատասխանատու մարմնից

²⁸ Տե՛ս Գևորգյան Հ., Ֆինանսական հսկողության հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում, «Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ» գիտական աշխատանքների ժողովածու, գիրք 7-րդ, 2015, էջ 278-285:

²⁹ Տե՛ս Ասրյան Գ., Բանկային կառավարման հիմունքները, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003, էջ 108:

պահանջելու իրականացնել բացահայտված թերացումների վերացմանն ուղղված միջոցառումներ:

Այն դեպքերում, երբ ֆինանսական հսկողության ծառայությունը անկախ չէ և ներգործական ազդեցություն է կրում բանկի այլ մարմինների կողմից, ստեղծվում է միջավայր, որտեղ առկա է հսկողության ընթացքում բացահայտված խնդիրների և թերացումների ուշադրության չարժանացման և անտեսման ռիսկ:

Այսպիսով, ֆինանսական հսկողությունը համապատասխան բաժնի կողմից իրականացվող շարունակական գործընթաց է, որի աշխատանքները անհրաժեշտ է կազմակերպել այլ ստորաբաժանումների աշխատանքներից անկախ և անջատ: Այն պետք է հնարավորություն տա ապահովելու բանկում իրականացվող գործառնությունների համապատասխանությունը բանկային օրենսդրությանը և նվազեցնելու բանկի՝ ֆինանսական կորուստներ կրելու հավանականությունը:

1.3. ԲԱՆԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Առևտրային բանկում ներդրված արդյունավետ ֆինանսական հսկողության համակարգը ամենակարևոր գրավականներից մեկն է, որ բանկը կհասնի իր առջև դրված նպատակներին: Այն բանկի՝ օրենքներին և իրավանորմատիվային ակտերին համապատասխան գործունեություն ծավալելու հիմքեր է ստեղծում և ապահովում բանկի գործունեության համապատասխանությունը ներքին ընթացակարգերին, կանոնակարգերին և նվազեցնում է ֆինանսական վնասներ կրելու հավանականությունը:

Ֆինանսական հսկողության կարևորությունը շեշտադրվեց հատկապես ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո: Ճգնաժամի հետևանքով ֆինանսական և, մասնավորապես, բանկային համակարգը կրեցին մեծ չափերի հասնող ֆինանսական կորուստներ, որ պայմանավորված էին բանկերում ոչ բավարար արդյունավետությամբ իրականացվող ֆինանսական հսկողությամբ, որ բանկերին թույլ չտվեց նախապես կանխորոշել ճգնաժամը և բանկային համակարգի վրա դրա հնարավոր բացասական հետևանքները:

Ուսումնասիրելով վերջին ժամանակներում բանկային համակարգում գրանցված հիմնախնդիրները՝ առանձնացնեք նրանք, որոնք ծագել են բանկերի ֆինանսական հսկողության համակարգերում թերացումների և անարդյունավետության պատճառով:

Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի կողմից իրականացված ծավալուն ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվել են այն հինգ խումբ խնդիրները, որոնք առանձնակի կարևորություն ստացան ճգնաժամից հետո՝ ելնելով դրանց ազդեցության չափից³⁰.

1. *Ֆինանսական հսկողության ներդրման գործընթացում կառավարման մարմինների բացթողումները, անհաշվենկապությունն ու թերացումները:* Բանկերի՝ մեծ չափերի վնասներ կրելը հիմնականում պայմանավորված է եղել ֆինանսական հսկողության ներդրման գործընթացում կառավարման մարմինների անուշադրությամբ

³⁰ St' u Basle Committee on Banking Supervision. Framework for Internal Control Systems in Banking Organisations. Basel September 1998, էջ 6:

և անհետևողականությամբ, տնօրենների խորհրդի, բարձրագույն կառավարման մարմինների կողմից իրականացվող հսկողության անբավարար մակարդակով:

2. Ֆինանսական հսկողություն իրականացնող կառույցների՝ բանկային ռիսկերի թերագնահատումը:

Բանկային գործունեության իրականացման ընթացքում պատշաճորեն չէին կատարվում ռիսկերի ճանաչում, բացահայտում և գնահատում, թերագնահատվում էին հաշվեկշռային, արտահաշվեկշռային ռիսկերը: Ուսումնասիրությունները բացահայտեցին, որ շատ դեպքերում բանկերը ֆինանսական մեծ կորուստներ են կրում բանկային ռիսկերի ոչ պատշաճ ճանաչման և պակաս ճշգրիտ գնահատման արդյունքում: Ձախողվում են ռիսկերի գնահատման համար ձևավորված մոդելները, որոնք չեն ընդգրկում արտաքին միջավայրի և օրենսդրական դաշտի հնարավոր փոփոխությունները:

3. Առանցքային հսկողական համակարգերի բացակայությունը կամ դրանց թերացումները:

Բանկերում բացեր են արձանագրվել լիազորությունների և պարտականությունների բաշխման, ստուգումների ու վերջնահաշվարկների և իրականացված գործունեության արդյունքների գնահատման համակարգերում: Վերոնշյալ համակարգերի ու գործընթացների անարդյունավետությունն ու անամբողջական լինելու հանգամանքը նպաստավոր միջավայր են ստեղծում բանկի ֆինանսական վիճակի խոցելիության մեծացման համար:

4. Ներքին հսկողության ստորաբաժանման աշխատանքներում բացահայտված խնդիրները:

Բանկում դիտարկվող ծառայության կողմից բացահայտված խնդիրները համապատասխան մեխանիզմների բացակայության պատճառով հետազայում հետևողական լուծում չեն ստանում:

Այսպիսով, ֆինանսական հսկողության արդյունավետ իրականացումը բանկի խորհրդի և բարձրագույն կառավարման մարմինների պարտականությունն է: Արդյունավետ ներդրված ֆինանսական հսկողության համակարգը ամրապնդում է

աշխատակցի ներգրավվածությունը և աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում բարձրացնում պատասխանատվության զգացումը:

Բանկերում հսկողության իրականացման համար պատասխանատու են բոլորը՝ սկսած տնօրենների խորհրդից մինչև անձնակազմի ստորին օղակի աշխատակիցը: Ֆինանսական հսկողությունը՝ որպես հսկողության տարատեսակ, սկիզբ է առնում կառավարման բարձրագույն մարմիններից՝ հասնելով մինչև ամենացածր օղակի աշխատակիցներին, և կենտրոնացված կերպով հսկվում է համապատասխան ծառայության կողմից:

Ֆինանսական հսկողության իրականացումը անհրաժեշտ է հետևյալ նպատակներին հասնելու համար.

1. գործունեության արդյունավետություն.
2. ֆինանսական և կառավարչական տեղեկատվության արժանահավատություն, ամբողջականություն.
3. օրենսդրությանն ու կիրառվող իրավանորմատիվային ակտերին համապատասխանություն:

Գործունեության արդյունավետությունն ապահովող նպատակներն ուղղված են բարձրացնելու բանկի գործունեության արդյունավետությունը ակտիվների արդյունավետ օգտագործման և մյուս կողմից՝ բանկի հնարավոր կորուստների առաջացումը կանխելու շնորհիվ: Այս նպատակների իրականացման համար անհրաժեշտ է բանկի ամբողջ անձնակազմի հետևողական աշխատանք առանց հավելյալ ծախսումների և առանց սեփական շահերը բանկի շահերից առաջ դնելու նախապայմանի:

Տեղեկատվությունը պետք է լինի արժանահավատ, ամբողջական և մատուցվի ժամանակին: Սա վերաբերում է և՛ կառավարչական, և՛ ֆինանսական հաշվետվություններին: Վերջինիս դեպքում լրացուցիչ պահանջներ կարող են կիրառվել: Նրանք պետք է ունենան սահմանված ձև և համապատասխանեն միջազգային հաշվապահական ստանդարտներին և բանկային օրենսդրությանը:

Ֆինանսական հսկողության իրականացումը, ինչպես նշվեց, ապահովում է նաև բանկի գործունեության համապատասխանությունը օրենսդրությանն ու կիրառվող

իրավանորմատիվային ակտերին, վերահսկվող մարմնի կողմից ներկայացվող պահանջներին: Անհամապատասխանությունը կամ խախտումները կարող են հանգեցնել ԿԲ-ի կողմից բանկին տրվող նկատողության, տուգանքի, բանկին լիցենզիայից զրկման: Վառ օրինակներ կարող են լինել 2014 թ. մայիսին “Credit Suiss” շվեյցարական բանկի կողմից վճարված 2,6 մլրդ դոլար տուգանքը փողերի լվացմանը նպաստելու մեղադրանքի պատճառով, “HSBC” բանկի՝ Ամերիկայի մասնաճյուղի 1.9 մլրդ դոլար տուգանքի վճարումը³¹ և վերջերս մեծ աղմուկ բարձրացրած դեպքը, երբ 2014 թ. նոյեմբերին 6 խոշոր բանկեր՝ “Citibank”, “HSBC”, “JPMORGAN Chase”, “UBS”, “RBS” և “BCS”, համաձայնեցին ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի համապատասխան կարգավորող մարմիններին (“U.S. Commodity Futures Trading Commission” և “U.K. Financial Conduct Authority”) վճարել ընդհանուր առմամբ 4.33 մլրդ դոլար տուգանք: Նրանք մեղադրվել էին արտարժույթի փոխարժեքները արհեստականորեն խեղաթյուրելու մեջ:

Ստորև ներկայացնենք պատմության մեջ բանկերին նշանակված ամենախոշոր տուգանքների աղյուսակը: Բոլորը ֆինանսական հսկողության համակարգի անկատարության հետևանքներ են:

Աղյուսակ 1³²

Բանկերի նկատմամբ նշանակված խոշորագույն տուգանքներ

Տուգանք	Բանկ	Մեղադրանք
\$1.9 միլիարդ	HSBC USA	փողերի լվացում
\$1.5 միլիարդ	UBS	լիբոր տոկոսադրույքի մանիպուլյացիա
\$920 միլիոն	JPMorgan	առևտրային գործառնությունների սկանդալ
\$780 միլիոն	UBS	հարկերից խուսափում
\$667 միլիոն	Standard Chartered	սանկցիաների խախտում

³¹ Տես մանրամասն <http://www.justice.gov/sites/default/files/opa/legacy/2012/12/11/dpa-attachment-a.pdf>:

HSBC Holding-ի և Ամերիկայի Միացյալ Նահանգների արդարադատության նախարարության միջև ստորագրված ակտում նշվում է, որ դեռ 5 տարի HSBC բանկը կգտնվի հատուկ հսկողության տակ, իսկ մինչև այդ այն պետք է վերանայի իր հսկողության մեխանիզմները, որոնց թերացումը և որոշ տեղերում հսկողության մեխանիզմների բացակայությունը հանգեցրին վերոնշյալ իրադարձություններին: HSBC բանկը միայն 2013 թվականին ավելացրել էր շուրջ 1800 աշխատակից՝ նշված թերացումները վերացնելու և հսկողության մեխանիզմները ուժեղացնելու նպատակով: Նշենք, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները նշված դեպքերը կրկնվելու դեպքում կարող է բանկին զրկել դոլարով շրջանառություն իրականացնելու իրավունքից, որը կարող է հանգեցնել 2.67 տրիլիոն դոլար ակտիվ ունեցող բանկի փակմանը:

³² Տես <http://www.telegraph.co.uk/finance/newsbysector/banksandfinance/10320948/Top-10-bank-fines.html> :

\$619 միլիոն	ING	սանկցիաների խախտում
\$612 միլիոն	RBS	լիբոր տոկոսադրույքի մանիպուլյացիա
\$550 միլիոն	Goldman	ներդրողներին սխալ տեղեկատվության տրամադրում
\$536 միլիոն	Credit Suisse	սանկցիաների խախտում
\$500 միլիոն	ԱԲՆ Amro	սանկցիաների խախտում
\$451 միլիոն	Barclays	լիբոր տոկոսադրույքի մանիպուլյացիա

Աղյուսակ 1

Բանկերի նկատմամբ նշանակված խոշորագույն տուգանքներ (շարունակություն)

Ֆինանսական հսկողության գործընթացը փոխկապակցված հինգ կատեգորիաների ամբողջություն է³³: Դրանք են՝

1. կառավարման մարմինների կողմից իրականացվող հսկողություն և հսկողության համակարգ,
2. ռիսկերի ճանաչում և քանակաորակական գնահատում,
3. հսկողության իրականացում և դրա գործառույթների բաշխում՝ ըստ պատասխանատու մարմինների,
4. տեղեկատվության ապահովում,
5. գործունեության մոնիթորինգ և բացահայտված թերացումների վերացում:

Հսկողության մշակույթի առկայությունը բանկում առանցքային կատեգորիա է: Տնօրենների խորհուրդն ու կառավարման բարձրագույն մարմինը պատասխանատու են բանկում ձևավորելու այնպիսի մշակույթ, որի դեպքում բանկի յուրաքանչյուր օղակի աշխատակից հստակ պատկերացում կունենա իր աշխատանքային պարտականությունների վերաբերյալ և իրականացվող աշխատանքում կցուցաբերի նվիրվածություն:

Այս ամենը աշխատակցին փոխանցվում է կառավարման մարմինների կողմից թե՛ գրավոր հաստատված գործընթացների, ընթացակարգերի, թե՛ բանավոր խոսքի միջոցով: Սրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են աշխատակցի

³³ Տե՛ս Գևորգյան Հ., Ֆինանսական հսկողության գործընթացի զարգացումը ՀՀ առևտրային բանկերում, «Ֆինանսներ և էկոնոմիկա», ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, հ. 1-2 (185-186), 2016, էջ 28:

մոտիվացվածության վրա: Միևնույն ժամանակ կառավարման մարմինները պետք է ուշադրություն դարձնեն այնպիսի հանգամանքների վրա, որոնք աշխատակցին կարող են դրդել աշխատանքի ընթացքում իրական փաստերը խեղաթյուրելու: Սա է պատճառը, որ կորպորատիվ մշակույթի բացակայությունը բանկում կարող է բերել հսկողության ոլորտում անարդյունավետության, բացերի և բանկի խոցելիության մեծացման:

Բանկային ռիսկերը պետք է ժամանակին բացահայտվեն և քանակապես գնահատվեն: Դրանք պետք է լինեն ընդգրկուն և ամբողջական: Նրանք պետք է ներառեն այն բոլոր ռիսկերը, որոնց բանկը առնչվում է: Ֆինանսական հսկողության ընթացակարգերն ու հսկվող ռիսկերը պետք է պարբերաբար վերանայվեն՝ ավելացնելու համար իրենց բնույթով նոր կամ մինչ այդ չվերահսկվող ռիսկերը:

Ռիսկերի ճանաչումն ու գնահատումը ֆինանսական վերահսկման գործընթացում տարբերվում է ռիսկերի կառավարման գործընթացից, որը ֆիքսվում է ռազմավարական պլանավորման ժամանակ, երբ որոշվում են բանկի կողմից ընդունելի ռիսկերն ու դրանց սահմանները, որոնք համադրում են սպասվող եկամուտների մակարդակի հետ (risk-reward trade off):

Ռիսկերի արդյունավետ ճանաչման ու գնահատման համար անհրաժեշտ է *ներքին* (գործունեության ոլորտ, կազմակերպչական կառուցվածք, կառուցվածքային փոփոխություններ, աշխատակազմի որակավորում, հոսունություն) և *արտաքին* ազդող գործոնների (օրենսդրական դաշտ, մրցակիցներ, քաղաքական դրություն, տնտեսական միջավայր) խոր ուսումնասիրություն:

Բանկային ռիսկերը լինում են *վերահսկելի* և *անվերահսկելի*: Վերահսկելի ռիսկերի շարքին են պատկանում տոկոսային և գործառնական ռիսկերը, իսկ ոչ վերահսկելի ռիսկերից են քաղաքական, օրենսդրական, տնտեսական միջավայրի փոփոխությունների հնարավոր բացասական ազդեցությունները: Բանկը պետք է որոշում կայացնի՝ արդյո՞ք անհրաժեշտ է ռեսուրսներ տրամադրել՝ ուղղված այս կամ այն ռիսկի հսկմանը:

Ֆինանսական հսկողության իրականացումը ներառում է 4 փուլ՝

1. ֆինանսական հսկողության ընթացակարգերի մշակում և ներդնում.

2. ֆինանսական հսկողության իրականացում՝ մշակված ընթացակարգերի համաձայն.

3. բացահայտված սխալների և թերացումների վերացում.

4. ընթացակարգերի, հսկողության մեխանիզմների՝ ըստ պահանջի և պարտադիր, պարբերական վերանայում:

Ֆինանսական հսկողության բաժինը իրականացնում է հսկողություն բանկային ռիսկերի, դրանց սահմանային թույլատրված մակարդակների նկատմամբ:

Ֆինանսական հսկողության բաժինը տիրապետում է բանկի ֆինանսական և շուկայում առկա տեղեկատվությանը և տիրող իրավիճակին: Այդ տեղեկատվությունը պետք է նախ և առաջ լինի՝

- ✓ արժանահավատ,
- ✓ հասանելի,
- ✓ ժամանակին,
- ✓ հասկանալի:

Կառավարչական որոշումները կարող են հանգեցնել ֆինանսական կորուստների, եթե կայացվել են անարժանահավատ տեղեկատվության հիման վրա, որի պատճառը խափանված կամ թերի աշխատած տեղեկատվական համակարգն է:


Բանկի կառուցվածքը պետք է թույլ տա տեղեկատվության անարգելք հոսքը հետևյալ ուղղություններով՝

- վերևից ներքև,
- ներքևից վերև,
- հորիզոնական:

Վերևից ներքև հոսքն ապահովում է ցածր օղակի ղեկավարներին և աշխատակիցներին բանկի գործունեության նպատակների, ռազմավարության, քաղաքականության ու խնդիրների, հաստատված գործընթացների ու ընթացակարգերի հասանելիությունը (գծապատկեր 2):

Ներքևից վերև հոսքը բանկի խորհրդին և բարձրագույն կառավարման մարմիններին ապահովում է բանկի գործունեության արդյունքների և բանկային ռիսկերի վերաբերյալ ֆինանսական գնահատումներով:

Հորիզոնական հոսքն ապահովում է տեղեկատվության հոսք բաժինների միջև, որոնք համարվում են տվյալ տեղեկատվության օգտագործողներ:



Գծապատկեր 2. Տեղեկատվության հոսքեր կառավարման տեղեկատվական համակարգում

Ֆինանսական հսկողության գործընթացը պահանջում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական կանոնավոր ստուգումներ՝ ըստ հաստատված ժամանակացույցի: Այստեղ շատ կարևոր է, որ բանկի աուդիտի աշխատակիցները տիրապետեն անհրաժեշտ տեղեկատվության և կարողանան անկախ գնահատական տալ իրականացվող ֆինանսական հսկողությանը³⁴: Ներքին աուդիտի կոմիտեն հաշվետու է տնօրենների խորհրդին և կառավարման բարձրագույն մարմնին³⁵:

Ֆինանսական հսկողության գործընթացում բացահայտված թերացումներն անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան կառավարման մարմնին, որը կիրականացնի գործուն քայլեր՝ թերացումները շտկելու ուղղությամբ: Առավել մեծ (նշանակալից) չափերի թերացումները կամ սխալները պետք է ներկայացվեն բանկի խորհրդին:

³⁴ Տե՛ս ՀՀ կառավարություն, «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիր», Երևան, 2010, էջ 49-50:

³⁵ Տե՛ս The internal audit function in banks. Basle Committee on Banking Supervision. 2012, էջ 1:

Տվյալ երկրի, տարածաշրջանի վերահսկող մարմինը պատասխանատու է բանկային համակարգում հսկողության կարգավորման և իրականացման համար: Հսկողության մեխանիզմները և կանոնակարգման դաշտը պետք է նպաստեն բանկերում արդյունավետ հսկողության համակարգերի ձևավորմանը:

Իհարկե, հսկողության իրականացման առաջնային պատասխանատուները բանկի խորհուրդն ու կառավարման բարձրագույն մարմինն են, սակայն վերահսկիչ մարմինը շարունակական մոնիթորինգի է ենթարկում բանկերի հսկողական համակարգերի արդիականությունը, արդյունավետությունը, ռիսկերի ընդգրկվածությունը: Անսովոր երևույթների բացահայտման դեպքում վերահսկիչ մարմինը հարկ եղած դեպքում քննարկումներ է կազմակերպում բանկի կառավարման բարձրագույն մարմնի հետ՝ համապատասխան ուղղիչ քայլերի ձեռնարկման նպատակով³⁶:

Վերահսկիչ մարմինը վերահսկողություն իրականացնում է երեք մեթոդներով.

1. *վերահսկողության իրականացում՝ հիմնված բանկի ներքին աուդիտի հաշվետվությունների վրա,*
2. *վերահսկողության իրականացում՝ հիմնված բանկի ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունների վրա³⁷.*
3. *վերահսկողության իրականացում՝ վերահսկիչ մարմնին հեղափոխող մասնաբաժիններով:*


Եթե վերը նշված մեթոդներն առանձին-առանձին կամ բոլորը միասին չեն բավարարում վերահսկիչ մարմնին՝ բանկերի հսկողության համակարգերի վերաբերյալ կարծիք կազմելու համար, ապա վերահսկիչ մարմինը կարող է դրանք համադրել տեղում իրականացվող ստուգումների կազմակերպմամբ:

³⁶ Տե՛ս Basle Committee on Banking Supervision. Joint forum Principles for the supervision of financial conglomerates. 2012:

³⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը, կանոնակարգ 3, Երևան, 2008, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Բանկերի նկատմամբ հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկ, Երևան 2005:

ԳԼՈՒԽ 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 2.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Խորհրդային միության փլուզումը Հայաստանի համար ունեցել է մի շարք բացասական հետևանքներ: Նրա փլուզումից հետո Հայաստանի տնտեսությունը կաթվածահար եղավ: Կտրվեցին առևտրատնտեսական կապերը նախկին ԽՍՀՄ երկրների հետ, իսկ տնտեսական շրջափակումն ու Արցախյան պատերազմն էլ ավելի վատթարացրին տնտեսության վիճակը: Մեքենաշինության, քիմիական, թեթև սննդի արդյունաբերության նախկինում զարգացած ոլորտներն անկում ապրեցին:




Գծապատկեր 3. ՀՀ մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը 1992-2014 թթ.³⁸

1994 թ. սկսվեց տնտեսության աստիճանական վերականգնումը: Հետագա տարիները բնորոշվեցին տնտեսական աճով, տնտեսության մեջ կառուցվածքային տեղաշարժերով և նոր ճյուղերի զարգացմամբ:

³⁸ Գծապատկերներ 3- 7-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները, տե՛ս www.armstat.am:


Տնտեսական աճը շարունակվեց մինչև 2009 թ., երբ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ ՀՀ տնտեսության մեջ գրանցվեց 14-տոկոսանոց անկում:

1990-ականների սկզբին արձանագրված հիպերինֆլյացիային հաջորդող տարիներին հնարավոր եղավ զսպել այն՝ ապահովելով գնաճի հիմնականում միանիշ մակարդակներ: Սրան նպաստեց 1994 թվականից ի վեր ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունը, որի հիմնական նպատակը գների կայունության ապահովումն էր:



Գծապատկեր 4. Գնաճի մակարդակը ՀՀ-ում 1994-2014 թթ.


Վերջին տարիներին գնաճի ցուցանիշը տատանվում է 5 %-ի շրջակայքում: 2015 թ. գնաճի նպատակային ցուցանիշ է սահմանվել 4 տոկոսային կետը (+/- 1.5 տոկոսային կետ): Տնտեսության կառուցվածքային փոփոխությունների ընթացքում կրճատվեց գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ իր տեղը զիջելով ծառայությունների ոլորտին:



Գծապատկեր 5. ՀՀ համախառն ներքին արդյունքը 1992-2014 թթ.


Մինչև 2008 թ. ՀՀ տնտեսության մեջ առանձնակի դեր ուներ արդյունաբերության ոլորտը, որը, սակայն, ճգնաժամի հետևանքով զգալի անկում ապրեց և դեռևս ամբողջովին չի վերականգնվել:

Հայաստանի հիմնական առևտրային գործընկերներն են Ռուսաստանը, Գերմանիան, Բուլղարիան, Իրանը, ԱՄՆ-ն և Վրաստանը:



Գծապատկեր 6. ՀՆԱ կառուցվածքը՝ ըստ խոշոր ճյուղերի 1993-2014 թթ.

2015 թ. հունվարի 2-ից Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական տնտեսական միության անդամ է: Նախատեսվում է, որ տնտեսական ինտեգրումը կնպաստի միության անդամ երկրների հետ առևտրաշրջանառության ծավալների ավելացմանը, ֆինանսական համակարգերի ինտեգրմանը:



Գծապատկեր 7. ՀՀ արտաքին առևտուրը 1993-2014 թթ.

Հայաստանի տնտեսության վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ Ռուսաստանի Դաշնության տնտեսության անբարենպաստ զարգացումները: Տնտեսական պատժամիջոցները և նավթի գների անկումը շարունակաբար խոչընդոտներ կստեղծեն ՌԴ տնտեսության համար, ինչն էլ շղթայաբար կանդրադառնա ՀՀ տնտեսության վրա:

Չնայած ՀՀ պետական բյուջեով 2015 թ. կանխատեսվում է 4.1 % տնտեսական աճ, ըստ Ասիական զարգացման բանկի կանխատեսման՝ 2015 թ. տնտեսական աճը ՀՀ-ում կդանդաղի՝ կազմելով ընդամենը 1.6 %, իսկ 2016 թ.՝ 2.3 %³⁹:

Ֆինանսական ոլորտը Հայաստանի տնտեսության կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Այն առանցքային դեր է խաղում՝ կապող օղակ հանդիսանալով տնտեսության տարբեր հատվածների միջև:

ՀՀ ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցն է բանկային համակարգը: Սրան հաջորդում են վարկային կազմակերպությունները, որոնց ակտիվները կազմում են ֆինանսական համակարգի ակտիվների շուրջ 7 %-ը: 2015-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 32 վարկային կազմակերպություններ: ՀՀ վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները 2015 թ. հունիսի 30-ին

³⁹ Տե՛ս Asian Development Outlook 2015. Asian Development Bank. 978-92-9254-896-4:

կազմել են 288 մլրդ 499 մլն ՀՀ դրամ, ընդհանուր պարտավորությունները՝ 154 մլրդ 490 մլն դրամ, իսկ հաշվեկշռային ընդհանուր կապիտալը՝ 134 մլրդ 9 մլն դրամ:

Վարկային կազմակերպությունները շարունակում են զարգանալ՝ բացելով նոր մասնաճյուղեր և ընդլայնելով վարկավորման ծավալները:

Հայաստանի ֆինանսական համակարգի մյուս կարևոր մասնակիցներից են ապահովագրական ընկերությունները: 2015-ի. դրությամբ ՀՀ-ում գործում էին 8 ապահովագրական ընկերություններ: Վերջիններիս ընդհանուր ակտիվները 2015 թ. մարտի 30-ին կազմել են 43 մլրդ 45 մլն ՀՀ դրամ, ընդհանուր պարտավորությունները՝ 17 մլրդ 614 մլն դրամ, իսկ հաշվեկշռային ընդհանուր կապիտալը՝ 16 մլրդ 404 մլն դրամ:

2015-ին ՀՀ-ում գործում էին 8 ներդրումային ընկերություններ: Դրանց ընդհանուր ակտիվները 2015 թ. ապրիլի 31-ին կազմում էին 26 մլն 318 հազար դրամ, ընդհանուր պարտավորությունները՝ 22 մլն 360 հազար, իսկ հաշվեկշռային ընդհանուր կապիտալը՝ 3 մլն 958 հազար ՀՀ դրամ:

Աղյուսակ 2⁴⁰

ՀՀ ֆինանսական հաստատությունների ամփոփ նկարագիր 2015 թ. դրությամբ

Կազմակերպությունների տեսակ	Բանկեր	Վարկային կազմակերպություններ	Ապահովագրական ընկերություններ	Ներդրումային ընկերություններ
Քանակ	22	32	8	8
Ընդհանուր ակտիվներ (մլն դրամ)	3,239,191.0	288,499.0	43,045.0	26.0
Ընդհանուր պարտավորություններ	2,760,956.0	154,490.0	17,614.0	22.0
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալը	478,235.0	134,009.0	16,404.0	4.0

Ֆինանսական համակարգի զարգացման կարևոր ուղղություններից է ծառայությունների նոր տեսակների զարգացումը: Հայաստանում հեռանկարային է

⁴⁰ Աղյուսակ 2-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ վիճակագրական տվյալները (այդ թվում՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր, ֆինանսական կայունության և ֆինանսական համակարգի զարգացումների վերաբերյալ հաշվետվությունների տվյալներ):

համարվում կյանքի ապահովագրության ոլորտում ներդրումների մեծացումը: Այս ուղղությամբ նախատեսվում են մի շարք միջոցառումներ, այդ թվում նաև՝ կենտրոնական բանկի կողմից⁴¹:

Ապահովագրության մյուս հեռանկարային ուղղությունները գյուղատնտեսության ապահովագրությունը և հիպոթեքային շուկայի զարգացումն են: Սրանց զարգացմանը նպաստում են պետական մի շարք ծրագրեր:

Հայաստանում դեռևս թույլ է զարգացած արժեթղթերի շուկան, որի զարգացումը կարող է նպաստել համակարգի մյուս մասնակիցների և տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը:

Ընդհանուր առմամբ կարելի է կանխատեսել ֆինանսական ոլորտի աճ բոլոր ուղղություններով, որը կբնութագրվի համակարգի կազմակերպությունների ակտիվների և կապիտալի ավելացմամբ, նոր մասնաճյուղերի բացմամբ, մատուցվող ծառայությունների պորտֆելի ընդլայնմամբ և նոր տեխնոլոգիաների ներդրմամբ:

⁴¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2014-2016 թթ.», Երևան, 2013:

2.2. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1991 թվականից նորանկախ Հայաստանի հետ զուգընթաց սկսեց զարգանալ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը: Դեռևս 80-ականների վերջին ձևավորվել էին առաջին կոոպերատիվ բանկերը, որոնք էլ դարձան նոր ձևավորվող բանկային համակարգի հիմնաքարերը:

1993 թվականին ընդունվեցին «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքները, ազգային բանկը վերանվանվեց կենտրոնական բանկի:

1993 թվականին շրջանառության մեջ դրվեց անկախ Հայաստանի ազգային արժույթը՝ հայկական դրամը, որով ՀՀ ֆինանսական համակարգում նոր էջ բացվեց:

Այս տարիներին բանկային համակարգը բնորոշվում էր էքստենսիվ աճով, արագ տեմպերով ձևավորվում էին նոր բանկեր: Այս ամենին նպաստում էին ոլորտի հարաբերականորեն բարձր եկամտաբերությունը և իրավական թույլ կարգավորվածությունը⁴²:

Այդ ժամանակ բանկերի ստեղծման համար սահմանված չէին խիստ պահանջներ, ինչը բանկ ստեղծելը դարձնում էր հեշտ և հասանելի: 1994 թ. սկզբին Հայաստանում գործում էին 64 առևտրային բանկեր և օտարերկրյա բանկերի մասնաճյուղեր:

Հետագայում բանկերին ներկայացվող պահանջների խստացման, կապիտալի նվազագույն չափի ավելացման և կարգավորման մեծացման արդյունքում բանկերի թիվը 2 տարվա ընթացքում նվազեց շուրջ 2 անգամ:

1995 թ. կենտրոնական բանկը ընդունեց «Բանկերի գործունեության կարգավորման հիմնական տնտեսական նորմատիվների մասին» որոշումը, որով առևտրային բանկերի համար պահանջները խստացվեցին⁴³:

⁴² Տե՛ս Բագրատյան Ա., Բալաբանյան Ա., Բանկային գործ, Երևան, 2003:

⁴³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Բանկերի գործունեության կարգավորման հիմնական տնտեսական նորմատիվների մասին» թիվ 78 որոշում, Երևան, 1995:

1997 թ. հունվարի 1-ից բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվեց 350,000 դոլարին համարժեք դրամ, և նախատեսվեց այդ սահմանաչափը աստիճանաբար մինչև 2000 թ. դարձնել 1,000,000 դոլարին համարժեք դրամ⁴⁴:

1994 թվականին կենտրոնական բանկը մշակեց և իրականացրեց դրամավարկային քաղաքականության իր ծրագիրը⁴⁵:

1996 թվականին ՀՀ Ազգային ժողովը նոր խմբագրությամբ հաստատեց «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքները, որոնցով, կարելի է ասել, սկիզբ դրվեց ՀՀ բանկային համակարգի զարգացման նոր փուլին:

Վերոնշյալ օրենքներով սահմանվում էին բանկերի գրանցման կարգը, բանկային գործունեության կարգավորումը և բանկային գործունեությանը վերաբերող շատ այլ դրույթներ:

Փոփոխություններով և լրացումներով հանդերձ՝ այս օրենքները գործում են մինչև օրս:

Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը սահմանվեց գների կայունության ապահովումը⁴⁶: Կենտրոնական բանկի առաջնային նպատակին զուգահեռ սահմանվեցին ԿԲ առջև դրվող խնդիրները, որոնք սկզբնապես ընդգրկում էին ՀՀ բանկային համակարգի կայունության, վճարունակության, իրացվելիության և բնականոն գործունեության համար պայմանների ապահովումը և գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը:

Ժամանակի ընթացքում ԿԲ խնդիրների ցանկն ընդլայնվեց, սակայն հիմնական խնդիրը մնում է անփոփոխ, այն է՝ ՀՀ-ում գների կայուն մակարդակի ապահովումը:

⁴⁴ Տե՛ս ՀՀ ԿԲ վարչության՝ «Բանկերի գործունեության կարգավորման հիմնական տնտեսական նորմատիվների մասին» թիվ 78 որոշում, 28 ապրիլի 1995 թ.:

⁴⁵ Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթուղթ, Երևան, 2014:

⁴⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության օրենքը կենտրոնական բանկի մասին», հոդված 4, 30 հունիսի 1996 թ.:

2005 թ. ԿԲ հիմնական խնդիրն ամրագրվեց նաև ՀՀ Սահմանադրության մեջ⁴⁷:

ՀՀ ժամանակակից բանկային համակարգը զգալի փոփոխությունների է ենթարկվել 2006 թվականին: Նախ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ավելի քան տասը տարի կիրառվող փողի զանգվածի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը փոխարինվեց գնաճի նպատակադրման ռազմավարությամբ: Այն ենթադրում էր գների կայունությանը հասնելու համար փողի ագրեգատների քանակական սահմանափակումների կիրառում:

Թեև այս ռազմավարությունը թույլ տվեց 1998-2004 թթ. ապահովել գնաճի միջինը 2.4 % մակարդակ, դրա կիրառման վերջին տարիներին առաջացել էին որոշակի խնդիրներ: Հատկապես անկայուն էր կապը փողի ագրեգատների և գնաճի միջև, ինչպես նաև փողի պահանջարկի անկանոն վարքագիծը և այլ գործոններ փողի ագրեգատների ծրագրային ցուցանիշների շարունակական վերանայման պատճառ էին դառնում⁴⁸:

Մյուս կարևոր փոփոխությունը ֆինանսական համակարգի բոլոր օղակների վերահսկողության փոխանցումն էր ԿԲ-ին, որն ամրագրվեց «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքով: Կենտրոնական բանկը վերածվեց ֆինանսական համակարգը վերահսկող միասնական մարմնի, որը, բացի բանկային համակարգի և վարկային կազմակերպությունների վերահսկումից, հսկողություն է իրականացնում ֆինանսական համակարգի այլ մասնակիցների նկատմամբ (ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի շուկայի մասնակիցներ, ներդրումային ընկերություններ, ներդրումային հիմնադրամներ, գրավատներ և այլն)՝ ապահովելով ֆինանսական համակարգի կայունությունն ու բնականոն գործունեությունը, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանությունը⁴⁹:

⁴⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 83, կետ 3, 5 հուլիսի 1996 թ.:

⁴⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում», ՀՀ ԿԲ, 2005:

⁴⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության օրենքը ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին», 8 դեկտեմբերի 2005 թ.:

Արժեթղթերի շուկայում վերահսկողություն իրականացնող արժեթղթերի հանձնաժողովը լուծարվեց՝ բոլոր լիազորությունները փոխանցելով կենտրոնական բանկին:

Դադարեցվեցին նաև ապահովագրական գործունեություն իրականացնողների, գրավատների լիցենզավորման, կարգավորման և վերահսկողության հետ կապված պետական իրավասու մարմնի լիազորությունները և փոխանցվեցին ԿԲ-ին:

Առևտրային բանկը յուրահատուկ տնտեսական միավոր է, որն իրականացնում է օրենքով սահմանված գործառնություններ: Վերջիններս կարող են բնորոշ լինել ինչպես միայն բանկերին, այնպես էլ այլ կազմակերպությունների: Հենց ուրույն գործառնություններն էլ բանկերին առանձնացնում են այլ առևտրային կազմակերպություններից: Նշենք, որ օրենքով միայն բանկերին է տրված բանկային գործառնություններ իրականացնելու իրավունքը: Սա ներառում է հաշիվներ բացելու և վարելու, ցպահանջ և ժամկետային ավանդներ ընդունելու, ներգրավված միջոցները տեղաբաշխելու բացառիկ իրավունքը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված են այն գործառնությունները, որոնք կարող են իրականացնել ՀՀ տարածքում գործող բանկերն ու դրանց մասնաճյուղերը:

Բացի դրանցից՝ կենտրոնական բանկը կարող է բանկերին թույլատրել իրականացնել նաև այլ գործառնություններ, եթե դրանք բխում են բանկային գործունեությունից կամ սերտորեն կապված են դրանց և օրենքով նախատեսված գործառնություններին, և եթե դրանք թույլատրելը չի հակասում օրենքի նպատակներին և էականորեն չի վտանգում բանկերի ավանդատուների և վարկառուների շահերը:

Մյուս կողմից, բանկերին արգելվում է իրականացնել առևտրային, արտադրական և ապահովագրական գործունեություն:

Առևտրային բանկերի գործառույթները սերտորեն փոխկապակցված են: Կարելի է առանձնացնել առևտրային բանկերի գործառույթների հետևյալ չորս հիմնական խմբերը⁵⁰.

⁵⁰ Տե՛ս Բաղանյան Լ., Աբգարյան Կ., Սալնազարյան Ա. և ուրիշներ, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ (դասագիրք), «Զանգակ-97», Երևան, 2007:

1. Ժամանակավորապես ազատ դրամական միջոցների ներգրավում և կուտակում.

Բանկերն իրենց գործունեության ընթացքում ավանդների և բանկային հաշիվների տեսքով հավաքագրում են ժամանակավորապես ազատ դրամական միջոցները: Այս միջոցները մի կողմից եկամտի աղբյուր են դրանց սեփականատիրոջ համար, իսկ մյուս կողմից էլ դառնում են վարկավորման գործառնությունների համար անհրաժեշտ ռեսուրս: Սրանք են ձևավորում փոխառու կապիտալը, որն առևտրային բանկն օգտագործում է վարկավորման նպատակով:

2. Վարկային միջնորդություն.

Ազատ դրամական միջոցների սեփականատերերի և դրանց կարիքն ունեցողների միջև ուղղակի վարկավորմանը խանգարում են մի շարք գործոններ, ինչպես՝ ազատ միջոցների և նախատեսվող վարկի ծավալի և ժամկետների անհամապատասխանություն, չվերադարձման ռիսկեր և այլն: Բանկերը, ազատ դրամական միջոցները հավաքագրելով տարբեր ավանդատուներից և դրանք բաշխելով տարբեր վարկառուների միջև, լուծում են այս խնդիրը: Մյուս կողմից, դիվերսիֆիկացման միջոցով բանկը նվազեցնում է առանձին ավանդատուների ռիսկը:

3. Վճարահաշվարկային գործառնությունների իրականացում.

Բանկերի միջոցով է իրականացվում բնակչության, ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների վճարահաշվարկային սպասարկումը: Նրանց կողմից իրականացվում են բազմաբնույթ վճարահաշվարկային գործարքներ, իսկ վերջին տարիներին լայն տարածում են ստացել էլեկտրոնային անկանխիկ գործարքները:

4. Վարկային փողի ստեղծում.

Վարկեր տրամադրելով՝ բանկերը ստեղծում են լրացուցիչ փող՝ «վարկային փող»: Վերջինս ֆիզիկական ձև չունի և գոյություն ունի միայն բանկերի հաշիվներում: Բանկերի կողմից ներգրավված միջոցներով տրամադրվում են վարկեր, որոնց մի մասը ավանդի տեսքով նորից վերադառնում է բանկ և դառնում նոր վարկավորման աղբյուր: Այս գործառույթը կարգավորվում է կենտրոնական բանկի կողմից պարտադիր պահուստավորման նորմատիվի միջոցով:

ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները 2006-2015 թթ.⁵¹

Տարեթիվ	Ընդհանուր ակտիվներ (մլրդ դրամ)	Տարեկան հավելածի տեմպ (%)	Ընդհանուր պարտավորություններ (մլրդ դրամ)	Տարեկան հավելածի տեմպ (%)	Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ (մլրդ դրամ)	Տարեկան հավելածի տեմպ (%)
2006 թ.	524.63	-	404.36	-	120.27	-
2007 թ.	764.39	45.7 %	592.58	46.5 %	171.81	43.9 %
2008 թ.	1,024.23	34.0 %	788.54	33.1 %	235.69	37.2 %
2009 թ.	1,325.96	29.5 %	1,047.58	32.9 %	278.38	18.1 %
2010 թ.	1,560.47	17.7 %	1,241.52	18.5 %	318.95	14.6 %
2011 թ.	2,066.72	32.4 %	1,710.80	37.8 %	355.93	11.6 %
2012 թ.	2,470.63	19.5 %	2,077.04	21.4 %	393.59	10.6 %
2013 թ.	2,943.73	19.1 %	2,487.70	19.8 %	456.03	15.9 %
2014 թ.	3,410.92	15.9 %	2,941.80	18.3 %	469.12	2.9 %
Միջինը	1,787.97	26.7 %	1,476.88	28.5 %	311.09	19.2 %
2015 թ. II եռամսյակ ⁵²	3,239.19	10.8 %	2,760.96	12.7 %	478.24	1.1 %


Բանկային համակարգը ցանկացած երկրի ֆինանսական համակարգի կարևորագույն մասն է: Դրա դերը հատկապես մեծ է զարգացող երկրներում, որտեղ մեծ զարգացում չունեն ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունները:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը երկրի ֆինանսական համակարգի առանցքային բաղադրիչն է և կարևոր դեր է խաղում ողջ տնտեսության զարգացման համար: Բանկային համակարգին է բաժին ընկնում ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների 90 %-ը: ՀՀ բանկային համակարգն ունի երկաստիճան կառուցվածք, որի առաջին մակարդակում ՀՀ կենտրոնական բանկն է, որն իրականացնում է ամբողջ ֆինանսական համակարգի վերահսկողության գործառնություն: Նրա գլխավոր նպատակը Հայաստանի Հանրապետության տարածքում գների կայունության ապահովումն է: Այդ նպատակին հասնելու համար կենտրոնական


⁵¹ Աղյուսակ 3-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր, ֆինանսական կայունության և ֆինանսական համակարգի զարգացումների վերաբերյալ հաշվետվությունների տվյալներ):

⁵² Հավելածի տեմպերը հաշվարկվել են 2015 թ. II եռամսյակի ցուցանիշների նկատմամբ:

բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագիր:



Գծապատկեր 8. ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները 2006-2015 թթ. (մլրդ դրամ)



Գծապատկեր 9. ՀՀ ֆին. համակարգի ակտիվների կառուցվածքը 2014 թ⁵³.

ՀՀ բանկային համակարգն ունի երկաստիճան կառուցվածք, որի առաջին մակարդակում ՀՀ կենտրոնական բանկն է, որն իրականացնում է ամբողջ

⁵³ Գծապատկեր 8- 11-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր, ֆինանսական կայունության և ֆինանսական համակարգի զարգացումների վերաբերյալ հաշվետվությունների տվյալներ):

ֆինանսական համակարգի վերահսկողության գործառույթը: Նրա գլխավոր նպատակը Հայաստանի Հանրապետության տարածքում գների կայունության ապահովումն է: Այդ նպատակին հասնելու համար կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագիր:

Բանկային համակարգի երկրորդ մակարդակում առևտրային բանկերն են: 2015 թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն են իրականացնում թվով 22 բանկեր: Դրանցից 21-ն առևտրային բանկեր են, որոնք ունեն 513 մասնաճյուղեր, որոնցից 217-ը՝ Երևանում, 261-ը՝ մարզերում և 35-ը՝ Արցախում: Հայաստանում գործում է նաև մեկ զարգացման բանկ՝ Համահայկական բանկը, որը տրամադրում է երկարաժամկետ (3 տարուց ավել ժամկետով) վարկեր՝ արտահանող մասնավոր ձեռնարկություններին աջակցության նպատակով⁵⁴:

2015 թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ակտիվների ընդհանուր ծավալը կազմել է 3.23 տրլն դրամ, ընդհանուր պարտավորությունների ծավալը՝ 2.76 տրլն, իսկ հաշվեկշռային ընդհանուր կապիտալը՝ 0.48 մլրդ դրամ:

ՀՀ բանկային համակարգին բնորոշ են ցածր կենտրոնացվածությունը և մրցակցության բարձր մակարդակը: 2014 թվականի տարեվերջին կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը⁵⁵ ՀՀ բանկային համակարգում կազմում է 0.0728՝ ըստ ընդհանուր ակտիվների, 0.0751՝ ըստ ընդհանուր պարտավորությունների և 0.0627՝ ըստ ընդհանուր կապիտալի⁵⁶: Այս ցուցանիշների դինամիկան ներկայացված է աղյուսակում:

⁵⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության օրենքը համահայկական բանկի մասին», 26 դեկտեմբերի 2008 թ.:


⁵⁵ Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցն ընդունում է արժեքներ 0-1 միջակայքում և բնութագրում կենտրոնացվածությունը (0-ին մոտ արժեքները բնութագրում են կենտրոնացվածության ցածր աստիճան):

⁵⁶ Տե՛ս Գևորգյան Հ., Կապիտալի համարժեքության պահպանումը որպես արդյունավետ ֆինանսական հսկողության իրականացման գրավական, «Ֆինանսներ և էկոնոմիկա», ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, հ. 1-2 (185-186), էջ 25, 2016 թ.:

Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը ՀՀ բանկային համակարգում 2011-2014 թթ.⁵⁷

Ցուցանիշներ	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Ընդհանուր ակտիվներ	0.0775	0.0787	0.0699	0.0728
Ընդհանուր պարտավորություններ	0.0792	0.0705	0.0727	0.0751
Ընդհանուր կապիտալ	0.0644	0.0637	0.0613	0.0627


Թեև նախորդ տարվա նկատմամբ բոլոր ցուցանիշներն աճել են, այնուամենայնիվ բանկային համակարգի թե՛ ակտիվները, թե՛ պարտավորությունները և թե՛ կապիտալը կենտրոնացված չեն մի կամ մի քանի խոշոր մասնակիցների ձեռքում: Այս ցուցանիշների ցածր մակարդակը սահմանափակում է բանկային համակարգի կայունության վրա կենտրոնացվածության ռիսկի հնարավոր ազդեցությունը:



Գծապատկեր 10. Բանկային համակարգի ակտիվների և վարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2000-2014թթ.

⁵⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2015 թ.:

2006-2014 թթ. ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվների ծավալը աճել է շուրջ 6.5 անգամ՝ տարեկան միջինը աճելով 26.7 %-ով: Նույն ժամանակահատվածում պարտավորությունների ընդհանուր ծավալն ավելացել է շուրջ 7 անգամ՝ տարեկան միջինը 28.5 %-ով, իսկ հաշվեկշռային ընդհանուր կապիտալի ծավալը՝ ընդամենը 4 անգամ՝ տարեկան միջինը 19.2 %-ով: Այստեղ դիտարկվում է հաշվեկշռային բաղադրիչների անհավասարաչափ աճ կամ պարզապես ռիսկերի ավելացում այլ հավասար պայմաններում: Դրա մասին է փաստում վերջին տարիների ընթացքում բանկային համակարգի Ն11 նորմատիվի նվազող դինամիկան⁵⁸:




Գծապատկեր 11. Բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվի դինամիկան 1997-2014 թթ.

Վերջին տարիների ընթացքում նկատվում է ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության նվազում մինչև 14 %: 2014 թվականի վերջում գրանցված ցուցանիշը գերազանցում է կենտրոնական բանկի կողմից սահմանված 12 % նվազագույն շեմը, սակայն սթրես թեստավորման արդյունքները, նախորդ տարիներին գրանցված արդյունքների հետ համեմատած, վատթարացել են: Այս ամենը հիմնականում պայմանավորված է բանկերում վարկային պորտֆելի որակի անկմամբ: Երբ դիտարկում ենք վարկային պորտֆելի և դեբիտորական պարտքերի

⁵⁸ Տե՛ս Հավելված 6:

կառավարման որակը ՀՀ առևտրային բանկերում, բացահայտում ենք, որ վերջին տարիների ընթացքում կառավարման պորտֆելի որակի անհամեմատ անկում է գրանցվել: Այս անկումը պայմանավորում է կապիտալի համարժեքության նորմատիվի անկումը:

Առևտրային բանկերում ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքում կարևորագույն ռիսկը շարունակում է մնալ վարկայինը (2014 թվականի վերջին վարկային ռիսկի մասնաբաժինը ընդհանուր ռիսկով կշռված ակտիվներում կազմել է 90 %):



Գծապատկեր 12. ՀՀ բանկային համակարգի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգումը՝ ըստ ռիսկայնության (2003-2014թթ.)⁵⁹

2014 թվականին չաշխատող վարկերը և դեբիտորական պարտքերը արձանագրել են գրեթե կրկնակի աճ (86.2 տոկոսային կետ) այն դեպքում, երբ ընդհանուր վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 20.3 տոկոսային կետով:

⁵⁹ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2014 թ.:

Աղյուսակ 5

Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի կշիռը ընդհանուր պորտֆելում
2013-2014 թթ.⁶⁰

	2013թ.	2014թ.	Աճի տեմպ, %
Չաշխատող վարկեր և դեբիտորական պարտքեր, մլրդ դրամ	81.4	151.5	86.2
Ստանդարտ վարկեր և դեբիտորական պարտքեր, մլրդ դրամ	1832.1	2204.9	20.30
Ընդամենը վարկեր և դեբիտորական պարտքեր, մլրդ դրամ	1913.5	2356.4	23.10
Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր կշիռը, %	4.3	6.4	2.2

2014 թվականի վերջում չաշխատող ակտիվների մասնաբաժինը ընդհանուր ակտիվներում կազմել է 6. սա գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 2.2 տոկոսային կետով:

Աղյուսակ 6


Բանկային համակարգում ակտիվների ռիսկայնության դասի փոփոխությունը վերջին երկու տարում (2013-2014թթ.)

Տարեթիվ	Ստանդարտ, %	Հսկվող, %	Ոչ Ստանդարտ, %	Կասկածելի, %
2013թ.	93.4	3.10	1.90	1.40
2014թ.	95.7	2.20	1.10	1.00

Երբ դիտարկում ենք ակտիվների դասակարգման փոփոխությունը՝ ըստ ռիսկայնության դասերի, ապա ամենամեծ ռիսկի աճ արձանագրում ենք հսկվող և ոչ ստանդարտ դասերի մեջ՝ համապատասխանաբար 0.9 և 0.8 տոկոսային կետ, որը նշանակում է՝ հիմնականում վարկային պորտֆելի որակի վատթարացմանը նպաստել

⁶⁰ Աղյուսակ 5-ի և 6-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր, ֆինանսական կայունության և ֆինանսական համակարգի զարգացումների վերաբերյալ հաշվետվությունների տվյալներ):

են նոր վարկերի չափատող դասակարգվելը և ոչ թե նախկինում դասակարգված վարկերի ավելի ռիսկային դասակարգման ենթարկվելը:



Գծապատկեր 13. ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելի որակը՝ ըստ ճյուղերի 2013-2014 թթ.⁶¹.

Վարկային պորտֆելի որակի անկման ավելի խոր հետազոտությունը ցույց է տալիս, որ վարկային պորտֆելի վատթարացման հիմնական պատճառը չափատող վարկերի տեսակարար կշռի աճն է շինարարության ոլորտում, գյուղատնտեսության մեջ և առևտրում:

Աղյուսակ 7

Տնտեսության հիմնական ճյուղերը, որոնցում գրանցվել է չափատող վարկերի զգալի աճ (2013-2014 թթ.)⁶²

	Շինարարություն		Գյուղատնտեսություն		Առևտուր	
	2013	2014	2013	2014	2013	2014
Չափատող վարկերի տեսակարար կշիռը ճյուղում, %	8.30	17.20	2.50	5.50	3.80	6.60


⁶¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2014 թ.:

⁶² Աղյուսակ 7-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:

Որոշ բանկերում սթրես թեստավորման արդյունքները գրանցել են կապիտալի համարժեքության խախտման դեպքեր, որը վկայում է այն մասին, որ մի շարք բանկերի ռիսկային ակտիվների կառավարման արդյունավետությունը ցածր է, և շուկայում սթրեսի առաջացման պայմաններում այդ բանկերը ֆինանսական հիմնախնդիրների առջև կկանգնեն: Կապիտալի համարժեքության նորմատիվները ներկայացված են Հավելված 6-ում:

Բանկային համակարգի ակտիվների մեծ մասը կազմում են ՀՀ ռեզիդենտներին դրամով և արտարժույթով տրամադրված վարկերը:

2015 թ. հունիսի 30-ին ՀՀ առևտրային բանկերի կողմից տեղաբաշխված վարկերի ծավալը կազմել է 2 տրիլիոն 80 միլիարդ ՀՀ դրամ: Դրանցից 1 տրիլիոն 916 միլիարդ դրամը կազմում են ռեզիդենտներին տրամադրված վարկերը, որից 1 տրլն 273 մլրդ դրամը արտարժույթով, իսկ 643 մլրդ դրամը դրամով տրամադրված վարկերն են:




Գծապատկեր 14. ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված արտարժույթով վարկերը՝ ըստ ոլորտների (2015 թ. հունիս)⁶³

Վարկերի ճյուղային բաշխումը տարբերվում է՝ կախված արժույթից: Արտարժույթով տրամադրված վարկերի ավելի քան մեկ քառորդը բաժին է ընկնում արդյունաբերությանը տրամադրված վարկերին: Գրեթե նույն ծավալի են նաև առևտրի ոլորտին տրամադրված վարկերը, իսկ երրորդ խոշոր բնագավառը սպասարկման

⁶³ Գծապատկերներ 14-19-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:

ուրտն է: Սպառողական վարկերի մասնաբաժինը արտարժույթով վարկերի մեջ կազմում է ընդամենը 8 %:

2007 թ.-ին սպառողական վարկերի մասնաբաժինը կտրուկ նվազեց՝ շուրջ 27 %-ից հասնելով 6 %-ի: Սա հիմնականում պայմանավորված էր «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» օրենքում 2006 թ. տարեվերջին կատարված փոփոխություններով և լրացումներով: Մասնավորապես, սահմանվեց, որ ՀՀ բանկերը սպառողական փոխառություններն ու վարկերը իրավունք ունեն տրամադրելու բացառապես Հայաստանի Հանրապետության դրամով⁶⁴:




Գծապատկեր 15. ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված դրամով վարկերը՝ ըստ ոլորտների (2015 թ. հունիս)

Հակառակ պատկերն է դրամով տրամադրված վարկերի դեպքում: Վարկերի գերակշիռ մասը սպառողական վարկերն են (շուրջ 50 %): Սրանց հաջորդում են հիպոթեքային (12 %), արդյունաբերության (11 %) և առևտրի (9 %) ոլորտներին տրամադրված վարկերը:

Ընդհանուր վարկերի դեպքում կենտրոնացվածությունն ըստ առանձին ոլորտների ցածր է, իսկ վարկերի ճյուղային կառուցվածքի դինամիկան մեծ փոփոխությունների չի ենթարկվում: Այսինքն՝ չկա արտահայտված կենտրոնացում որևէ ոլորտում:

⁶⁴ Տե՛ս ՀՀ օրենքը «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», հոդված 4, 25 դեկտեմբերի 2006 թ.:



Գծապատկեր 16. ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերը՝ ըստ ոլորտների (2005-2014 թթ.)

ՀՀ առևտրային բանկերը որպես վարկերի տրամադրման համար միջոցների ներգրավման հիմնական աղբյուր օգտագործում են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները:

2015 թ. հունիսի 30-ին ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալը կազմել է 1 տրիլիոն 761 միլիարդ ՀՀ դրամ: Դրանցից 1 տրիլիոն 374 միլիարդ դրամը կազմում են ռեզիդենտներից ներգրավված ավանդները:

Ռեզիդենտներից ներգրավված ավանդների 48 %-ը կազմում են արտարժույթով, 23 %-ը՝ դրամով ժամկետային ավանդները: Դրամով և արտարժույթով ցպահանջ ավանդները կազմում են համապատասխանաբար 14 % և 15 %:


Աղյուսակ 8

Ռեզիդենտներից ներգրավված ավանդների կառուցվածքը 2015 թ. հունիսի դրությամբ⁶⁵


Ավանդները ռեզիդենտներից	մլն դրամ	Ընդհանուրում կշիռը (%)
Դրամով	503,958	36.7
Ցպահանջ	187,742	13.7
Ժամկետային	316,215	23.0
Արտարժույթով	870,614	63.3
Ցպահանջ	214,810	15.6
Ժամկետային	655,804	47.7
Ընդամենը	1,374,572	100.0

⁶⁵ Աղյուսակ 8-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:

Ռեզիդենտներից դրամով և արտարժույթով ցպահանջ ավանդների ծավալը կազմել է 402 մլրդ 553 մլն դրամ: Դրա 44 %-ը բաժին է ընկնում մասնավոր ձեռնարկությունների ավանդներին, իսկ 41 %-ը՝ տնային տնտեսությունների ավանդներին:




Գծապատկեր 17. Ռեզիդենտներից ներգրավված ավանդների կառուցվածքը 2015 թ. հունիսի դրությամբ



Գծապատկեր 18. Ռեզիդենտներից ներգրավված ցպահանջ ավանդների կառուցվածքը 2015 թ. հունիսի դրությամբ

Ռեզիդենտներից ներգրավված դրամով և արտարժույթով ժամկետային ավանդների ծավալը կազմել է 972 մլրդ 19 մլն դրամ, որի 79 %-ը կազմում են տնային տնտեսություններից ներգրավված ավանդները: Ռեզիդենտներից ներգրավված


Ժամկետային ավանդների ծավալը դրամով և արտարժույթով կազմել է 972 մլրդ 19 մլն դրամ, որի 79 %-ը կազմում են տնային տնտեսություններից ներգրաված ավանդները:



Գծապատկեր 19. Ռեզիդենտներից ներգրաված ժամկետային ավանդների կառուցվածքը 2015թ. հունիսի դրությամբ

2.3. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Բանկային համակարգի արդյունավետության վերլուծության տեսանկյունից կարևոր է ուսումնասիրել բանկերի ակտիվների եկամտաբերությունը: Շահույթի ստացումը ցանկացած առևտրային բանկի գլխավոր նպատակներից է: Շահույթը բանկի համար ոչ միայն եկամտի աղբյուր է, այլև գործունեության ընդարձակման և զարգացման համար անհրաժեշտ ներդրումների աղբյուր: Բնական է, որ բանկի կառավարման համակարգը պետք է ուղղված լինի բանկի՝ առավելագույն շահույթ ստանալու ապահովմանը:



Գծապատկեր 20. ՀՀ բանկային համակարգի համախառն շահույթի դինամիկան 2006-2015 թթ.⁶⁶

Դիտարկվում են ոչ միայն շահույթի բացարձակ մեծությունը, այլև հարաբերական ցուցանիշներ, որոնք տալիս են բանկային համակարգի շահութաբերության գնահատականը: Այդ ցուցանիշներից լայն կիրառություն ունեն ակտիվների (ROA՝ return on assets) և կապիտալի եկամտաբերությունը (ROE՝ return on equity): Առաջինը հաշվարկվում է որպես բանկի շահույթի և ակտիվների հաշվեկշռային մեծության հարաբերակցությունը և ցույց է տալիս ակտիվների 1

⁶⁶ Գծապատկերներ 20-23-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:

միավորին բաժին ընկնող շահույթի մեծությունը մինչև հարկումը: Կապիտալի եկամտաբերությունը ցույց է տալիս շահույթը կապիտալի միավորի հաշվով և հաշվարկվում է որպես զուտ շահույթի և կապիտալի միջին արժեքի հարաբերակցություն:


Աղյուսակ 9

Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները 2005-2014 թթ.⁶⁷

<i>Տարեթիվ</i>	<i>Շահութաբերություն՝ ըստ ակտիվների,%</i>	<i>Շահութաբերություն՝ կապիտալի,%</i>	<i>ըստ</i>
2005	2.92	13.72	
2006	3.92	17.19	
2007	3.52	15.96	
2008	3.47	15.16	
2009	1.00	4.81	
2010	2.81	12.34	
2011	2.42	12.71	
2012	2.47	14.72	
2013	1.90	12.00	
2014	1.00	6.40	

Հայաստանի բանկային համակարգում հարկումից հետո զուտ շահույթը 2014 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակահատվածի համար կազմել է 27 մլրդ 200 մլն ՀՀ դրամ, ինչը նախորդ ժամանակահատվածի նույն ցուցանիշից ցածր է 41.3 %-ով: Ավելին՝ 2014 թ. ՀՀ 21 առևտրային բանկերից 5-ը կրել են զուտ վնասներ: Համեմատության համար նշենք, որ 2013 թ. ֆինանսական տարին վնասով ավարտել էր միայն 3 առևտրային բանկ:

⁶⁷ Աղյուսակ 9-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:



Գծապատկեր 21. Բանկային համակարգի շահութաբերության դինամիկան՝ ըստ ակտիվների և կապիտալի (2005-2014 թթ.)⁶⁸

2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ բանկային համակարգում գրանցվել է 12.6 մլրդ դրամի շահույթ, որը 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվել է 45 տոկոսով: Այդ նույն ժամանակահատվածում ՀՀ բանկերից 7-ը գրանցել են կորուստներ 8,6 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 10


ՀՀ բանկային համակարգի ձևավորած շահույթը՝ ըստ բաղկացուցիչների 2010-2015 թթ.⁶⁹ (մլրդ դրամ)

Իսկություն	տոկոսային եկամուտ	տոկոսային ծախս	ոչ տոկոսային եկամուտ	ոչ տոկոսային ծախս	մասնհանում	հետադարձում	ընդամենը եկամուտներ	ընդամենը ծախսեր	շահույթ
2010	138	-56.5	39.4	-72	-40.4	34.5	211.9	-168.9	43
2011	179.1	-77.7	45.9	-84.1	-46	37	262	-207.8	54.2
2012	226.6	-107.6	48.4	-97.4	-77.6	62.3	337.3	-282.6	54.7
2013	265.2	-133.3	54.9	-107	-63.5	45.2	365.3	-303.8	61.5
2014	288.7	-148.4	69.8	-120.15	-103.6	50.3	408.8	-372.15	36.65
2015	157.2	-93.8	33.1	-58.9	-24.9	0	190.3	-177.6	12.7

⁶⁸ Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից՝ ԿԲ-ի կողմից հրապարակված տվյալների հիման վրա, մեթոդաբանությունը՝ ըստ Թառույան Գ., Բանկերի ֆինանսական վերլուծության հիմունքներ, ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003, էջ 25:

⁶⁹ Աղյուսակ 10-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:


2014 թ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի ակտիվների միջին եկամտաբերությունը կազմել է 0.9 %, ինչը 2 անգամ փոքր է նախորդ ժամանակահատվածի նույն ցուցանիշից: Սա նշանակում է, որ ակտիվների ծավալի աճը համաչափ չէ շահույթի աճին: Բանկային ոլորտի կապիտալի միջին եկամտաբերության գործակիցը ևս արձանագրել է անկում՝ կազմելով 5.7 %, ինչը զգալիորեն ցածր է տնտեսության այլ ոլորտների համանման ցուցանիշներից:



Գծապատկեր 22. Բանկային համակարգի ծախսերի տեսակարար կշիռը եկամուտների նկատմամբ 2010-2015 թթ.

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 23-ից, վերջին 5 տարիների ընթացքում բանկերի ծախսային հոդվածների աճի տեմպերը գերազանցել են եկամտային հոդվածների աճի տեմպին: Այս ամենն իր հերթին բերել է կապիտալի շահութաբերության անկման:

Առանձին դիտարկելով վարկային պորտֆելի մասսհանումների և հետադարձումների դինամիկան՝ արձանագրում ենք, որ վերջին 5 տարիների ընթացքում մասսհանումները միշտ գերազանցել են հետադարձումները:



Գծապատկեր 23. Բանկային համակարգի մասհանումները և հետադարձումները 2010-2015 թթ. (մլրդ դրամ)

Դիտարկված ժամանակահատվածում մասհանումները գերազանցել են հետադարձումները ընդամենը 127 մլրդ դրամով կամ միջինը տարեկան 25.4 մլրդ ՀՀ դրամով, որը կազմում է տվյալ ժամանակահատվածի միջին կապիտալի 6 տոկոսը: Սա ահռելի մեծ թիվ է: Այս ամենը նորից վկայում է վարկային պորտֆելի որակի անկման մասին, որն արդյունք է կառավարման մարմինների՝ վերջին տարիներին ցուցաբերած ագրեսիվ վարկավորման: Այս ամենը ուղեկցվել է բանկային կապիտալի կառավարման արդյունավետության նվազմամբ: 2004 թվականին բանկային համակարգը ապահովել է կապիտալի 13.7 տոկոս եկամտաբերություն, որը ժամանակի ընթացքում նվազել է և 2015 թվականին կազմել ընդամենը 6.4 %, որը ցածր է 2004 թվականին գրանցված արդյունքից 7.3 տոկոսային կետով:

Միջին վիճակագրական շեղումների հիման վրա ուսումնասիրելով ՀՀ բանկային համակարգի շահութաբերության դինամիկան՝ տեսնում ենք նրա նվազող միտումը:

Բանկային համակարգի հիմնական ցուցանիշները 2007-2014 թթ.

Տարեթիվ	Ակտիվներ, մլրդ դրամ	Տարեկան աճի տեմպ, %	Պարտավորություններ, մլրդ դրամ	Տարեկան աճի տեմպ, %	Վարկեր մլրդ դրամ	Տարեկան աճի տեմպ, %	Կապիտալ մլրդ դրամ	Տարեկան աճի տեմպ, %
2007	772		604		443		168	
2008	1022	32	789	31	639	44	233	39
2009	1343	31	1057	34	780	22	286	23
2010	1553	16	1225	16	1001	28	328	15
2011	2044	32	1673	37	1337	34	371	13
2012	2395	17	1991	19	1620	21	404	9
2013	2939	23	2470	24	1854	14	469	16
2014	3411	16	2922	18	2272	23	489	4
Միջինը		24		25		26		16


Այս զարգացումները և շահութաբերության հետագա անկումը բանկային համակարգի համար լուրջ խնդիրներ կստեղծեն: Ցածր շահութաբերությունը կարող է հանգեցնել ոլորտից կապիտալի արտահոսքի և նոր ներդրումների ծավալի կրճատման: Բավարար չափով կապիտալով ապահովված չլինելը կարող է լրացուցիչ ռիսկեր ստեղծել առանձին բանկերի և ողջ բանկային համակարգի համար:

Մյուս կողմից, սա կարող է ստեղծել բանկերի համար լրացուցիչ դժվարություններ՝ բավարարելու կենտրոնական բանկի՝ կապիտալի նվազագույն մեծության նոր պահանջները (ուժի մեջ է մտնում 2017 թ. հունվարի 1-ից⁷¹):

2015 թ. հունիսի դրությամբ 21 առևտրային բանկերից միայն 4-ի ընդհանուր կապիտալի մեծությունն է բավարարում սահմանված 30 մլրդ դրամի նվազագույն սահմանաչափը:

⁷⁰ Աղյուսակ 11-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:

⁷¹ Ըստ հեղինակի՝ այս փոփոխությունը կհանգեցնի շուրջ 8-12 բանկերի կոնսոլիդացման (2015 թ. տարեվերջի դրությամբ արդեն առկա է երկու կոնսոլիդացում): Այս պահի դրությամբ 7 բանկ է բավարարում նվազագույն կապիտալի՝ 2017 թվականին ուժի մեջ մտնող պահանջը:



Գծապատկեր 24. Բանկային համակարգի հիմնական ցուցանիշների փոփոխման դինամիկան 2007-2014 թթ.⁷²

Այսպիսով, կապիտալի համարժեքության ապահովման մեջ ՀՀ բանկային համակարգում նկատվում է կապիտալի համարժեքության մակարդակի շարունակական նվազման միտում: Դա մի կողմից պայմանավորված է ՀՀ առևտրային բանկերի կողմից վարկային ռիսկի կառավարման արդյունավետության անկմամբ, և մյուս կողմից՝ շուկայական փոխարժեքների տատանման արդյունքում առևտրային բանկերի կողմից շարունակական վնասներ կրելու հանգամանքներով: Նկարագրված իրավիճակը առևտրային բանկի կապիտալի համարժեքությունը ինքնին դարձնում է խոցելի շուկայական տատանումների պայմաններում:

Նկարագրված ռիսկերից խուսափելու միջազգային փորձը վկայում է՝ անհրաժեշտ է, որ բանկերը ապահովեն նորմատիվային կապիտալից ավելի բարձր կապիտալի համարժեքության մակարդակ, որի մեծությունը սթրեսային պայմաններում պետք է ապահովի բանկի ֆինանսական կայունությունը⁷³:

Միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվում են նաև սահմանափակումների համակարգեր, որոնք դրվում են բանկերի մի շարք

⁷² Գծապատկեր 24-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր, ֆինանսական կայունության և ֆինանսական համակարգի զարգացումների վերաբերյալ հաշվետվությունների տվյալներ):

⁷³ St'u Basle Committee on Banking Supervision. Peer review of supervisory authorities. Implementation of stress testing principles. 2012, էջ 4, Basle Committee on Banking Supervision. Countercyclical capital buffer proposal. 2010, էջ 4:

գործառույթների վրա՝ ելնելով տնտեսական իրավիճակից: Այդպիսի սահմանափակումներն են՝ դիվիդենդների վճարումների սահմանափակում, աշխատակիցների լրավճարների և պարգևավճարների տրամադրում:

Ֆինանսատնտեսական ճգնաժամը ցույց տվեց, որ նույնիսկ ճգնաժամի պայմաններում բանկերը շարունակեցին վճարել դիվիդենդներ՝ չնայած նրանց կրած ֆինանսական կորուստներին: Որպեսզի ՀՀ բանկերը կարողանան դիմակայել ֆինանսական վիճակի վատթարացման պայմաններում կապիտալի ապահովման մարտահրավերին, անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանափակել շահութաբաժինների վճարումը, որը հանգեցնում է կապիտալի համարժեքության և իրացվելիության նվազման:

Այս հիմնախնդրի լուծման համար կենտրոնական բանկին առաջարկվում է օրենսդրորեն՝


- սահմանել կապիտալի համարժեքության պահպանման բուֆեր,
- սահմանափակել շահութաբաժինների, լրավճարների, պարգևավճարների

իրականացումը, երբ բանկը հատում է սահմանված հակացիկլային բուֆերը:

Այսպիսով, նշված առաջարկության կիրառման պայմաններում բանկերը կարող են իրենց ծավալած գործունեության արդյունքում սպառել կապիտալի բուֆերը և աշխատել կապիտալի նորմատիվային մակարդակի և սահմանված բուֆերի միջակայքում, սակայն դա չի կրի շարունակական բնույթ, քանի որ կապիտալի բուֆերի սահմանման նպատակն է սովորական պայմաններում ապահովել կապիտալի այնպիսի մակարդակ, որը սթրեսային պայմաններում չի նվազի նորմատիվային մակարդակից ցածր՝ ապահովելով բանկի կայուն ֆինանսական վիճակը⁷⁴: Բանկերի կապիտալի բուֆերի խախտումները սովորական պայմաններում սահմանափակելու նպատակով հարկավոր կլինի օրենսդրորեն սահմանել նաև խելամիտ ժամանակահատված՝ բանկի կողմից կապիտալի բուֆերի մակարդակը ապահովելու համար:

⁷⁴ Տե՛ս Basle Committee on Banking Supervision. Basel III: A global regulatory framework for more resilient banks and banking systems. 2010, էջ 54-55:

Տե՛ս նաև Basle Committee on Banking Supervision. International convergence of capital measurement and capital standards. 2004, էջ 176:



Գծապատկեր 25. Բանկի կապիտալի համարժեքության ապահովման երկմակարդակ համակարգը⁷⁵

⁷⁵ Գծապատկեր 25-ը կառուցվել է հեղինակի կողմից:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերը մշակում և կիրառում են ֆինանսական հսկողության մեխանիզմներ՝ որպես բանկի ներքին հսկողության համակարգի կարևորագույն բաղկացուցիչ մաս: Դրանք մշակվում են ՀՀ օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերի և բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան՝ նպատակ ունենալով բացահայտելու և կառավարելու բանկային գործունեությանը բնորոշ ֆինանսական ռիսկերը՝ նվազեցնելով դրանց հնարավոր ազդեցությունը բանկի գործունեության վրա:

Բանկի ֆինանսական հսկողության մեխանիզմները սովորաբար նկարագրվում են բանկի կարգերում, ընթացակարգերում, կանոնակարգերում և այլ ներքին իրավական ակտերում:

Մշակված ներքին հսկողության համակարգը և դրա մաս կազմող ֆինանսական հսկողության համակարգը բանկի ղեկավարության կողմից պետք է պարբերաբար վերանայվեն՝ դրանց արդիականությունը և կառավարվող ռիսկերի դեմ արդյունավետությունն ապահովելու համար:

Ֆինանսական հսկողության մեխանիզմները ՀՀ առևտրային բանկերում ներառում են՝

1. բանկի գործունեության պարբերական ուսումնասիրություն և գնահատում բանկի կառավարման մարմինների կողմից.
2. ներքին սահմանաչափերի սահմանում և պահպանում.
3. որոշումների կայացման իրավասության բաշխում.
4. աշխատանքային պարտականությունների բաժանում, շահերի բախման կանխարգելում.
5. իրականացվող գործարքների կրկնակի ստուգման մեխանիզմների առկայություն.
6. տարբեր տվյալների և գրառումների խաչաձև ստուգում.

7. հայտնաբերված թերությունների, խախտումների և դրանց հետևանքով առաջացած անցանկալի հետևանքների պատշաճ և ժամանակին վերացում, անհրաժեշտության դեպքում պատասխանատվության միջոցների կիրառում:

Առևտրային բանկերը ներդրում են ռիսկերի կառավարման ընթացակարգեր, որոնք ներառում են հնարավոր ռիսկերի արագ բացահայտման և դրանց բացասական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը նպատակաուղղված միջոցառումներ:

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման համար բանկերն օգտագործում են պոտենցիալ վարկառուների գնահատման մեթոդներ և սահմանում տարբերակված տոկոսադրույքներ՝ ըստ վարկառուի վարկունակության և վարկի՝ գրավով ապահովվածության աստիճանի: Բանկերն օգտագործում են բիզնեսի ռիսկի գնահատման (BRR), վարկառուի ապահովվածության որակի գնահատման (FRR), վարկառուի սնանկացման հավանականության գնահատման և այլ տիպի մոդելներ:

ՀՀ առևտրային բանկերում *իրացվելիության ռիսկի* կառավարման կարևորագույն բաղադրիչը իրացվելիության նորմատիվների պահպանումն է՝ սահմանված կենտրոնական բանկի կողմից:

Առևտրային բանկերում օրական, շաբաթական և ամսական կտրվածքով դիտարկվում են իրացվելիության վրա ազդող ցուցանիշների շարժերը, իրականացվում սթրես թեստեր, որոնց ժամանակ դիտարկվում է տարբեր անբարենպաստ իրավիճակների հնարավոր ազդեցությունը բանկի իրացվելիության վրա:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարման ժամանակ ուշադրություն է դարձվում տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների տեղաբաշխման մարժային, որը պետք է համապատասխանի բանկի կողմից սահմանված որոշակի սահմանաչափերի:


Արտարժույթային ռիսկի կառավարումը հիմնականում իրականացվում է արտարժույթային բաց դիրքերի վերլուծությամբ՝ ըստ բոլոր արժույթների և առանձին արժույթների, սահմանվում են դրանց առավելագույն սահմանաչափերը, անմիջապես իրականացվում է վերահսկողություն, ճեղքվածքի վերացման համար կիրառվում են հեջավորման գործիքներ:

3.1. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարկային ռիսկը բանկային համակարգի կարևորագույն ֆինանսական ռիսկերից է, որին ենթարկվում է բանկային ակտիվների գերակշիռ մասը: Այն մյուս կողմից բանկի հետ կնքված պայմանագրի պայմանների խախտման հավանականությունն է, որը բանկի շահույթի և կապիտալի կամ միայն կապիտալի վրա ունենում է բացասական ազդեցություն:

Բանկերը պետք է ունենան վարկային ռիսկի գնահատման և կառավարման գործող արդյունավետ համակարգ, որը թույլ կտա բացահայտել հնարավոր ռիսկերը, գնահատել և չեզոքացնել դրանց հնարավոր բացասական ազդեցությունը բանկի գործունեության վրա: Սա կարևոր նախապայման է առանձին բանկերի և ողջ բանկային համակարգի բնականոն գործունեության համար:

Վարկային ռիսկի կառավարման արդյունավետության համար նախ անհրաժեշտ է վերլուծել հնարավոր վարկառուների վճարունակությունը՝ հնարավորինս նվազեցնելով ռիսկային վարկերի տրամադրումը, ստուգել գրավով և վարկի ապահովման այլ միջոցներով ապահովվածությունը:



Գծապատկեր 26. ՀՀ բանկային համակարգի չափսատող վարկերի մասնաբաժինը 2005-2015 թթ⁷⁶.

⁷⁶ Գծապատկեր 26-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:


Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի կառուցվածքը՝ ըստ ճյուղերի
և տարիների (2000-2014թթ.)⁷⁷

Տարեթիվ	Վարկեր արդյունաբերությանը (մլրդ դրամ)	Արդյունաբերական արտադրանքի ծավալը (մլրդ դրամ)	Տնտեսության ճյուղի վարկավորման կշիռը, %	Վարկեր առևտրի ոլորտին (մլրդ դրամ)	Առևտրի շրջանառությունը (մլրդ դրամ)	Տնտեսության ճյուղի վարկավորման կշիռը, %	Վարկեր շինարարությանը (մլրդ դրամ)	Շինարարության ծավալը (մլրդ դրամ)	Տնտեսության ճյուղի վարկավորման կշիռը, %	Վարկեր գյուղատնտեսությանը (մլրդ դրամ)	Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը (մլրդ դրամ)	Տնտեսության ճյուղի վարկավորման կշիռը, %
2000	37	301	12.3	13	494	2.6	2	101	1.9	10	281	3.7
2001	32	309	10.3	13	592	2.3	2	110	2.2	9	351	2.7
2002	32	341	9.4	16	695	2.2	3	167	2.0	8	378	2.1
2003	30	426	7.0	22	865	2.5	5	238	2.0	8	410	2.0
2004	36	535	6.6	31	973	3.2	5	276	1.9	9	504	1.7
2005	39	652	6.0	42	1,072	3.9	8	435	1.8	11	493	2.3
2006	39	645	6.1	50	1,086	4.6	12	644	1.8	14	556	2.6
2007	56	717	7.9	87	1,422	6.1	22	671	3.3	22	634	3.5
2008	86	739	11.6	132	1,677	7.9	39	859	4.6	36	628	5.8
2009	147	669	22.0	145	1,573	9.2	54	580	9.3	44	552	8.0
2010	204	824	24.7	185	1,810	10.2	75	589	12.7	52	637	8.2
2011	269	999	26.9	276	2,050	13.5	98	505	19.5	73	795	9.2
2012	374	1,122	33.3	321	2,196	14.6	100	479	20.9	92	842	10.9
2013	365	1,242	29.4	352	2,331	15.1	109	453	24.1	103	919	11.2
2014	429	1,291	33.2	386	2,403	16.1	124	433	28.7	128	993	12.8


Վարկային ռիսկի նվազեցման կարևոր նախապայմաններից է կենտրոնացվածության փոքրացումը: Բանկերը պետք է ապահովեն վարկային պորտֆելի դիվերսիֆիկացում ըստ առանձին տնտեսվարողների, տնտեսության

⁷⁷ Աղյուսակ 12-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները, տե՛ս www.armstat.am

ճյուղերի, տարածաշրջանների և այլն: Անհրաժեշտ է ապահովել վարկային պորտֆելի առավելագույն դիվերսիֆիկացիա: Մինչև 2008-2009 թթ. ՀՀ բանկային համակարգում նկատվում էր կենտրոնացվածություն շինարարության ճյուղում, ինչը ճգնաժամի տարիներին շինարարության ոլորտի անկման հետևանքով բանկային համակարգի համար խնդիրներ ստեղծեց: Վերջին տարիներին նկատվում է չաշխատող վարկերի մասնաբաժնի ավելացում, ինչը խոսում է վարկային ռիսկի անարդյունավետ կառավարման մասին: 2015 թ. ապրիլին չաշխատող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի մեջ կազմել է 9.1 %, ինչը շուրջ 1.5 անգամ բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից (6.1 %):




Գծապատկեր 27. Արդյունաբերության ՀՆԱ և արդյունաբերության ճյուղի վարկավորման դինամիկան 2000-2014 թթ.⁷⁸



Գծապատկեր 28. Առևտրի ՀՆԱ և առևտրի ճյուղի վարկավորման դինամիկան 2000-2014 թթ.


⁷⁸ Գծապատկերներ 27-30-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները, տե՛ս www.armstat.am:

Դիտարկելով տնտեսության ոլորտների զարգացման դինամիկան վերջին տարիների ընթացքում և համադրելով այն տվյալ ոլորտներին տրամադրված վարկային ծավալների հետ՝ բացահայտում ենք, որ շինարարության ոլորտում գրանցվել է անկանոնություն:



Գծապատկեր 29. Շինարարության ՀՆԱ և շինարարություն ճյուղի վարկավորման դինամիկան (2000-2014թթ.)

Մասնավորապես, 2008 թվականից սկսած՝ տնտեսության շինարարության ոլորտում անկում է նկատվում, և ոլորտի կշիռը ՀՆԱ-ում թե՛ հարաբերական, թե՛ բացարձակ արժեքով նվազել է: Մինչև ֆինանսատնտեսական ճգնաժամը շինարարությունը ապահովում էր 859 մլրդ դրամ ՀՆԱ, սակայն սկսած 2008 թվականից՝ այն անկում ապրեց, և 2014 թվականի ցուցանիշը կազմում է ընդամենը 433 մլրդ դրամ ՀՆԱ, այսինքն՝ շուրջ երկու անգամ պակաս՝ համեմատած 2008 թվականին գրանցված արդյունքի հետ:



Գծապատկեր 30. Գյուղատնտեսության ՀՆԱ և գյուղատնտեսության ճյուղի վարկավորման դինամիկան 2000-2014 թթ.

Սակայն նույն ժամանակահատվածում, չնայած շինարարության ծավալների անկմանը և շինարարության ոլորտում առկա բազմաթիվ խնդիրների բացահայտմանը, բանկերը շարունակել են ակտիվորեն ֆինանսավորել շինարարության ոլորտը՝ այդ ոլորտում մեծացնելով վարկային ներդրումներն ավելի քան երեք անգամ՝ դրանք 39 մլրդ դրամից հասցնելով մինչև 124 մլրդ դրամի:

Աղյուսակ 13

Շինարարության ՀՆԱ և շինարարության ճյուղի վարկավորման դինամիկան 2000-2014 թթ.⁷⁹

Տարեթիվ	Վարկեր շինարարությանը (մլն դրամ)	Շինարարության ծավալը (մլն դրամ)	Վարկեր շինարարությանը, աճի տեմպ (%)	Շինարարության աճի տեմպ (%)
2000	1,954	100,990		
2001	2,443	110,394	25	9
2002	3,275	166,628	34	51
2003	4,805	237,844	47	43
2004	5,287	276,403	10	16
2005	7,876	435,125	49	57
2006	11,541	643,828	47	48
2007	22,034	671,029	91	4
2008	39,481	858,680	79	28
2009	54,132	579,741	37	-32
2010	74,795	588,808	38	2
2011	98,224	504,825	31	-14
2012	100,093	479,416	2	-5
2013	109,408	453,449	9	-5
2014	124,194	433,209	14	-4

Պարզ է, որ սա բանկերի կառավարման մարմինների կողմից իրականացված ոչ հեռատես, անարդյունավետ քաղաքականության արդյունք է, երբ վարկավորման որոշումներ կայացնելիս հաշվի չեն առնվել տվյալ տնտեսության ոլորտում առկա իրավիճակը, ոլորտի զարգացման հեռանկարները:


⁷⁹ Աղյուսակ 13-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները, տե՛ս www.armstat.am:

3.2. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Շուկայական ռիսկը բնորոշվում է որպես բանկի կապիտալի շուկայական գների տատանման բացասական ազդեցության հավանականություն:

Որպես շուկայական գներ՝ հասկացվում են տոկոսադրույքները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների գները և այլն: Սովորաբար շուկայական ռիսկը տարանջատում են երկու կարևորագույն բաղադրիչի՝ տոկոսադրույքի ռիսկի և արտարժույթային ռիսկի:

Տոկոսադրույքի ռիսկը բնութագրում է շուկայում տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով հնարավոր ռիսկերը: ՀՀ բանկային համակարգը, համարվելով բարձր մրցակցային ոլորտ, ստիպում է բանկերին առաջարկել շուկայական տոկոսադրույքներին մոտ տոկոսադրույքներ:




Գծապատկեր 31. ՀՀ դրամով ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքը 2000-2015 թթ.⁸⁰

Միևնույն ժամանակ բանկերի ակտիվները և պարտավորությունները ներառում են նաև ֆինանսական գործիքներ, որոնց տոկոսադրույքները ենթակա են փոփոխման շուկայում փոփոխությունների գրանցման պայմաններում: Բանկերը հնարավորինս պետք է նվազեցնեն այդ փոփոխությունների բացասական ազդեցությունը իրենց գործունեության վրա:

⁸⁰ Գծապատկերներ 31-ի և 32-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր, ֆինանսական կայունության և ֆինանսական համակարգի զարգացումների վերաբերյալ հաշվետվությունների տվյալներ):

Գծապատկեր 32-ում ներկայացված են ՀՀ բանկային համակարգի՝ ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով վարկերի և ավանդների միջին տոկոսադրույքները: Վերջին տարիներին նկատվում է ավանդների և վարկերի տոկոսադրույքների բարձրացման և սպրեդի նվազման միտում: Այս միտումը հատկապես նկատելի է ՀՀ դրամով ավանդների և վարկերի դեպքում: Օրինակ՝ 2015 թ. հունիսին 2014 թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ դրամային վարկերի միջին տոկոսադրույքը նվազել է 0.89 տոկոսային կետով, իսկ դրամով ավանդների միջին տոկոսադրույքը՝ աճել 4.21 տոկոսային կետով: Դոլարով ավանդների միջին տոկոսադրույքն աճել է 0.31 տոկոսային կետով, իսկ վարկերի միջին տոկոսադրույքը՝ նվազել 0.57 տոկոսային կետով⁸¹:



Գծապատկեր 32. ԱՄՆ դոլարով ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքը 2000-2015 թթ.

Արտարժույթային ռիսկը արտարժույթի փոխարժեքի հնարավոր փոփոխությունների հետևանքով առաջացող կորուստների ռիսկն է:

Այն մեծ է հատկապես զարգացող երկրներում, որտեղ ազգային արժույթի նկատմամբ կա որոշակի անվստահություն: ՀՀ բանկերը արտարժույթով ներգրավում են ավանդներ, տրամադրում վարկեր, ձեռք բերում օտարերկրյա արժեթղթեր և իրականացնում այլ գործարքներ: Բնական է, որ նմանատիպ արտարժույթային

⁸¹ Տե՛ս ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր:

ակտիվների և պարտավորությունների ձևավորման պայմաններում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունը կարող է զգալի ազդեցություն ունենալ բանկի գործունեության վրա և առաջացնել որոշակի ռիսկեր:

Այս խնդիրը արդիական է նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ բանկային համակարգի թե՛ ակտիվների, թե՛ պարտավորությունների մեծ մասն արտարժույթով է: Սա ստեղծում է լրացուցիչ ռիսկեր ինչպես առանձին բանկերի, այնպես էլ ընդհանուր բանկային համակարգի համար:

ՀՀ բանկային համակարգի վերահսկիչ մարմինը և առևտրային բանկերի կառավարման մարմինները պետք է մշակեն արդյունավետ ռազմավարություն՝ արտարժույթի փոխարժեքի տատանումների հնարավոր ռիսկերից բանկերին ազատելու համար: Հակառակ պարագայում վտանգվում են առանձին բանկերի ֆինանսական վիճակը և ֆինանսական համակարգի կայունությունը:

Ընդունված է առանձնացնել արտարժույթային երկար, կարճ և փակ դիրքեր: Եթե բանկի ակտիվները արտարժույթով գերազանցում են նրա՝ արտարժույթով պարտավորություններին, ապա բանկն ունի երկար արտարժույթային դիրք:

Հակառակ պարագայում, երբ արտարժույթով պարտավորություններն են գերազանցում արտարժույթով ակտիվներին, բանկն ունի կարճ դիրք:

Եթե արտարժույթով ակտիվները և պարտավորությունները հավասար են, ապա արտարժույթային դիրքը կոչվում է փակ:

Բնական է, որ եթե արտարժույթի փոխարժեքն աճի, ապա կարճ դիրք ունեցող բանկերը կունենան կորուստներ, երկար դիրք ունեցողները՝ օգուտներ, և հակառակը, և միայն փակ դիրք ունեցող բանկերում արտարժույթի տատանումները ազդեցություն չեն ունենա:


Արտարժույթի ռիսկի կառավարումն առանցքային նշանակություն ունի նաև ՀՀ բանկային համակարգում: Սա պայմանավորված է թե՛ դոլարիզացիայի բարձր մակարդակով, թե՛ ազգային արժույթի անկայունությամբ:

2014 թ. տարեվերջին դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի կտրուկ տատանումներն ընդգծեցին համակարգում առկա խնդիրները: Արտարժույթի կտրուկ տատանման արդյունքում, որը գրանցվեց 2014 թվականի դեկտեմբերին, թեև

ընդհանուր բանկային համակարգն ունեցավ 3.9 մլրդ դրամի օգուտ, արտարժույթի վերագնահատման արդյունքում միայն 9 բանկ ունեցավ օգուտ, իսկ մնացած 13 բանկերը կրեցին վնասներ⁸²:

Բերված գծապատկերը ցույց է տալիս, որ վերջին 11 տարիների ընթացքում բանկերը շարունակաբար կրել են արտարժույթի վերագնահատումից առաջացող կորուստներ, և միայն վերջին տարում բանկային համակարգում գրանցվել է եկամուտ արտարժույթի վերագնահատումից, որը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանմամբ: Սա փաստում է, որ ՀՀ բանկերը չեն կարողանում իրականացնել արդյունավետ արտարժույթային դիրքի կառավարում, որի հետևանքով էլ շարունակաբար կրում են կորուստներ:

Այն, որ բանկային համակարգն առավել զգայուն է արտարժույթի փոխարժեքի տատանումների նկատմամբ, պայմանավորված է մի քանի հանգամանքով: Նախ, արտարժույթային բաց դիրք ունենալու պարագայում առանձին բանկեր դիմում են փոխարժեքի անբարենպաստ տատանումների արդյունքում վնասներ կրելու ռիսկի:



Գծապատկեր 33. ՀՀ բանկային համակարգի՝ արտարժույթի առքուվաճառքից և վերագնահատումից ստացված եկամուտները 2003-2014 թթ.⁸³

⁸² ՀՀ կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2014», 2015 թ.:

⁸³ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2014», 2015 թ.:

2015 թ. հունիսի 30-ի դրությամբ դրամով ներգրավված ավանդները կազմում էին ՀՀ բանկային համակարգի ավանդների ընդհանուր ծավալի (ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդներ) միայն 30.3 տոկոսը: Մնացած 69.7 տոկոսը կազմում են արտարժույթով ներգրավված ավանդները:

Համանման պատկեր է վարկերի դեպքում. ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալի միայն 34 %-ն են կազմում դրամային վարկերը: Առանձին բանկերի դեպքում այս ցուցանիշների շեղումն ավելի մեծ է, ինչը վերջիններիս խիստ խոցելի է դարձնում փոխարժեքի տատանումների նկատմամբ:

Դոլարիզացիայի բարձր մակարդակը բանկերի վրա ազդում է նաև անուղղակիորեն: Ռեզիդենտներին դոլարով տրամադրված վարկերի մեծ մասը (շուրջ 71 %) կազմում են ձեռնարկություններին տրամադրված վարկերը:

Լինելով ՀՀ ռեզիդենտ՝ ձեռնարկություններն իրենց եկամտի մեծ մասը ստանում են դրամով, իսկ փոխարժեքի բարձրացումն այլ հավասար պայմաններում բերում է արտարժույթով արտահայտված եկամուտների նվազման: Սա արտարժույթային ռիսկով պայմանավորված վարկային ռիսկ է, և հատկապես արտարժույթի անսպասելի տատանումները կարող են շատ արագ և անցանկալի ազդեցություն թողնել վարկային պորտֆելի աշխատունակության վրա:

2015 թ. հունիսի 30-ի դրությամբ ռեզիդենտ ձեռնարկությունների վարկերի միայն 15.5 % են կազմում դրամային վարկերը: Ընդ որում, եթե մինչև 2007 թ. նկատվում էր դրամային վարկերի մասնաբաժնի աճ, և 2007 թ. վարկերի գրեթե 50 %-ը դրամով էր, ապա 2008 թ.-ից ի վեր այդ մասնաբաժինը գնալով նվազում է, իսկ վարկերի ընդհանուր ծավալի աճը հիմնականում տեղի է ունենում արտարժույթային վարկերի ծավալի ավելացմամբ: 2015 թ. հունիսին 2008 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ առևտրային բանկերի՝ ձեռնարկություններին արտարժույթով տրամադրված վարկերը աճել են շուրջ 7.4 անգամ, իսկ դրամային վարկերի ծավալն աճել է ընդամենը 1.68 անգամ:

Առևտրային բանկերի վարկերը ռեզիդենտ ձեռնարկություններին 2000-2015 թթ.⁸⁴

Տարեթիվ	Դրամով վարկեր (մլրդ դրամ) (1)	Ընդհանուր կշիռ (1)/ ((1)+ (2)),%	Արտարժույթով վարկեր (մլրդ դրամ) (2)	Ընդհանուր կշիռ (2)/ ((1)+ (2)),%
2000 թ.	11.61	19.1	49.33	80.9
2001 թ.	11.72	22.4	40.51	77.6
2002 թ.	15.53	25.2	45.98	74.8
2003 թ.	22.68	37.4	37.92	62.6
2004 թ.	27.07	35.6	48.87	64.4
2005 թ.	40.62	41.7	56.86	58.3
2006 թ.	54.23	49.1	56.26	50.9
2007 թ.	79.31	43.6	102.49	56.4
2008 թ.	120.23	43.1	158.51	56.9
2009 թ.	124.00	32.4	258.44	67.6
2010 թ.	139.18	27.5	366.50	72.5
2011թ.	153.60	21.6	557.19	78.4
2012 թ.	158.76	17.0	776.91	83.0
2013 թ.	182.33	18.4	808.71	81.6
2014 թ.	175.48	14.9	1,005.61	85.1
2015 թ.	174.06	15.6	945.04	84.4


2014 թվականին բանկային համակարգի արտարժույթային կարճ դիրքը կազմել է 25.8 մլրդ դոլար, որը հավասար է ընդհանուր նորմատիվային կապիտալի 5.7 %-ին⁸⁵:

2015 թ. ապրիլին չաշխատող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի մեջ կազմել է 9.1 %, ինչը շուրջ 1.5 անգամ բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից (6.1 %) (տե՛ս աղյուսակ 15):

2015 թվականից սկսած՝ վարկային պորտֆելի որակի կտրուկ նվազումը պայմանավորված է ՀՀ դրամի և արտարժույթի՝ 2014 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին գրանցած կտրուկ տատանումներով, որի արդյունքում ՀՀ դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվեց շուրջ 20 տոկոսային կետով:

⁸⁴ Աղյուսակ 14-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր, ֆինանսական կայունության և ֆինանսական համակարգի զարգացումների վերաբերյալ հաշվետվությունների տվյալներ):

⁸⁵ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2014», 2015 թ.:



Գծապատկեր 34. Ռեզիդենտ ձեռնարկություններին տրամադրված վարկերի կառուցվածքը՝ ըստ արժույթի (2000-2015թթ.)⁸⁶

Այս ամենը ՀՀ ձեռնարկություններում առաջացրեց վճարունակության հիմնախնդիրներ. սրանք, հիմնականում լինելով ներմուծող ընկերություններ, իրենց արտաքին առևտուրը իրականացնում են արտարժույթով, իսկ ներքին շուկայում հիմնական եկամուտները ձևավորում են դրամով:

Դրամի արժեզրկումը ընկերություններում առաջացրեց երկու խնդիր.

- 1) ՀՀ դրամով արտահայտված վարկերի մարումների գումարները մեծացան.
- 2) արտարժույթի թանկացման հետևանքով թանկացավ ներմուծումը:

Բնականաբար, սա չէր կարող իր բացասական ազդեցությունը չունենալ վարկային պորտֆելի որակի վրա: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 15-ից, արտարժույթային ճգնաժամն անմիջապես իր ազդեցությունն ունեցավ բանկերի՝ հաջորդող ամսվա վարկային պորտֆելի որակի վրա:

⁸⁶ Գծապատկեր 34-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր, ֆինանսական կայունության և ֆինանսական համակարգի զարգացումների վերաբերյալ հաշվետվությունների տվյալներ):

2015 թ. հունվարին չաշխատող վարկերի տեսակարար կշիռը մեծացավ 1,4 տոկոսային կետով, որի արդյունքում չաշխատող վարկերի կշիռը ընդհանուր վարկերում կազմեց 8,5 տոկոս և շարունակեց բարձրանալ հաջորդող ամիսներին:

Աղյուսակ 15

Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում 2014-2015 թթ⁸⁷

Ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշները բանկային համակարգի համար (արտահայտված տոկոսներով)	Չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր, %
2014 սեպտ.	6.6
2014 հոկտ.	6.7
2014 նոյ.	6.9
2014 դեկտ.	7
2015 հունվ.	8.4
2015 փետր.	8.9
2015 մարտ	8.3
2015 ապր.	9.1
2015 մայ.	9.1
2015 հուն.	9.2
2015 հուլ.	8.8
2015 օգոս.	8.7

Այսպիսով, արտարժույթային տատանումներով պայմանավորված վարկային ռիսկի կառավարումը պահանջում է՝

- ռիսկի՝ ժամանակին բացահայտում, չափում և անընդհատ հսկողություն,
- կապիտալի բավարար մակարդակ՝ տվյալ ռիսկից բխող բացասական հետևանքներին դիմակայելու համար:

«Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններով»⁸⁸ սահմանվում է, որ բանկերը պարտավոր են ներդնել արտարժույթային ռիսկի չափման համակարգեր՝ արտարժույթային տատանումներից բխող ռիսկերը սահմանափակելու համար, սակայն ժամանակը ցույց տվեց, որ ո՛չ 2009 թվականին, ո՛չ 2014 թվականի

⁸⁷ Աղյուսակ 15-ի և 16-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները:

⁸⁸ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհուրդ, 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-Ն որոշում:

վերջում արտարժույթի սթրեսային տատանումների բացասական ազդեցությունը չկանխարգելվեց բանկային համակարգի կողմից:

Աղյուսակ 16

Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում 2008-2009 թթ.

Ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշները	Դեկ. 2008	Հունվ.	Փետր.	Մարտ	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգ. 2009
Չաշխատող վարկեր/ ընդհանուր վարկեր, %	4.3	7.0	8.0	7.7	10.8	10.4	10.2	10.0	10.8

Ամփոփելով արտարժույթային ռիսկի կառավարման վերլուծության արդյունքները ՀՀ բանկային համակարգում՝ բացահայտում ենք հետևյալ երկու հիմնախնդիրների առկայությունը.

1) ՀՀ բանկային համակարգը արտարժույթային բաց դիրքի վերագնահատման արդյունքում տարիներ շարունակ վնասներ է կրել.

2) Բանկային համակարգը դժվար է դիմակայում արտարժույթային տատանումների բացասական ազդեցությանը: Մասնավորապես, փոխարժեքային վերջին երկու ճգնաժամի արդյունքում բանկերը կանգնեցին վարկային պորտֆելի որակի կտրուկ վատթարացման հիմնախնդրի առջև, որը բխում է բանկային համակարգի վարկային պորտֆելի դոլարիզացման շատ բարձր մակարդակից:

Այս հիմնախնդիրների կառավարման արդյունավետության բարձրացման համար առաջարկվում է բանկերում ներդնել արտարժույթային ճգնաժամերի նախնական զգուշացման ցուցիչների համակարգ:

Այս համակարգը մշակվել է ՀՀ բանկային համակարգի համար՝ հաշվի առնելով արտարժույթային ճգնաժամի վերջին դրսևորումները ՀՀ բանկային համակարգում: Այն նպատակադրված է նախնական զգուշացում տալու բանկերին, երբ տնտեսության մեջ և մասնավորապես ֆինանսական համակարգում դիտվում է փոխարժեքային ճգնաժամի հավանականության մեծացում:

Փոխարժեքային ճգնաժամը տնտեսական երևույթների ամբողջություն է, որը հանգեցնում է միջազգային արտարժույթների նկատմամբ ազգային փոխարժեքի կտրուկ արժեզրկմանը:

Բանկի համար շատ կարևոր է նախապես բացահայտել փոխարժեքային ճգնաժամը. բանկն այս կերպ կկարողանա ուժեղ դիրք զբաղեցնել՝ փոխարժեքի տատանումներին դիմակայելու համար: Դա կապահովի բանկի՝

- ✓ կայունությունը,
- ✓ իրացվելիությունը,
- ✓ վճարունակությունը:

Աղյուսակ 17

Նախնական զգուշացման ցուցիչների համակարգ⁸⁹

Նախնական զգուշացման ցուցիչներ	ցուցիչի նկարագրություն
Շուկայական ցուցիչներ	
Բանկային համակարգի՝ բանկերի կողմից կենտրոնացվածություն՝ ըստ արտարժույթային դիրքի (կարճ կամ երկար)	բանկերի մեծամասնությունը (70 տոկոս և ավել) զբաղեցնում է նույն արտարժույթային դիրքը (կարճ կամ երկար)
Չբավարարված արտարժույթային պահանջարկ	Չբավարարված արտարժույթային գործարքները կազմում են տվյալ օրը գրանցված արտարժույթային գործարքների 60 տոկոսը և ավել
Չբավարարված արտարժույթային պահանջարկ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ-ի հարթակում	ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ-ում գրանցված արտարժույթային գործարքների նկատմամբ պահանջարկը մնացած բանկերի կողմից չի բավարարվում
կենտրոնական բանկի կողմից արտարժույթային ինտերվենցիաներ	1. Կենտրոնական բանկը ինտենսիվ կերպով արտարժույթային ինտերվենցիաներ է իրականացնում, սակայն կարողանում է բավարարել միայն պահանջարկի մի մասը, և մի զգալի մաս մնում է չբավարարված: 2. Կենտրոնական բանկը ինտենսիվ կերպով արտարժույթային ինտերվենցիաներ է իրականացնում, բավարարում է արտարժույթային գործարքների նկատմամբ պահանջարկը, սակայն փոխարժեքի արժեզրկման տեմպը չի դանդաղում:
բանկի ներքին ցուցիչներ	
Բանկը չի կարողանում շուկայում փակել հաճախորդների հետ իրականացված արտարժույթային գործարքներից	Բանկը դժվարությունների է հանդիպում և ստիպված է լինում ամբողջովին փակել հաճախորդների հետ սովորական գործունեության արդյունքում իրականացված արտարժույթային գործարքներից ձևավորված բաց դիրքը և

⁸⁹ Համակարգը մշակվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով 2014 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ բանկային համակարգում արձանագրված փոխարժեքային ճգնաժամի դրսևորումները և առանձնահատկությունները:

ձևավորված բաց դիրքը:	պահել բաց դիրք կամ մերժել հաճախորդների կողմից արտարժույթային գործարքներ կնքելու պահանջարկը:
Հաճախորդների պահվածքի փոփոխության ցուցիչներ	
արտարժույթային գործարքների նկատմամբ մեծ պահանջարկ այն հաճախորդներից, որոնք այդպիսի գործարքներ սովորաբար չեն կնքում	Նշված հաճախորդների կողմից ձևավորված արտարժույթի փոխանակման նկատմամբ պահանջարկը մեկ ու կես անգամ գերազանցում է սովորական պահանջարկի մակարդակը:
Ոչ բանկ հաճախորդների կողմից արտարժույթի նկատմամբ ոչ սովորական պահանջարկ	Երբ նկատվում է ոչ բանկ հաճախորդների կողմից արտարժույթի նկատմամբ պահանջարկի կտրուկ մեծացում, կամ բանկում սկսում է նվազել կանխիկ արտարժույթի տեսակարար կշիռը
Հաճախորդների ցպահանջ հաշիվների նվազում	Երբ հաճախորդների բանկային ցպահանջ հաշիվները արտարժույթային գործարքների արդյունքում սկսում են նվազել
Ժամկետային ավանդների խզում	Բանկի հաճախորդները արտարժույթի փոխանակման նպատակով խզում են ազգային արժույթով ժամկետային ավանդները:

Աղյուսակ 17 (շարունակություն)

Կանխատեսվող փոխարժեքային ճգնաժամից առաջ բանկերի ճիշտ դիրք զբաղեցնելը նրանց թույլ կտա ոչ միայն խուսափել փոխարժեքային տատանումների բացասական հետևանքներից, այլև սթրեսային իրավիճակներում շարունակել եկամուտներ ստանալ:

Բանկում տվյալ մոդելի ներդրումը անհրաժեշտություն է առաջացնում, որ ֆինանսական հսկողություն իրականացնող մարմինը օրական ապահովի տվյալ ցուցիչների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: Այս ցուցիչների շարունակական մոնիտորինգը կսահմանափակի բանկի՝ փոխարժեքային տատանումների արդյունքում վնաս կրելու հավանականությունը և բանկի խոցելիությունը:

Արտարժույթային ռիսկից բխող վարկային ռիսկի կառավարման բարելավման նպատակով առաջարկվում է բանկերի ֆինանսական հսկողության համակարգում ներդնել տվյալ ռիսկին հակված խոշոր և միջին վարկառուների մասին ընդհանրական տեղեկատվական համակարգ: Այդ համակարգը, հանդիսանալով ֆինանսական հսկողության իրականացման անբաժանելի մաս, պետք է նվազագույնը ներառի այն ամբողջական տեղեկատվությունը, որը անմիջական կապ ունի ձեռնարկության

ներհոսքերի (եկամուտների) և արտահոսքերի (վարկային մարումներ)՝ տարբեր արժույթներով լինելու հանգամանքի հետ, մասնավորապես պետք է ներառի ներքոբերյալ տեղեկատվությունը, բայց չսահմանափակվի դրանով:

Աղյուսակ 18

Արտարժույթային տատանումների ազդեցությանը ենթարկվածություն ունեցող վարկառուների մասին նվազագույն տեղեկատվության ապահովման ցանկ⁹⁰

✓	ձեռնարկության գործունեության համառոտ նկարագրություն
✓	ձեռնարկության եկամուտների ստացման առաջնային և երկրորդային աղբյուրների մասին տեղեկատվություն
✓	առանձին արժույթներով ստացվող եկամուտների տեսակարար կշիռների մասին տեղեկատվություն
✓	ձեռնարկության կողմից այլ աղբյուրներից ներգրավված վարկերի, փոխառությունների, նրա արժույթների և մարման ժամկետների մասին տեղեկատվություն
✓	վարկառուի՝ տվյալ արժույթով եկամուտների և բանկի կողմից տվյալ արժույթով տրամադրված վարկերի մարումների հարաբերակցության մասին տեղեկատվություն
✓	վարկառուի՝ տվյալ արժույթով եկամուտների և բանկի՝ տվյալ արժույթով և այլ վարկատուների կողմից տրամադրված վարկերի մարումների հարաբերակցության մասին տեղեկատվություն
✓	հաշվետվությունների համակարգ, որը կտրամադրվի բանկի տնօրենությանը և խորհրդին:

Բացի վերոնշյալ կետերի ապահովումից՝ բանկերին առաջարկվում է իրականացնել իրավիճակային կարճ սթրես թեստեր՝ գնահատելու բանկի վրա արտարժույթի կտրուկ տատանումների հնարավոր բացասական ազդեցությունը⁹¹,

⁹⁰ Համակարգը մշակվել է հեղինակի կողմից:

⁹¹ Տե՛ս Basel Committee on Banking Supervision. Supervisory Framework for the Use of Backtesting in Conjunction with the Internal Models Approach to Market Risk Capital Requirements. 2009, էջ 1-3:

մասնավորապես այն, թե ինչպես կփոխվի տվյալ ռիսկին ենթակա վարկառուների եկամուտների և վարկային մարումների համար կատարված ծախսումների հարաբերակցությունը: Անհրաժեշտ է սթրես թեստավորման մոդելում հաշվի առնել արտարժույթի տատանման անուղղակի ազդեցությունը և այն, թե դրա արդյունքում գրանցված փոփոխություններն ինչպիսի հնարավոր բացասական ազդեցություն կունենան վարկառուի վճարունակության վրա: Արտարժույթի տատանումն իր դրսևորումը կունենա տնտեսական ակտիվության և մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Միջազգային փորձի ուսումնասիրումը թույլ է տվել կառուցել իրավիճակային սթրես թեստավորման ամբողջական մոդել, որը նպատակահարմար է ներդնել առևտրային բանկերում՝ կապիտալի և իրացվելիության գործընթացների արդյունավետ իրականացման համար: Սթրես իրավիճակների թեստավորումը անհրաժեշտ է կազմակերպել՝ հիմնվելով հինգ հիմնական տնտեսական կատեգորիաներում իրավիճակային փոփոխությունների վրա, որոնք են՝

1. իրական ՀՆԱ,
2. գործազրկության մակարդակ,
3. բանկային տոկոսադրույք,
4. անշարժ գույքի գների ինդեքս,
5. փոխարժեքի տատանումներ:

Աղյուսակ 19

Հնարավոր սթրեսային իրավիճակների միջին և խիստ սցենարների նկարագիր⁹²


Փոփոխական	միջին սթրեսային իրավիճակ	խիստ սթրեսային իրավիճակ
իրական ՀՆԱ	-7.5 %	-12.5 %
գործազրկության մակարդակ	- 22 % (+5 % ներկայիս մակարդակին)	- 27 % (+10 % ներկայիս մակարդակին)
բանկային տոկոսադրույք	+ 2.0 %	+ 3.0 %
անշարժ գույքի գների ինդեքս	- 10.0 %	- 15.0 %
փոխարժեքի տատանումներ	- 15.0 %	- 25.0 %

⁹² Փոփոխականների փոփոխման աստիճանները հիմնված են ՀՀ տնտեսության մեջ փաստացի գրանցված վիճակագրական տվյալների վրա: Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տարեգրքեր:

3.3 ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Իրացվելիության ռիսկը բավարար իրացվելի միջոցներ չունենալու պատճառով բանկի՝ իր պարտավորությունները ժամանակին չկատարելու հավանականությունն է⁹³։ Այս ռիսկը կապված է որոշակի ժամկետներում շուկայից նոր ֆինանսական ռեսուրսների ներգրավման դժվարությունների և առանց էական գնային կորուստների բանկի կողմից տնօրինվող ակտիվները շուկայում իրացնելու անհնարինության հետ։

Բանկերը իրացվելիությունը գնահատելու համար առաջնորդվում են ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվներով (կանոնակարգ 2)։



Գծապատկեր 35. ՀՀ բանկային համակարգի իրացվելիության նորմատիվները 2003-2015 թթ.⁹⁴

Ֆինանսական համակարգերում իրացվելիության կառավարման մեխանիզմները, կախված իրացվելիության ապահովման սկզնաղբյուրներից, տարանջատում են երկու տեսակի իրացվելիության ռիսկ՝ *ֆինանսավորման ու շուկայական*։ Ֆինանսավորման իրացվելիության ռիսկն առաջանում է այն ժամանակ, երբ բանկն իր ֆինանսական գործառնությունները կատարելիս ունենում է իր ունեցած

⁹³ Տե՛ս ԿԲ խորհրդի՝ 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշում, Երևան, Մխիթարյան Խ., ՀՀ բանկային համակարգի իրացվելիության արդի գերակայությունները, Երևան, 2013, էջ 301-306։

⁹⁴ Գծապատկեր 35-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր, ֆինանսական կայունության և ֆինանսական համակարգի զարգացումների վերաբերյալ հաշվետվությունների տվյալներ)։

պարտավորությունների կատարման, ինչպես նաև սեփական ակտիվների ֆինանսավորման խնդիր⁹⁵:

Այդ իսկ պատճառով արդյունավետ գործող բանկերն իրենց կողմից կառավարվող ֆինանսական ակտիվների շուկայական իրացվելիության հիմնախնդրի լուծումը ֆինանսական հսկողության մեխանիզմների միջոցով մշտապես պահում են իրենց ուշադրության կենտրոնում:

Շատ կարևոր է իրացվելիության՝ արտարժութային և վարկային ռիսկերի հետ համատեղ դիտարկումը: Կախված վարկային ռիսկի կառավարման որակից՝ բանկերում կարող են սկիզբ առնել իրացվելիության կառավարման խնդիրներ: Կորպորատիվ պորտֆելում չաշխատող վարկերի տեսակարար կշռի մեծացման, դրամական ռեսուրսների ծավալների և ժամկետայնության փոփոխության պատճառով բանկում առաջանում է բանկի ակտիվների ու պասսիվների ֆինանսավորման բացասական ճեղքվածք: Մյուս կողմից, արտարժութային տատանումների հետևանքով առաջանում են արտարժութային ակտիվների և պասսիվների՝ դրամական միավորով արտահայտված գումարների փոփոխություններ, որը բերում է դրամական հոսքերի ծավալների փոփոխության՝ իր հերթին նպաստելով հոսքերի ժամկետայնության անհամապատասխանության ստեղծմանը:

ՀՀ բանկային համակարգի համար շատ մեծ և կարևոր նշանակություն ունի հենց ֆինանսավորման ապահովմամբ պայմանավորված իրացվելիության ռիսկի կառավարման հիմնախնդիրը՝ հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ բանկերի մեծ մասը գլխավորապես իրականացնում է ավանդների ներգրավում և դրանց հետագա տեղաբաշխում վարկերի տեսքով⁹⁶: Այս պատճառով էլ ՀՀ բանկերի հիմնական խնդիրներից են ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետային ճեղքվածքների վերահսկումը և կառավարումը:


Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում անհրաժեշտ է հետազոտել վերջին ժամանակաշրջանում համակարգի կողմից ներգրավված ավանդների որակական հատկանիշներն ու որոշակի ժամանակահատվածում

⁹⁵ St' u Interaction. European Central Bank. Working Paper No 1008, 2009, էջ 7:

⁹⁶ St' u Basle Committee on Banking Supervision. Basel III: International framework for liquidity risk measurement, standards and monitoring”, 2010:

արձանագրված փոփոխությունները՝ ուշադրությունը նախ և առաջ կենտրոնացնելով բանկային համակարգում առկա խոշոր պարտավորությունների կենտրոնացման աստիճանի և մասնաբաժնի վրա⁹⁷:

Հանրապետության բանկային համակարգում ընդհանուր պարտավորությունների կենտրոնացվածության գնահատականը, ինչպես նաև նրանց՝ բարձր իրացվելի ակտիվներով ապահովվածության մակարդակը՝ ըստ տարիների, ներկայացված են գծապատկեր 36-ում:



Գծապատկեր 36. Խոշոր պարտավորությունների մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում 2004-2014 թթ.⁹⁸

ՀՀ բանկերում խոշոր պարտավորությունները հիմնականում պայմանավորվում են մեծ պարտատերերի նկատմամբ ունեցած խոշոր պարտավորությունների մասնաբաժնով: Իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ մեծացել է զգայունությունը համակարգից այդ տեսակ պարտավորությունների հնարավոր դուրսբերման նկատմամբ: Մասնավորապես, իրականացված սթրես թեստավորումը բանկային համակարգի կողմից կիրառված միջին և ուժեղ սթրեսային իրավիճակներում արձանագրել է տնտեսական նորմատիվի խախտում: Ընդ որում, միջին սցենարի պայմաններում դիտարկվել է խոշոր պարտավորությունների 50 տոկոս արտահոսք, իսկ ուժեղի դեպքում՝ 75 տոկոս⁹⁹:

⁹⁷ Տե՛ս «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» (հաստատվել է 2008 թվականի փետրվարի 26-ի՝ ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 50-Ն որոշմամբ), կանոնակարգ 3:

⁹⁸ Գծապատկեր 36-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր, ֆինանսական կայունության և ֆինանսական համակարգի զարգացումների վերաբերյալ հաշվետվությունների տվյալներ, տե՛ս www.cba.am):

⁹⁹ Տե՛ս Գևորգյան Հ., Ֆինանսավորման իրացվելիության ռիսկի կառավարման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում, «Այլընտրանք» գիտական հանդես, հունվար-մարտ 2016:

Ֆինանսավորման իրացվելիության դրսևորումների ուսումնասիրությունները բանկային համակարգում և գրանցված արդյունքները (Գծապատկեր 36) հնարավորություն են տալիս բացահայտելու, որ հանրապետության բանկային համակարգում ձևավորված ներկայիս ընդհանուր իրացվելիության գործակիցը մոտ է համանման բանկային համակարգեր ունեցող շատ այլ երկրներում արձանագրված ցուցանիշներին, որոնք տատանվում են 25 տոկոսի շրջակայքում: Այն ներկայումս հավասար է ՀՀ բանկային համակարգում արձանագրված ընդհանուր իրացվելիության ցուցանիշին:

Այսպիսով, ՀՀ առևտրային բանկերում ներկա պահին արձանագրվում է բանկի քիչ թվով ավանդատուների նկատմամբ մեծածավալ պարտավորությունների առկայություն: Դա բնութագրվում է խոշոր պարտավորությունների՝ ընդհանուր պարտավորություններում ունեցած շուրջ մեկ քառորդ տեսակարար կշռով: Սթրեսային իրավիճակների վերլուծությունը պարզում է, որ տարեցտարի արձանագրվում է համակարգի զգայունության մեծացում՝ պայմանավորված խոշոր պարտավորությունների արտահոսքով:

Ավելացնենք նաև, որ ՀՀ բանկերում նկատվում է իրացվելի ակտիվների և ներգրավված պարտավորությունների միջև արժույթային ճեղքվածք, որը շարունակաբար մեծանում է, ինչն իր հերթին ավելի է նպաստում Հանրապետության բանկային համակարգի՝ իրացվելիության ֆինանսավորման ռիսկին ենթարկվածության աստիճանը:

Ֆինանսական համակարգերի՝ իրացվելիության ռիսկի կառավարման համակարգերում այդ ռիսկի գնահատումն առանցքային դերակատարում ունի: Տնտեսագիտական գրականության մեջ բնութագրված են տվյալ ռիսկի կառավարման հետևյալ մեթոդները¹⁰⁰.

- 1) հաշվեկշռային ցուցանիշների գնահատման մեթոդ,
- 2) ճեղքվածքների գնահատման մեթոդ,
- 3) սթրես թեստավորումների գնահատման մեթոդ,
- 4) վիճակագրական ցուցանիշների գնահատման մեթոդ:

¹⁰⁰ St 'u Matz, L. Neu, P. Liquidity Risk Measurement and Management: A Practitioner's Guide to Global Best Practices. John Wiley & Sons. Singapore. 2006, էջ 13-65:

Առաջին և երկրորդ մոդելների կիրառման պայմաններում իրացվելիությունը դիտվում է համապատասխանաբար որպես պաշարային և հոսքային հասկացություն:

Երրորդ և չորրորդ մոդելների կիրառման դեպքում այն դիտարկվում է պաշարահոսքային կատեգորիա:

Քննարկվող մոդելների համեմատական ուսումնասիրության արդյունքում եզրակացնում ենք, որ հաշվեկշռային և ճեղքվածքների մեթոդների կիրառման դեպքում դիտարկվում ենք միայն իրացվելիության ֆինանսավորման ռիսկը, և, փաստորեն, անտեսվում է իրացվելիության շուկայական ռիսկի գնահատականը: Երբ գնահատումը իրականացվում է վիճակագրական ցուցանիշների միջոցով, իրացվելիության ֆինանսավորման և իրացվելիության շուկայական ռիսկերը դիտարկվում են միմյանցից անջատ:

Վերջին՝ սթրես թեստավորմամբ իրացվելիության գնահատման մոդելներում բացի երկու ռիսկերի՝ իրարից անկախ գնահատումից, ինչպես վիճակագրական մոդելներում, կատարվում է նրանց միջև փոխադարձ ազդեցության քանակական գնահատում: Այդ պատճառով իրացվելիության ռիսկի սթրես թեստավորման մոդելները առավելապես համապատասխանում են ռիսկերի գնահատման արդի պահանջներին:

Բանկային գործունեության կարգավորման դաշտում իրացվելիության կառավարմանը նվիրված առաջին փաստաթուղթը ստեղծվել է 1992 թ. Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի կողմից: Այն հրատարակված է «Իրացվելիության գնահատման և կառավարման հայեցակարգ»-ում¹⁰¹:

2010 թվականին Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեն մշակեց և հրապարակեց նոր ստանդարտներ՝ ուղղված առևտրային բանկերում իրականացվող իրացվելիության ռիսկի կարգավորմանն ու հսկողության արդյունավետության բարձրացմանը: Սրանք ամրագրվել են Բազելյան երրորդ համաձայնագրում:

Ազգային վերահսկող և կարգավորող մարմինների ուշադրության կենտրոնում տևական ժամանակ եղել են վարկային և շուկայական ռիսկերն ու դրանց կառավարումը, ինչի հետևանքով իրացվելիության կարգավորման գործընթացը

¹⁰¹ Տե՛ս Basel Committee on Banking Supervision. Framework for Measuring and Managing Liquidity, 1992, էջ 15:

երկար ժամանակ մղվել է երկրորդ պլան և հիմնականում իրականացվել ազգային «չափանիշների» հիման վրա:

Այս հանգամանքների պայմաններում Բազելյան համաձայնագրով նախատեսված ստանդարտները խթանում են իրացվելիության կարգավորումը, իրավական դաշտերի արդիականացումը և ներդաշնակեցումը միջազգային ստանդարտներին:

Բանկային համակարգում կայուն գործունեության և, մասնավորաբար, ֆինանսական հսկողության բարձր արդյունավետության ապահովումը զգալի կախում ունեն ՀՀ ԿԲ-ից: Բանկերի ներքին հսկողական համակարգերը պետք է կարողանան արդյունավետ կերպով բացահայտել բանկային հնարավոր ռիսկերը և նպաստել դրանց հնարավոր ազդեցության նվազեցմանը:

Ֆինանսական հսկողության տեսանկյունից հատկապես կարևոր են առևտրային բանկերի համար վերահսկող մարմնի մշակած հսկողության իրականացման նվազագույն պայմանները՝ ամփոփված կանոնակարգի տեսքով, որը պարբերաբար ենթարկվում է վերամշակումների և լրացումների՝ համապատասխանեցվելով շուկայում տեղի ունեցող փոփոխություններին և միջազգային ստանդարտներին: Այն ուղղված է ապահովելու արդյունավետ ներքին հսկողություն, ինչպես նաև ֆինանսական հսկողության համակարգի արդյունավետ կիրառում ՀՀ առևտրային բանկերում:

2013 թ. ապրիլին ՀՀ ԿԲ խորհուրդը նոր մշակմամբ հաստատել է «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» (կանոնակարգ 4)¹⁰², որի նպատակն է նպաստել բանկերում ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ապահովել դրանց համապատասխանությունը Բազելյան կոմիտեի կողմից սահմանված սկզբունքներին:

Սահմանված են այն նվազագույն պայմանները, որոնք պարտադիր պետք է բավարարվեն բանկի ներքին հսկողության համակարգի կողմից:

Հայաստանի Հանրապետության ԿԲ-ի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներն ունեն մի շարք թերություններ.

¹⁰² Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները», Երևան, 2014:

- Դրանք բանկի իրացվելիությունը դիտարկում են որպես պաշարային կատեգորիա, մինչ այն պաշարահոսքային հասկացություն է¹⁰³: Ավելին, տարածաշրջանի շատ երկրների ֆինանսական համակարգերի ուսումնասիրությունը բացահայտում է, որ այդ երկրներում այն համարվում է պաշարահոսքային կատեգորիա: Սա պայմանավորված է մի քանի հանգամանքով.

- Նորմատիվների ներկայիս հաշվարկում դեռևս կատարվում է ֆինանսավորման իրացվելիության մակարդակի գնահատում՝ բացառելով շուկայական իրացվելիության որևէ գնահատական, և անտեսվում է վերջիններիս փոխադեցությունը միմյանց վրա: Բարձր իրացվելիություն ունեցող արժեթղթերը նորմատիվների հաշվարկման ընթացքում ընդգրկվում են իրենց հաշվեկշռային արժեքներով այն դեպքում, երբ նրանց իրական իրացման արժեքները ենթակա են ճշգրտման՝ կախված շուկայի իրացվելիության ապահովման մակարդակից¹⁰⁴:

- Անտեսվում է այն ռիսկը, որը ծագում է պայմանական պարտավորությունների (օր.՝ վարկային գծերի և քարտերի չօգտագործված մասերի, երաշխավորությունների և այլն) հնարավոր օգտագործումից, որը առաջացնում է դրամական ռեսուրսների արտահոսք և հանգեցնում իրացվելիության նվազման:

Այսպիսով, իրացվելիության կառավարման և հսկողության մեխանիզմներն ի դեմս օրենսդրորեն ամրագրված տնտեսական նորմատիվների ի վիճակի չեն ապահովելու իրացվելիության ռիսկի հիմնական դրսևորումների զսպման ամբողջական մեխանիզմներ և իրենց բնույթով տարբերվում են տարածաշրջանի համանման երկրներում այս բնագավառում ներկայումս ընդունված և կիրառվող մոտեցումներից:

Այսպիսով, հանրապետության բանկային համակարգի կարգավորման և հսկողական համակարգն ունի մի շարք խոցելի կողմեր: Դրանք են՝

¹⁰³ St' u Drehmann, M. Nikolaou K. Funding liquidity risk: definition and measurement. Bank for International Settlements Working paper No 316, 2010, էջ 3:

¹⁰⁴ St' u Բոստանջյան Վ., Գևորգյան Հ., Շուկայական իրացվելիության ռիսկի կառավարման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում, «Այլընտրանք» գիտական հանդես, հունվար-մարտ, 2016, էջ 6:

1) ՀՀ առևտրային բանկերում շարունակում է պահպանվել խոշոր պարտավորությունների կենտրոնացվածության բարձր մակարդակ: Այն ուղեկցվում է իրացվելիության ցուցանիշների նվազման միտումով:

2) Ներդրված մեխանիզմը (տնտեսական նորմատիվներ) չի ընդգրկում շուկայական իրացվելիության մակարդակով պայմանավորված իրացվելիության ռիսկը և չի երաշխավորում ռիսկերի գնահատման ամբողջական մեխանիզմ: Այսպիսով, արժեթղթերի մեծ տեսակարար կշիռը ունեցող բանկերը դառնում են առավել խոցելի շուկայական իրացվելիության մակարդակով պայմանավորված իրացվելիության ռիսկի հանդեպ:

Այժմ հետազոտենք առկա հիմնախնդիրները և առաջարկենք դրանց լուծմանն ուղղված գործնական քայլեր:

Տարածաշրջանի և Եվրոպայի երկրներում խոշոր պարտատիրոջ՝ ռիսկի կառավարման փորձի ուսումնասիրությունները բացահայտել են պարտավորությունների կենտրոնացվածության կարգավորման երկու ընդունված մոտեցում, որոնցից առաջինի դեպքում իրականացվում է բանկի պարտատիրոջ պարտավորությունների կենտրոնացվածությունից և տեսակից կախված իրացվելիության ապահովման տարբեր պահանջների սահմանում: Այս տեսակետից ՀՀ-ում դիտարկվող բանկային ռիսկի հսկման էֆեկտիվության բարձր մակարդակի ապահովման, ինչպես նաև միջազգայնորեն երաշխավորված մոտեցումներին չհակասելու համար առաջնային անհրաժեշտություն է առաջանում վերանայելու ՀՀ ԿԲ սահմանած չափանիշը *խոշոր պարտավորության* վերաբերյալ և ինչպես բանկի, այնպես էլ բանկային համակարգի նկատմամբ *խոշոր պարտավորիչը որակումը*:

Համակարգի տեսանկյունից հաճախորդը կհամարվի խոշոր պարտատեր, եթե առանձին բանկերում նրանից ներգրավված միջոցները չեն գերազանցի խոշոր պարտատիրոջ համար ամրագրված սահմանաչափը, սակայն բոլոր բանկերում ունեցած միջոցների հանրագումարը պետք է գերազանցի այն:

Երկրորդ մոտեցման ժամանակ վերահսկող մարմինը, պարտավորությունների կենտրոնացվածության ցուցանիշից կախված, սահմանում է իրացվելիության ապահովման խստացված պահանջներ: Իրացվելիությունը պաշարահոսքային

կատեգորիա դիտարկելու դեպքում, կենտրոնացվածության աստիճանից ելնելով, սահմանվում են խոշոր պարտավորությունների հնարավոր արտահոսքերի ավելի մեծ (հավանական) գործակիցներ:

ՀՀ ԿԲ-ի հսկողական համակարգում մեխանիզմի կիրառման առումով հաշվի առնելով բանկային համակարգում բանկերի պարտավորությունների կենտրոնացվածության բարձր մակարդակը՝ նպատակահարմար է իրացվելիության՝ կենտրոնացվածությունից կախված տարբերակված պահանջների սահմանումը: Դրա հիմնավորում պետք է համարել այն, որ բանկերին բնորոշ է լներիջի բարձր մակարդակ, ինչպես նաև բանկերի միջև կենտրոնացվածության աստիճանների խիստ տարբերակում, և այդ իսկ պատճառով ՀՀ առևտրային բանկերում նպատակահարմար չէ կապիտալի և ներգրավված ֆինանսավորման հնարավոր աղբյուրների միջև ուղղակի սահմանափակումների կիրառումը: Դա, մյուս կողմից, կսահմանափակի հանրապետության առևտրային բանկերի՝ մայր բանկերից ֆինանսական աջակցություն ստանալու հնարավորությունները՝ վտանգելով դրանց իրացվելիության կառավարումը: Բացի դրանից՝ այն կխոչընդոտի դեպի ՀՀ տնտեսություն կապիտալի ուղղակի ներհոսքը:

Կատարված հետազոտության արդյունքներից ելնելով՝ կարելի է եզրահանգել, որ անհրաժեշտություն է առաջացել բանկային համակագի կարգավորման դաշտում փոփոխելու իրացվելիության կառավարման մոտեցումները: Անհրաժեշտ է ներկայիս իրացվելիության նորմատիվները փոխել Բազելյան 3-րդ համաձայնագրով սահմանված իրացվելիության կառավարման ստանդարտով: Այս պայմաններում մի կողմից առևտրային բանկերը հնարավորինս զերծ կմնան ծավալուն ֆինանսական ռեսուրսների ներգրավումից, և, մյուս կողմից, ծավալուն ֆինանսական ռեսուրսների ներգրավման պայմաններում բանկերից կպահանջվի ապահովել համեմատաբար ավելի մեծ չափի բարձր իրացվելիությամբ ակտիվներ: Սա կսահմանափակի բանկերի խոցելիությունը մեծածախ ֆինանսական ռեսուրսների հնարավոր արտահոսքերի ժամանակ: Այս մեխանիզմի ներդրումից հետո անհրաժեշտություն կառաջանա ԻԾԳ-ի հաշվարկման բանաձևում սահմանելու ներգրավված խոշոր պարտավորություններով պայմանավորված հնարավոր արտահոսքի հաշվարկման ավելի խիստ պայմաններ:

Բազել III համաձայնագրով սահմանված ԻԾԳ (LCR)-ի հաշվարկում այն ակտիվները, որոնք ունեն բարձր իրացվելիություն, կշռվում են տարբերակված զեղչադրույքներով: Այն անհրաժեշտ է հաշվարկվել որպես բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների հարաբերությունը 30-օրյա ժամկետում դրամական միջոցների զուտ արտահոսքին:

$$LCR = \frac{\text{High quality liquid assets}}{\text{Total net liquidity outflows over 30 days}} \geq 100\%$$

Բազելյան համաձայնագրի իրացվելիության երկրորդ ստանդարտը՝ զուտ կայուն ֆինանսավորման գործակիցը (NSFR), նպատակ է հետապնդում բանկի երկարաժամկետ հորիզոնում իրացվելիության կառավարման հարցում ավելի լավ գնահատական ապահովելու՝ շեշտադրումը կատարելով բանկի ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնության վրա՝ տալով իրացվելիության վրա հնարավոր ազդեցության գնահատական:

$$NSFR = \frac{\text{Available amount of stable funding}}{\text{Required amount of stable funding}} > 100\%$$

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրացվելիությունը ներկայումս դիտարկվում է որպես պաշարահոսքային կատեգորիա: Նույնը դիտվում է Բազելյան համաձայնագրով իրացվելիության կառավարման ստանդարտում: Դրանով պայմանավորված՝ համակարգում վերոշարադրյալ հիմնախնդրի լուծումը կլինի Բազել III համաձայնագրով սահմանված իրացվելիության կարգավորման ստանդարտի ներդրումը կարգավորման համակարգում որպես տնտեսական նորմատիվ:

Նորմատիվի ներդրման նպատակահարմարությունը պայմանավորված է նրանով, որ՝

- գործակցի հաշվարկում իրացվելիությունը դիտվում է որպես պաշարահոսքային հասկացություն, ու ամբողջականության տեսանկյունից այն

ընդգրկում է ինչպես ֆինանսավորման, այնպես էլ շուկայական իրացվելիության ռիսկերը.

- ռիսկերի զսպման տեսանկյունից նոր գործակիցը՝ LCR-ը, ամբողջությամբ փոխարինում է ներկայումս ներդրված ընթացիկ իրացվելիության նորմատիվին.

- իրացվելիության կարգավորման ստանդարտի ներդրումը նպատակահարմար է տարածաշրջանի երկրներում՝ բանկային համակարգերում կիրառվող իրացվելիության կարգավորման և հսկողության մեխանիզմների ու մոտեցումների համահարթեցման համար:

Իրացվելիության կարգավորման համակարգի համարժեքության հիմնախնդրի լուծման համար Հայաստանի Հանրապետության կարգավորման և վերահսկողության ոլորտում կիրառվող նորմատիվները անհրաժեշտ է փոխարինել Բազելյան համաձայնագրով սահմանված իրացվելիության կարգավորման ստանդարտով (ԻԾԳ և ԶԿՖԳ):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության մեջ իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացված արդյունքներն ամփոփված են հետևյալ եզրակացություններում և առաջարկություններում.

1. ՀՀ բանկային համակարգում նկատվում է կապիտալի համարժեքության ապահովման մակարդակի շարունակական նվազման միտում: Սա պայմանավորված է առևտրային բանկերի՝ վարկային ռիսկի կառավարման ցածր արդյունավետությամբ և շուկայական տատանումների նկատմամբ ճկուն ու արդյունավետ մարտավարության բացակայությամբ: Նշված ուղղություններով ծագող ռիսկերից խուսափելու համար անհրաժեշտ է, որ բանկերն ապահովեն կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշից ավելի բարձր մակարդակ, որի մեծությունը սթրեսային պայմաններում կապահովի դրանց ֆինանսական կայունությունը:

Նման իրավիճակներում կապիտալի ապահովման մարտահրավերին դիմակայելու համար անհրաժեշտ է սահմանափակել բանկերում կատարվող որոշ վճարներ, որոնք հանգեցնում են կապիտալի համարժեքության և իրացվելիության նվազման:

Այս հիմնախնդրի լուծման համար աշխատանքում առաջարկվել է օրենսդրորեն սահմանել՝

- կապիտալի համարժեքության պահպանման բուֆեր,
- կապիտալի բուֆերի մակարդակի ապահովման հիմնավորված ժամանակահատված,
- հակացիկլային բուֆերի հատման դեպքում շահութաբաժինների, լրավճարների, պարգևատրումների և անկարևոր այլ ծախսերի չափավոր իրականացում:

Նշված սահմանափակումների պայմաններում բանկերն իրենց գործունեությունը կարող են իրականացնել կապիտալի նորմատիվային մակարդակի և սահմանված բուֆերի միջակայքում: Բնականաբար, դա չի կարող կրել շարունակական բնույթ, քանի որ կապիտալի բուֆերի սահմանման նպատակն է

ապահովել կապիտալի այնպիսի մակարդակ, որը սթրեսային պայմաններում չի դառնա դրա նորմատիվային մակարդակից ցածր՝ երաշխավորելով բանկերի ֆինանսական վիճակի կայունության որոշակի աստիճան:

2. Արտարժութային ռիսկի կառավարման վերլուծության արդյունքները միանշանակ ցույց են տալիս, որ արտարժութային բաց դիրքի պայմաններում ՀՀ բանկային համակարգը տարիներ շարունակ կրել է վնասներ: Այս հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև հանրապետությունում արտարժութային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է բանկերում ներդնել արտարժութային հնարավոր ճգնաժամերի բացահայտման նախնական զգուշացման ցուցիչների համակարգ:

Միջազգային արտարժույթների նկատմամբ ազգային արժույթի կտրուկ արժեզրկման հնարավորությունը բացառելու և այդ երևույթի հետ կապված ռիսկերը զսպելու նպատակով ՀՀ բանկային համակարգի համար մշակվել է միջոցառումների ամբողջական համալիր, որում հաշվի են առնվել հանրապետությունում արտարժութային ճգնաժամի վերջին երկու փաստացի դրսևորումները: Տնտեսության մեջ փոխարժեքային ճգնաժամի անգամ փոքր հավանականության դեպքում նախնական զգուշացման գործուն մեխանիզմների միջոցով առաջարկվող համալիրը կկանխարգելի ազգային փոխարժեքի կտրուկ արժեզրկման հնարավորությունը հանրապետությունում շրջանառվող այլ արտարժույթների նկատմամբ: Այլ խոսքով՝ փոխարժեքների տատանման հետևանքով բանկերի՝ վնասներ կրելու հավանականությունը չեզոքացնելու նպատակով նախնական զգուշացման ցուցիչների շարունակական մոնիտորինգի իրականացումը նրանց թույլ կտա ոչ միայն խուսափել փոխարժեքային տատանումների բացասական հետևանքներից, այլև նման իրավիճակներում ազդել ինչպես բանկային համակարգի, այնպես էլ տնտեսության կայունության վրա:

3. Արտարժութային և վարկային ռիսկերի կառավարման վերլուծության, ինչպես նաև դրանց կապի ու առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ բանկային համակարգի կայունության ցածր մակարդակը գլխավորապես պայմանավորված է արտարժութային տատանումների

բացասական ազդեցության հիմնախնդրի առկայությամբ: Այս մասին են վկայում նաև վերջին երկու փոխարժեքային ճգնաժամերը, երբ հանրապետության առևտրային բանկերը կանգնեցին վարկային պորտֆելի որակի կտրուկ վատթարացման հիմնախնդրի առջև: Ակնհայտ է, որ դա առաջին հերթին բանկային համակարգի վարկային պորտֆելի դուլարիզացման բարձր մակարդակի հետևանք է:

Արտարժութային ռիսկից բխող վարկային ռիսկի կառավարման բարելավման նպատակով անհրաժեշտ է բանկերի ֆինանսական հսկողության համակարգում ներդնել ընդհանրական տեղեկատվական համակարգ արտարժութային ռիսկերին հակված խոշոր և միջին վարկառուների մասին: Այդ համակարգը՝ որպես ֆինանսական հսկողության գործառույթի անբաժանելի մաս, պետք է վարկային ռիսկի կառավարման մարմիններին տրամադրի հնարավորինս ամբողջական տեղեկատվություն ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության վերաբերյալ: Այն պետք է ընդգրկի օպերատիվ տեղեկատվություն ընկերությունների՝ տարբեր արժույթներով իրականացվող ներհոսքերի (եկամուտների) և արտահոսքերի (վարկային մարումների) մասին: Այդպիսի համակարգի գործունակության համար աշխատանքում մշակվել են անհրաժեշտ տեղեկատվության նվազագույն պահանջներ:

4. Վարկային ռիսկի կառավարման տեղեկատվական համակարգի ներդրմանը զուգահեռ բանկերը արտարժույթի կտրուկ տատանումների հնարավոր բացասական ազդեցությունը գնահատելու համար պետք է անցկացնեն մակրո սթրես թեստեր: Դրանք թույլ կտան փոխարժեքի տատանումների դեպքում արժեքավորել տվյալ ռիսկի գոտում հայտնված վարկառուների եկամուտների և վարկային մարումների հարաբերակցության փոփոխությունը:

Իրավիճակային մակրո սթրես թեստավորման համար ատենախոսության մեջ մշակվել է համապատասխան մոդել, որում վարկառուի վճարունակության վրա անուղղակի բացասական ազդեցությունները գնահատելու նպատակով ներառվել են տնտեսական ակտիվության և մակրոտնտեսական ցուցանիշների վրա ներգործող ազդակներ:

Հանրապետության առևտրային բանկերում մոդելի ներդրումը թույլ կտա դրանցում էապես բարձրացնել վարկային ռիսկի կառավարման և կապիտալի ու

իրացվելիության գործընթացների արդյունավետությունը: Ընդ որում, սթրեսս իրավիճակների թեստավորումը անհրաժեշտ է անցկացնել հիմնական տնտեսական փոփոխականների վերլուծության և համակողմանի գնահատման իրականացմամբ: Այդ փոփոխականներն են՝

- իրական ՀՆԱ,
- գործազրկության մակարդակ,
- բանկային տոկոսադրույք,
- անշարժ գույքի գների ինդեքս,
- փոխարժեքի տատանումների սթրեսային փոփոխություններ:

5. Բանկային գործունեության ոլորտում իրացվելիության ռիսկերի արտահայտման հիմնական առանձնահատկություններն էապես մեծացնում և կարևորում են իրացվելիության՝ բանկային այլ ռիսկերի հետ համատեղ կառավարման համակարգի անհրաժեշտությունը: Ավելին, ֆինանսավորման և շուկայական իրացվելիության ռիսկերի միջև գոյություն ունեցող հետադարձ կապը և բանկային այլ ռիսկերի հետ հանդես գալը ուղղակի ազդեցություն են ունենում բանկերի իրացվելիության մակարդակի վրա և մեծացնում դրա հետ կապված ռիսկը: Վերջինիս գնահատման մոտեցումների և առանձնահատկությունների ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ սթրեսս թեստավորման մոդելը ընդհանուր բանկային համակարգի և առանձին առևտրային բանկերի համար անհրաժեշտ է համարել իրացվելիության ամբողջական և արդյունավետ գնահատման մեթոդ, քանի որ այս մոտեցման պարագայում իրացվելիությունը դիտվում է որպես պաշարահոսքային կատեգորիա, իսկ մոդելը հիմնվում է հեռանկարային զարգացումների առավել հավանական կանխատեսումների վրա:

6. Հանրապետության բանկային համակարգում իրացվելիությունը կարգավորող իրավանորմատիվային դաշտը դեռևս շարունակում է հիմնված լինել հանրապետության այսպես կոչված առանձնահատկություններից բխող չափորոշիչների վրա: Այս հանգամանքը, բնականաբար, համակարգում որոշակի խոչընդոտներ է ստեղծում իրացվելիության կարգավորման միջազգային ընդունված ստանդարտների ներդրման և կիրառման առումով: Միևնույն ժամանակ, բանկային

գործունեության բավականաչափ բարձր մշակույթ ունեցող երկրներում դրանք անընդհատ կատարելագործվում են, հատկապես հետճգնաժամային շրջանում, երբ Բազել 3 համաձայնագրով սահմանվեցին իրացվելիության ռիսկի կարգավորման և հսկողության նոր ստանդարտներ և մոտեցումներ: Ավելին, Եվրամիության անդամ երկրների համար Բազել 3-ով սահմանված իրացվելիության կարգավորման ստանդարտի կիրառումը դարձել է պարտադիր պահանջ: Մինչդեռ հանրապետության բանկային համակարգում նկատվում է իրացվելիության մակարդակի նվազման միտում: Այն պայմանավորվում է ֆինանսական միջնորդության խորացմամբ և բանկերում բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների տեսակարար կշռի փոքրացմամբ, որը բացասաբար է ազդում հանրապետության բանկային համակարգի իրացվելիության ցուցանիշների վրա:

Հաշվի առնելով այն փաստը, որ իրացվելիության հարցում հանրապետությունում ներկայումս գրանցված ցուցանիշները համադրելի են ձևավորման նմանատիպ փուլում գտնվող երկրներում դիտարկված բանկային համակարգերի իրացվելիության մակարդակներին՝ դրանց նվազման միտումը բացառելու նպատակով աշխատանքում առաջարկվել է Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի իրացվելիության կարգավորման ոլորտում ներդնել իրացվելիության կառավարման միջազգայնորեն ընդունված ստանդարտացված մոտեցումներ:

7. ՀՀ բանկային համակարգի՝ անհետաձգելի լուծում պահանջող հարցերից է շարունակում մնալ պարտավորությունների կենտրոնացվածության բարձր աստիճանի հիմնախնդիրը: Վերջինիս լուծման նպատակով ատենախոսության մեջ առաջարկվել է Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում սահմանել ընդհանուր պարտավորությունների կենտրոնացվածության մակարդակից կախված իրացվելիության մակարդակի ապահովման տարբերակված պահանջներ: Դրանք անհրաժեշտ է ներդնել.

- իրացվելիության ռիսկը կարգավորող նորմատիվներում որպես խոշոր պարտավորությունների հավանական արտահոսքով պայմանավորված բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների ապահովման լրացուցիչ պահանջ,

- Բազել III համաձայնագրով սահմանված ԻԾԳ-ում՝ որպես խոշոր պարտավորությունների դիմաց արտահոսքի բարձր գործակիցներ:

Առաջարկվող մոտեցման դեպքում բանկերից կպահանջվի խոշոր պարտավորությունների դիմաց ապահովել հավելյալ իրացվելի ակտիվներ՝ դրանց հնարավոր արտահոսքի դրսևորման ժամանակ բանկերի զգայունության աստիճանը նվազեցնելու համար: Նշենք նաև, որ այս դեպքում բանկերն իրենք են աշխատելու հնարավորինս խուսափել պարտավորությունների կենտրոնացվածությունից:

Առաջարկվող մեխանիզմի գործադրման համար անհրաժեշտ է, որ ՀՀ ԿԲ-ն փոփոխություններ իրականացնի կարգավորման և հսկողության ընթացակարգերում և ստեղծի միասնական տեղեկատվական համակարգ: Վերջինիս միջոցով կվերահսկվեն մեկ ավանդատուի նկատմամբ ամբողջ բանկային համակարգի ունեցած պարտավորությունները, և այդ տեղեկատվությունը կտրամադրվի առանձին բանկերի, որոնք պարտավորություն ունեն խոշոր ավանդատու ճանաչված անձանց նկատմամբ:

8. Կենտրոնական բանկի կողմից իրացվելիության հսկողության և կառավարման համար օրենսդրորեն ամրագրված տնտեսական նորմատիվներում, որոնք կիրառվել են ՀՀ բանկային համակարգի ձևավորման փուլում, իրացվելիությունը դիտարկվում է որպես պաշարային կատեգորիա՝ ի տարբերություն միջազգային բանկային պրակտիկայում ընդունված մոտեցումների, համաձայն որոնց՝ իրացվելիությունը դիտարկվում է որպես պաշարահոսքային կատեգորիա: Ավելին, դրանք չեն ընդգրկում շուկայական իրացվելիությամբ պայմանավորված ռիսկը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների (հետհաշվեկշռային հոդվածներ)՝ բանկերի ֆինանսավորման ռիսկերը: Ակնհայտ է, որ նշված հանգամանքները շոշափելի բացասական ազդեցություն ունեն հանրապետությունում բանկային համակարգի իրացվելիության կարգավորումը ապահովող գործիքակազմի էֆեկտիվության վրա:

Որպես հիմնախնդրի լուծման արդյունավետ մոտեցում աշխատանքում առաջարկվում է հանրապետությունում ներկայումս ներդրված նորմատիվները փոխարինել իրացվելիության կարգավորման Բազելյան ստանդարտով (ԻԾԳ և ԶԿՖԳ), որը սահմանվել է Բազելյան նոր համաձայնագրով: Այն հնարավորություն կտա

իրացվելիության կարգավորման և հսկողության բնագավառում ներդնել ռիսկերի արդյունավետ կառավարման համարժեք մեխանիզմներ և դրանով ապահովել հանրապետության բանկային հարաբերությունների կարգավորման համակարգի ներդաշնակեցումը միջազգային պրակտիկային:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ասատրյան Բ.**, Բանկային գործ, «Սարվարդ» հրատ., Երևան, 2004 [106]:
2. **Ասրյան Գ.**, Բանկային կառավարման հիմունքները, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003 [29]:
3. **Բաբայան Վ.**, Բանկային գործի հիմունքները, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003 [15]:
4. **Բագրատյան Ա., Բալաբանյան Ա.**, Բանկային գործ, Երևան, 2003 [42]:
5. **Բադանյան Լ., Աբգարյան Կ., Սալնազարյան Ա. և ուրիշներ**, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ (դասագիրք), «Զանգակ-97», Երևան, 2007 [50]:
6. **Բոստանջյան Վ., Գևորգյան Հ.**, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում ԲԱԶԵԼ 3-ի ներդրման առանձնահատկությունները, «Այլընտրանք» գիտական հանդես, ապրիլ-հունիս, 2015 [20]:
7. **Բոստանջյան Վ., Գևորգյան Հ.**, Շուկայական իրացվելիության ռիսկի կառավարման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում, «Այլընտրանք» գիտական հանդես, հունվար-մարտ, 2016 [104]:
8. «ՀՀ առևտրային բանկերի իրացվելիության վրա ազդող գործոնների վերլուծությունը», ՀՊՏՀ, Երևան, 2013:
9. **Գրիգորյան Ս.**, Առևտրային բանկերում իրացվելիության վերահսկման մեթոդները և կառավարման մոտեցումները ՀՀ-ում, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, հ. 11(88), Երևան, 2007:
10. **Գևորգյան Հ.**, Ֆինանսավորման իրացվելիության ռիսկի կառավարման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում, «Այլընտրանք» գիտական հանդես, հունվար-մարտ, 2016 [99]:
11. **Գևորգյան Հ.**, Ֆինանսական հսկողության հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում, «Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ» գիտական աշխատանքների ժողովածու, գիրք 7-րդ, 2015 [28]:

12. **Գևորգյան Հ.**, Կապիտալի համարժեքության պահպանումը որպես արդյունավետ ֆինանսական հսկողության իրականացման գրավական, «Ֆինանսներ և էկոնոմիկա», ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, հ. 13-14 (185-186), 2016 [56]:

13. **Գևորգյան Հ.**, Ֆինանսական հսկողության գործընթացի զարգացումը ՀՀ առևտրային բանկերում, «Ֆինանսներ և էկոնոմիկա», ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, հ. 1-2 (185-186), 2016 [33]:

14. **Եղոյան Կ.**, Սահակյան Հ., Առևտրային բանկի ակտիվների և պասսիվների կառավարումը, «Էկոնոմիկա» ամսագիր, հ. 1-3, Երևան, 1998 [5]:

15. **Թառումյան Գ.**, Բանկերի ֆինանսական վերլուծության հիմունքներ, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003 [68]:

16. «Ինչպե՞ս միջին մեծության բանկը կարող է բարելավել ակտիվների և պարտավորությունների կառավարման համակարգը» (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2010:

17. **Իվանյան Ա., Եսայան Տ.**, Բանկային վերահսկողություն և աուդիտ, Երևան, 2003 [13]:

18. **Հարությունյան Հ.**, Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը բանկային համակարգում, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003 [10]:

19. ՀՀ կառավարություն, «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրք», Երևան, 2010 [34]:

20. ՀՀ Սահմանադրություն, Երևան, 1996 [47]:

21. «Հայաստանի Հանրապետության օրենքը համահայկական բանկի մասին», Երևան, 2005 [54]:

22. «Հայաստանի Հանրապետության օրենքը բանկերի և բանկային գործունեության մասին», Երևան, 1996:

23. «Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», Երևան, 1996 [24] [46]:

24. «Հայաստանի Հանրապետության օրենքը արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին», Երևան, 2004 [64]:

25. «Հայաստանի Հանրապետության օրենքը ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին», Երևան, 2005 [6] [49]:

26. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Բանկերի նկատմամբ հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկ», Երևան, 2005 [37]:

27. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը», կանոնակարգ 3, Երևան, 2008 [37] [97]:

28. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները», Երևան, 2008 [17] [25] [44] [88] [102]:

29. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթուղթ, Երևան, 2014 [45]:

30. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2014-2016 թթ.», Երևան, 2013 [41]:

31. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Վիճակագրական տեղեկագիր», Երևան, 2003-2014 [40] [60] [68] [72] [81] [84] [86] [98]:

32. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն», Երևան, 2007-2014 [51] [57] [59] [61] [80] [82-83] [85]:

33. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Հայաստանի բանկային համակարգը, զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը», Երևան, 2003-2014 [80] [94] :

34. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Հայաստանի ֆինանսական համակարգի կարգավորումը, վերահսկողությունը, զարգացումը», Երևան 2007-2013 [53] :

35. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվներ (կանոնակարգ 2)», Երևան, 2007 [21] [22] :

36. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Բանկերի գործունեության կարգավորման հիմնական տնտեսական նորմատիվների մասին» թիվ 78 որոշում, Երևան, 1995 [43]:

37. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում», Երևան, 2005 [48]:

38. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Բազել 3 համառոտ տեղեկանք», Երևան, 2012 [19] :

39. **Մխիթարյան Խ.**, ՀՀ բանկային համակարգի իրացվելիության արդի գերակայությունները, Երևան, 2013 [93] :

40. Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ՍՄԿ, անգլերեն՝ ISO) ISO 31000 ստանդարտ, 2009 [14]:

41. **Acharya, V. A. and Schaefer, S.** Liquidity Risk and Correlation Risk: Implications for Risk Management. London Business School. London. 2006 [1].

42. **Asian Development Outlook 2015.** Asian Development Bank. 2014.[39]

43. **Basel Committee on Banking Supervision.** Supervisory Framework for the Use of Backtesting in Conjunction with the Internal Models Approach to Market Risk Capital Requirements. 2009 [91].

44. **Basle Committee on Banking Supervision.** Framework for Internal Control Systems in Banking Organisations. Basle, 1998 [18] [27] [30].

45. **Basle Committee on Banking Supervision.** Basel III: A global regulatory framework for more resilient banks and banking systems. 2010 [74].

46. **Basle Committee on Banking Supervision.** Basel III: International framework for liquidity risk measurement, standards and monitoring”, 2010 [96].

47. **Basle Committee on Banking Supervision.** Countercyclical capital buffer proposal. 2010 [73].

48. **Basle Committee on Banking Supervision.** Consultative Document Core Principles for Effective Banking Supervision. 2011 [26].


49. **Basle Committee on Banking Supervision.** International convergence of capital measurement and capital standards. 2004 [74].
50. **Basle Committee on Banking Supervision.** Joint forum Principles for the supervision of financial conglomerates. 2012 [36].
51. **Basel Committee on Banking Supervision.** Framework for Measuring and Managing Liquidity. 1992 [101].
52. **Basle Committee on Banking Supervision.** Peer review of supervisory authorities: implementation of stress testing principles. 2012 [23].
53. **Basle Committee on Banking Supervision.** Internal audit in banks and the supervisor's relationship with auditors. 2012.
54. **Basle Committee on Banking Supervision.** The internal audit function in banks. 2012 [35].
55. **Committee of Sponsoring Organizations (COSO).** Enterprise Risk Management Integrated Framework Executive Summary. 2004.
56. **Committee of Sponsoring Organizations (COSO).** Integrated Framework Executive Summary. 1992.
57. **Drehmann, M., Nikolaou, K.,** Funding liquidity risk: definition and measurement. Bank for International Settlements. Working paper No 316. 2010 [103].
58. **Interaction. European Central Bank. Working Paper** No 1008, 2009 [95].
59. **International Organization of Supreme Audit Institutions (INTOSAI).** The Lima Declaration of Guidelines on Auditing Precepts. Vienna. 1998 [2].
60. **Koontz, H.** Principles of Management: An Analysis of Managerial Functions: McGraw-Hill, New York 1959 [4].
61. **Matz, L. Neu P.** Liquidity Risk Measurement and Management: A Practitioner's Guide to Global Best Practices, John Wiley & Sons. Singapore. 2006 [100].
62. **Mockler R. J.,** Readings in Management Control. Appleton-Century-Crofts. New York. 1970 [3].
63. **The United States. Department of Justice.** Deferred Prosecution Agreement. Washington. 2012 [31].

64. **World Bank.** Bank Regulation and Supervision around the World: A Crisis Update. 2012 [7] .
65. **<http://www.bis.org>** (միջազգային հաշվարկների բանկի պաշտոնական կայք).
66. **www.cba.am** (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կայք էջ).
67. **www.armstat.am** (Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կայք էջ) [38] [77-79] [92].
68. ՀՀ-ում գործող առևտրային բանկերի ինտերնետային կայք-էջեր [62-63] [65-67] [69-70] [76-79] [87] [107]:

«ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԾԱՌ» ՄՈԴԵԼԸ

Որոշումների ծառը գործիք է, որը օգտագործվում է որոշումների կայացման ընթացքում՝ հաշվի առնելով որոշումների ընդունման հնարավոր տարբերակները և նրանց հետևանքները: Այն այսպես են անվանում նրա համար, որ նկարագրված տարբերակների արտացոլումը ստանում է ծառի տեսք:

Դիտարկենք բանկի նոր վարկատեսակի ներդրման հնարավոր ֆինանսական արդյունքները:



Գծապարկեր 37. «Որոշումների ծառ» մոդելը¹⁰⁵

Տվյալ օրինակում հարկավոր է որոշման կայացման համար համեմատել հնարավոր երկու որոշումների ֆինանսական արդյունքները:

Որոշում 1

Չներդնել նոր վարկատեսակ

Ֆինանսական արդյունք՝ 0 միավոր

Որոշում 2

Ներդնել նոր վարկատեսակ

¹⁰⁵ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից:

Ֆինանսական սպասվող արդյունք $Y^*M \% + Z^* (100-M) \% - X$ միավոր:

Որոշում կայացնողը, դիտարկելով բոլոր հնարավոր տարբերակները (վերոնշյալ օրինակում՝ երկու), կատարում է համապատասխան ընտրություն:

«ԾԱԽՍԵՐ-ԱՐԴՅՈՒՆՔ» ՄՈԴԵԼ

«Ծախսեր-արդյունք» մոդելը գործիք է, որը լայնորեն օգտագործվում է որոշումների կայացման ընթացքում: Այն առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել ֆրանսիացի տնտեսագետ Ժյուլ Դյուայուի կողմից 1930-ականներին: Ինչպես հուշում է մոդելի անվանումը, սրա կիրառման ընթացքում ընդհանրացվում են որոշման կայացման արդյունքում հնարավոր օգուտները և համեմատվում որոշման կայացման պարագայում ծագող ծախսերի հետ:

«Ծախսեր-արդյունք» մոդելում հաջորդականորեն կատարվում են հետևյալ քայլերը.

Քայլ 1. բոլոր հնարավոր ծախսերի և օգուտների ցանկի կազմում.

Քայլ 2. ծախսերին դրամային արժեքի վերագրում.

Քայլ 3. օգուտներին դրամային արժեքի վերագրում.

Քայլ 4. ծախսերի և օգուտների համեմատում:

«Ծախսեր-արդյունք» գործակիցը ներկայացնում է «Ծախսեր-արդյունք» մոդելի արդյունքի քանակական գնահատում:

$$\text{ԾԱԳ} = \frac{\text{օգուտների դիսկոնտավորված արժեք}}{\text{ծախսերի դիսկոնտավորված արժեք}}$$

Պետք է ընդունել բոլոր այն որոշումները, որոնց «ծախսեր-արդյունք» գործակիցը գերազանցում է մեկը:

**ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԸ**

Աղյուսակ 20

ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ-ում գործունեություն ծավալած բանկերի համար
սահմանում է հետևյալ հիմնական տնտեսական նորմատիվները.

1. Բանկի կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափեր (բացառությամբ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի)
Գործող բանկի կանոնադրական կապիտալի նվազագույն չափը հիսուն միլիոն ՀՀ դրամ է: Բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է.
հինգ միլիարդ (5.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ մինչև 2017 թվականի հունվարի 1-ը.
նոր ստեղծվող բանկերի համար՝ երեսուն միլիարդ (30.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ մինչև 2017 թվականի հունվարի 1-ը,
սկսած 2017 թվականի հունվարի 1-ից՝ բանկի և նոր ստեղծվող բանկերի համար՝ երեսուն միլիարդ (30.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Բանկի կապիտալի համարժեքության նորմատիվներ
Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն¹¹ նորմատիվ) 2020 թվականի հունվարի 1-ից սահմանվում է 10 տոկոս:
Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն¹² նորմատիվ) սահմանվում է 12 տոկոս:
3. Բանկի իրացվելիության նորմատիվներ
Բանկի՝ բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն²¹ նորմատիվ) սահմանվում է 15 տոկոս:
Բանկի՝ առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն²¹¹ նորմատիվ) սահմանվում է 4 տոկոս:
Բանկի՝ բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն²² նորմատիվ) սահմանվում է 60 տոկոս:
Բանկի՝ առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն²²¹ նորմատիվ) սահմանվում է 10 տոկոս:
4. Մեկ փոխառուի, խոշոր փոխառուներին բաժին ընկնող ռիսկի առավելագույն

չափը (չափերը)
Մեկ փոխառուին բաժին ընկնող ռիսկի առավելագույն չափը (Ն³¹ նորմատիվ) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 20 տոկոսը:
Խոշոր փոխառուներին բաժին ընկնող ռիսկի առավելագույն չափը (Ն³² նորմատիվ) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 500 տոկոսը:
5. Բանկի հետ կապված մեկ անձի, բոլոր անձանց բաժին ընկնող ռիսկի առավելագույն չափը (չափերը).
Բանկի հետ կապված մեկ անձի բաժին ընկնող ռիսկի առավելագույն չափը (Ն⁴¹ նորմատիվ) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 5 տոկոսը:
Բանկի հետ կապված բոլոր անձանց բաժին ընկնող ռիսկի առավելագույն չափը (Ն⁴² նորմատիվ) չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 20 տոկոսը:
6. Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը
Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց կենտրոնական բանկում դրամով տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 2 տոկոսի չափով:
Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից արտարժույթով, ինչպես նաև առարկայազուրկ մետաղական հաշիվներով (այսուհետ՝ մետաղական հաշիվ) ներգրավված միջոցների դիմաց կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 20 տոկոսի չափով, որն ամբողջությամբ իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:
7. Արտարժույթի տնօրինման նորմատիվը
Արտարժույթային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը սահմանվում է 10 տոկոս:
Ըստ առանձին արտարժույթների՝ արտարժույթի յուրաքանչյուր դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը սահմանվում է 7 տոկոս:

Աղյուսակ 20

ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ-ում գործունեություն ծավալած բանկերի համար սահմանում է հետևյալ հիմնական տնտեսական նորմատիվները (շար.).

**ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

Ստորև ներկայացնում ենք հաշվետվությունների այն ցանկը, որը սահմանված նվազագույն պարբերականությամբ օգտակար է ներկայացնել բանկի կառավարման մարմիններին:

Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվություններ.

- ընդհանուր տեղեկատվություն ֆինանսական վիճակի մասին.
- ֆինանսական գործունեության հիմնական ցուցանիշներ.
- ֆինանսական ցուցանիշներ՝ ըստ առանձին ստորաբաժանումների.
- հաշվետվություն ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի կառավարման մասին.
- եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն.
- հաշվապահական հաշվեկշիռ.
- տարեկան ռազմավարական ծրագիր.
- կապիտալի համալրման և շահութաբաժինների վճարման ծրագիր.
- այլ հաշվետվություններ՝ ըստ պահանջի:

Բանկի բարձրագույն կառավարման մարմնին ներկայացվող հաշվետվություններ հետևյալի մասին.

Օրական

- ակտիվներ և պարտավորություններ.
- մեծածավալ վարկերի տրամադրումներ (մարումներ), ավանդների ներգրավումներ (արտահոսքեր).
- բանկի տիրապետության տակ գտնվող արժեթղթերի շուկայական արժեքները, շարժերը, եկամտաբերությունը, արժեթղթերի շուկայի եկամտաբերությունը.

- դրամական հոսքեր.
- կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման մակարդակը.
- շուկայական և վարկային ռիսկի սահմանաչափերը և օգտագործման մակարդակները.
- շուկայական տոկոսադրույքներից տարբերվող տոկոսադրույքներով կնքված գործարքներ:

Ամսական

- մակրոտնտեսական միջավայրը.
- բանկի ֆինանսական արդյունքների վերլուծություն՝ համեմատած պլանավորված ցուցանիշների հետ.
- եկամտաբերության ցուցանիշների վերլուծություն՝ ըստ առանձին ստորաբաժանումների.
- հաշվապահական հաշվեկշռի հոդվածային վերլուծություն,
- հաճախորդների ավանդները և վարկերի կենտրոնացվածությունը.
- զուտ տոկոսային եկամուտների, զուտ գործառնական եկամուտների վերլուծություն.
- ավանդների և վարկերի տոկոսադրույքների համեմատական վերլուծություն մրցակից բանկերի համեմատությամբ.
- պարտադիր տնտեսական նորմատիվներ.
- վարկային պորտֆել.
- շուկայի սեզմենտավորում.
- տոկոսային եկամուտների և ծախսերի զգայունության վերլուծություն.
- իրականացված սթրես թեստավորումների արդյունքները.
- ըստ անհրաժեշտության՝ այլ հաշվետվություններ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Կան բանկային ռիսկերի դասակարգման տարբեր մեթոդներ և համակարգեր¹⁰⁶:

Ստորև ներկայացնենք բանկային ռիսկերի դասակարգման համակարգը՝ մշակված Բանկային գործունեության վերահսկողության ու կարգավորման բազելյան կոմիտեի կողմից, որն առավել հայտնի է որպես Բազել 2:

Ըստ Բազել 2-ի՝ առանձնացնում ենք բանկային ռիսկի հետևյալ տարատեսակները՝

- ռազմավարական,
- համակարգային,
- երկրի,
- վարկային,
- տոկոսային,
- շուկայական,
- արժույթային,
- իրացվելիության,
- իրավական,
- գործառնական,
- կանոնների պահպանման,
- գործարար համբավի:

Ըստ մեկ այլ մեթոդի՝ ռիսկերը դասակարգվում են ըստ դրանց ծագման պատճառի: Այս մեթոդով առաջարկվող ռիսկի չորս հիմնական կատեգորիաներն են՝

- 1) արտաքին միջավայրի ռիսկեր,
- 2) կառավարման ռիսկեր,
- 3) մատուցման ռիսկեր,
- 4) ֆինանսական ռիսկեր:

¹⁰⁶ Տե՛ս Ասատրյան Բ., Բանկային գործ, «Սարվարդ» հրատ., Երևան, 2004:

Կապիտալի համարժեքության նորմատիվը ՀՀ բանկերում (%)¹⁰⁷

Բանկերի անվանումներ	31.12.2014	30.09.2014	31.12.2013	31.12.2012	31.12.2011	31.12.2010	30.09.2010	31.12.2009	31.12.2008	31.12.2007	31.12.2006
«Մեղլատ բանկ» ՓԲԸ	77	87	94	95	114	98	106	83	100	93	148
«ԲՏԱ բանկ» ՓԲԸ	44	52	58	63	76	84	92	77	21	40	37
«Պրոմբեյ բանկ» ՍՊԸ	29	29	38	45	53	39	46	62	61	95	77
«Առէկսիմբանկ» ՓԲԸ	13	18	17	18	25	36	45	35	40	22	27
«Արմավիսբանկ» ՓԲԸ	21	22	26	22	24	35	40	40	30	92	107
«Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ	18	22	23	20	25	31	39	54	89	83	88
«Արարատ բանկ» ՓԲԸ	18	20	19	20	21	28	43	34	28	41	79
«Զարգացման հայկական բանկ» ՓԲԸ	12	15	14	15	18	28	34	35	41	53	57
«Արցախբանկ» ՓԲԸ	13	15	16	16	19	26	28	32	20	29	25
«Արդշինբանկ» ՓԲԸ	14	16	16	19	23	25	30	29	23	21	24
«Անելիք բանկ» ՓԲԸ	13	13	20	18	20	22	37	36	16	25	21
«ՊրոԿրեդիտ բանկ» ՓԲԸ	14	14	14	14	17	22	31	40	61	0	0
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ	16	20	20	18	17	22	27	27	28	32	49
«Ամերիաբանկ» ՓԲԸ	13	14	15	14	15	22	28	41	65	79	131
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	12	15	14	14	13	21	19	18	21	23	35
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ	13	14	13	13	13	20	22	22	28	22	31
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	13	13	առկա չէ	15	16	19	21	21	21	26	26
«Ինեկոբանկ» ՓԲԸ	14	16	17	14	14	18	23	25	22	21	29
«Հայթիզնեսբանկ» ՓԲԸ	13	12	12	12	14	16	20	26	17	27	32
«Յունիբանկ» ՓԲԸ	14	14	առկա չէ	12	14	14	16	12	17	25	20
«ԷյչԷսԲիՍԻ Հայաստան բանկ» ՓԲԸ	14	16	15	15	15	14	17	15	15	15	19

¹⁰⁷ Աղյուսակ 21-ի կառուցման համար օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրությունները: